



ՀՀ ԿԳՄՍ Նախարարություն
Երևանի հենակետային բժշկական քոլեջ

Նյութագիտություն և կոսմետիկ կահավորում Կոսմետիկ պատրաստուկներ

Ուսումնամեթոդական ձեռնարկ բժշկական քոլեջների
«Բուժական կոսմետոլոգիա» բաժնի ուսանողների համար:

Երևան
Հեղինակային հրատարակություն
2020



ՀՀ ԿԳՄՍ Նախարարություն
Երևանի հենակետային բժշկական քոլեջ

Նյութագիտություն և կոսմետիկ կահավորում Կոսմետիկ պատրաստուկներ

Ուսումնամեթոդական ձեռնարկ բժշկական քոլեջների
«Բուժական կոսմետոլոգիա» բաժնի ուսանողների համար:

Երևան
Հեղինակային հրատարակություն
2020

ՀՏԴ 613.49(07)
ԳՄԴ 51.204.1գ7
Ն 820

Ձեռնարկը կազմվել է տպագրման Երևանի հենակետային
բժշկական քոլեջի

«Կոսմետոլոգիական առարկաների» ամբիոնի դասավանդող
Ք. Վարդանյանի կողմից: Գրախոսվել է՝ «Ավանտա» բժշկական
կենտրոնի բժիշկ-մաշկաբաններ՝ Տ. Մուրադյանի և Գ. Դավթյանի
կողմից:

Երաշխավորվել է տպագրման Երևանի հենակետային
բժշկական քոլեջի տնօրեն Ն.Վ. Ներսիսյանի կողմից:

Նյութագիտություն և կոսմետիկ կահավորում:

Կոսմետիկ պատրաստուկներ/

Ն 820 Կազմ.՝ Ք. Վարդանյան.- Եր.: Հեղ. հրատ.,
2020.- 180 էջ:

Ուսումնական ձեռնարկը թարգմանված է ռուսերենից և
նախատեսված է բուժքույր-կոսմետոլոգների համար:

ՀՏԴ 613.49(07)
ԳՄԴ 51.204.1գ7

ISBN 978-9939-0-3440-9
© Վարդանյան Ք., 2020

Նախաբան

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է բժշկական քոլեջների, ուսանողների և դասախոսների համար, և կազմված է ուսումնական ծրագրին համապատասխան: Այն մատչելի գործնական ուղեցույց է բուժքույր-կոսմետոլոգների համար և հիմք կհանդիսանա առարկայի ակտիվ դասավանդման համար:

Ձեռնարկում լուսաբանված են «Նյութագիտություն և կոսմետիկ կահավորում» և «Կոսմետիկ պատրաստուկներ» բաժինները, որոնք բուժական կոսմետոլոգիայի անբաժան մասերն են և ուսումնասիրվում են որպես առանձին գիտություններ:

Բժշկությունը և բժշկական միջամտությունները հնարավոր չէ պատկերացնել առանց սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման: «Նյութագիտություն և կոսմետիկ կահավորում» բաժնում ներկայացվում են՝ կոսմետիկ սենյակի կահավորման և հազեցվածության կանոնները, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը, ինչպես նաև գործիքների մանրէազերծման և ախտահանման եղանակները. հատուկ նախատեսված ապանեխման, հականեխման կանխարգելիչ միջոցառումները, որոնք իրականացվում են ոչ միայն կոսմետոլոգիական կաբինետներում այլ նաև ցանկացած բուժարոճիլակտիկ հաստատություններում:

Նյութագիտությունը իր մեջ ներառում է կոսմետոլոգիայում օգտագործվող նյութերի կազմությունը, որակը, ազդեցության մեխանիզմը: Կոսմետիկ նյութերը հիմնականում բազմակոմպոնենտային են:

Ուսումնական ձեռնարկում հատուկ տեղ է հատկացված կավաբուժության, ցեխաբուժության (պիլոիդոթերապիա) և աղաբուժության (թալասոթերապիա) միջոցառումներին,

որոնք կիրառվում են ինչպես բժշկության, այնպես էլ կոսմետոլոգիայի մեջ:

«Կոսմետիկ պատրաստուկներ» բաժնում ներկայացվում է կոսմետիկ միջոցների դասակարգումը՝ հիմնվելով մաշկի կառուցվածքի, որակի, սեռի և տարիքի առանձնահատկությունների վրա:

Կոսմետիկ պատրաստուկ ստանալու համար կիրառվում են հատուկ տեխնոլոգիաներ, որի համար անհրաժեշտ է ուսումնասիրել ցանկացած օգտագործվող նյութերի տեսակները՝ քիմիական տարրեր, վիտամիններ, բիոլոգիական ակտիվ նյութեր, մակրո և միկրո էլեմենտներ:

Ուսանողը քայլ առ քայլ կուսումնասիրի մաշկի խնամքի ընթացքը, փուլերը, ճիշտ ընտրելով համապատասխան կոսմետիկ միջոցներ:

Ձեռնարկում ներկայացված է ոչ միայն նյութերի և կոսմետիկ պատրաստուկների օգտագործումը, այլ նաև ճիշտ պահպանման կանոնները և պիտանելիության ժամկետի որոշումը:

Երկու գիտությունները ուսումնասիրելու ընթացքում շղթայաբար ստեղծվում է միջառարկայական կապ:

Հույս ունենք, որ այս ձեռնարկը ուղեցույց կհանդիսանա ուսանողների համար իրենց ուսումնառության ընթացքում, պրակտիկ գործընթացներում, նաև կուղղորդի ապագա մասնագետներին իրենց առօրյա աշխատանքներում:

ԹԵՄԱ I

Նյութագիտություն

Դիմահարդարը իր առօրյա աշխատանքում հաճախակի օգտագործում է մի շարք պատրաստուկներ, նյութեր, քիմիական տարրեր, և պետք է շատ լավ պատկերացնի տվյալ նյութի օգտագործումից առաջ հնարավոր հետևանքները: Դիմահարդարի խնդիրն է կոսմետիկ միջոցները օգտագործել նպատակային: Ցանկալի է որպեսզի օգտագործվող միջոցը տվյալ շարքում լինի ամենաորակյալը: Այն պետք է համապատասխանի հաճախորդի մաշկին՝ ըստ տարիքի, մաշկի կառուցվածքի, ճարպարտադրության, խոնավության և այլն: Կոսմետոլոգիայում օգտագործվող նյութերը լինում են հատուկ որակի, հիմնականում դրանք բազմակոմպոնենտային նյութեր են: Վերջիններս պետք է լինեն բարձրորակ, հեշտությամբ տարածվեն մաշկին և չվնասեն, հեշտությամբ հեռացվեն մաշկից և չչորացնեն այն: Կոսմետիկ նյութերը իրենց բաղադրության մեջ հիմնականում պարունակում են մի շարք նյութեր և տվյալ պատրաստուկը ստանալու համար օգտագործվում են հատուկ տեխնոլոգիաներ: Կոսմետոլոգիայում օգտագործվող հիմնական նյութերը դասակարգվում են հետևյալ ձևով՝

- ճարպեր և ճարպանման միջոցներ
- մակերեսային ակտիվ նյութեր

- Էմուլզատորներ
- լուծիչներ
- հակաօքսիդանտներ
- հականեխիչ և պահածոյացնող նյութեր
- հոտավետ նյութեր
- ներկող նյութեր
- վիտամիններ
- միկրո և մակրո էլեմենտներ
- մի շարք ակտիվ նյութեր ճարպեր և ճարպանման նյութեր

Քիմիական տեսակետից ճարպերը իրենցից ներկայացնում են եռագլիցերիններ, այսինքն գլիցերինի էթերներ, հազեցած և ոչ հազեցած ճարպաթթուներ, ազատ ճարպաթթուներ ֆոսֆոլիպիդներ, ինչպես նաև մի շարք վիտամիններ: Կախված այս նյութերի քանակից որոշվում է տվյալ ճարպի քիմիական, ֆիզիկական և բիոլոգիական ազդեցությունը: Այս խմբին են պատկանում՝

- կենդանական ճարպերը
- բուսական ճարպերը
- հանքային ճարպային հիմքերը
- ֆոսֆոլիպիդային հիմքերը
- մոմերը
- կոլոիդները
- սինթետիկ հիմքերը

ԹԵՄԱ II

Դիմահարդարի սենյակ, նորմերը

Դիմահարդարի սենյակը պետք է ունենա հատուկ կահավորում և համապատասխանի նորմերին: Այն պետք լինի 12-14 մ², պարտադիր պայման է բնական օդափոխության և լավ լուսավորվածության ապահովվածությունը, աշխատանքի համար անհրաժեշտ մի շարք սարքերով հագեցվածությունը: Սենյակում պարտադիր է տաք և սառը ջրի առկայությունը, իսկ սենյակի ջերմաստիճանը պետք է լինի կայուն: Կարևոր է նաև որ սենյակի պատերը լինեն բաց գույնով ներկված, լվացվող, հատակը սալիկապատ, իսկ կահույքը կաշվե: Սենյակում պարտադիր է աշխատանքային կահավորված անկյունի առկայությունը, որտեղ պետք է լինի՝ աշխատանքային բազկաթոռ, արհեստական լուսավորության լամպ, որը կարող է ունենալ խոշորացուցիչ ապակի: Բազկաթոռի կողքին պետք է տեղակայված լինեն 1-2 աշխատանքային սեղան և մի շարք գործիքներ:



Վարագույրները նույնպես պետք է լինեն բաց գույնի, հեշտ լվացվող կտորից: Սենյակում խիստ կարևոր է բակտերիոցիդ լամպի առկայությունը, որը միացվում է

աշխատանքից առաջ 1 ժամ տևողությամբ, ինչի ժամանակ սենյակում պետք է մարդ չլինի: Անհրաժեշտ են նաև աղբամաններ՝ կենցաղային աղբի, օգտագործված ձեռնոցների, թանգիֆների, դիմակների և այլ իրերի համար: Պետք է լինի կոսմետոլոգիական կոմբայն, որը կատարում է մի շարք ֆունկցիաներ:

Դիմահարդարը պարտավոր է ունենալ առանձին անկյուն կամ սենյակ, գործիքների մանրէազերծման համար: Այդ սենյակում պետք է լինի ավտոկլավ կամ տաք օդով սարք: Ժամանակակից դիմահարդարի սենյակում պետք է լինեն դասավորված տարբեր սարքեր - վապորիզատոր, էլեկտրոն, լազերային և ֆոտոէպիլացիայի սարքեր: Յանկալի է նաև միկրոտոկերի սարք-բրոսաժի, իոնոֆորեզի, մարմնի խնամքի համար նախատեսված սարքեր:

Աշխատանքային սեղանի վրա պետք է լինեն մի շարք նյութեր և սպիրտային- լուծույթներ, 2% սալիցիլաթթու / 70% էթիլ սպիրտ, լոսյոններ, մաքրող միջոցներ, օձառներ, 3% ջրածնի պերօքսիդ, շպարահան կաթ, բամբակյա սկավառակներ և անձեռոցիկներ: Դիմակների պատրաստման համար հարկավոր է սառնարան, պառաֆինի դիմակի կամ մազահեռացման համար նախատեսված հատուկ սարքեր: Սենյակը պետք է հագեցված լինի տարաներով, վրձիներոով և մի շարք քուկներով:

Սենյակում պետք է պահպանվի հաճախորդի քարտը, որի մեջ նախապես կատարվում են նշումներ: Բոլոր նյութերը, որով աշխատում է դիմահարդարը պետք է լինեն ժամկետի մեջ և անպայման ստուգված:

Դիմահարդարը պետք է ունենա հատուկ մասնագիտական որակավորում, ցանկալի է բուժքրոջ կրթություն: Ծանոթ լինի մաշկային և այլ խնդիրներին:

Դիմահարդարը՝ աշխատանքային պահանջից ելնելով պետք է համապատասխան տեսք ունենա՝ լինի աշխատանքային հատուկ համազգեստով, հավաքած մազերով, կարճ եղունգներով: Նա չպետք է կրի մեծ զարդեր, մատանիներ, օժանելիքը պետք է լինի չափավոր: Աշխատանքի ընթացքը ցանկալի է, որ ուղեկցվի հաճելի երաժշտությամբ, կարելի է նաև աշխատանքային տարածքում օգտագործել բուրումնավետ թուրմեր: Դիմահարդարները կարող են աշխատել վարսավիրանոցներում, գեղեցկության սրահներում, բուժ. հիմնարկներում, հատուկ մասնագիտացված կենտրոններում կամ ունենան առանձին սենյակ: Դիմահարդարի սենյակը պարտադիր է մաքրել օրական 2 անգամ՝ խոնավ մաքրման եղանակով, իսկ շաբաթը 1 անգամ կատարել ընդհանուր մաքրում հատուկ ախտահանիչ լուծույթներով: Կոսմետոլոգը կարող է կատարել մի շարք գործողություններ ինքնուրույն, կամ նախապես համապատասխան բժշկի հետ խորհրդակցելուց հետո:

Սենյակում պետք է լինի աշխատանքային կոսմետիկ բազկաթոռ, շարժական աթոռ, աշխատանքային լամպ, աշխատանքային սեղան, լավ լուսավորված հայելի, ապակե պահարան՝ որտեղ պահեստավորվում են գործիքները և դեղորայքը: Աշխատանքային սենյակում պարտադիր է ունենալ դարսոնվալի, էպիլյացիայի համար նախատեսված սարքեր, վակուիզատոր: Ցանկալի է, որ սենյակում լինի կոսմետիկ կոմբայն, որը

կազմված է մի շարք սարքերից: Աշխատանքային սեղանի վրա պետք է լինեն մի շարք աշխատանքային նյութեր, դիմակներ: Մուուցող և ճարպ պարունակող դիմակները պետք է պահպանվեն սենյակում գտնվող սառնարանում: Դիմահարդարի աշխատանքային գործիքներ աշխատասենյակի անբաժանելի իրերը պետք է լինեն (ունելիներ, ունային գդալիկներ, հոնքերը ձևավորելու ունելիներ, ստերիլ անձեռոցիկներ, միանվագ օգտագործման ասեղներ, հատուկ անձեռոցիկներ, որով մերսման ժամանակ ծածկում են հաճախորդի զգեստը, միանվագ օգտագործման սավաններ: Լրացուցիչ կարելի է ունենալ բրոսածի սարք, միկրոհղկման սարք, իոնոֆորեզի սարք և այլ սարքեր):

ԹԵՄԱ III

Աշխատանքային գործիքների մանրէազերծում

Գործիքների մանրէազերծումը կատարում են մի քանի ձևերով

1. Տաք օդի միջոցով -կատարվում է հատուկ տաք չոր օդի պահարաններում 180 աստիճան 1 ժամ: Այս մեթոդով մշակում են բոլոր մետաղյա գործիքները:
2. Մանրէազերծման համար հարկավոր է ունենալ ավտոկլավ, մանրէազերծումը կատարվում է 2

մթնոլորտային ճնշման և 132 աստիճանի տակ 20 րոպե: Կիրառվում են բոլոր գործիքների, ներարկիչների, սպիտակեղենի նաև բամբակի, աշխատաքային անձեռոցիկների մշակման համար: Գործիքները և աշխատանքային անձեռոցիկները տեղադրված են լինում հատուկ մետաղյա բիքսերի մեջ:

3. Օգտագործում են 6% ջրածնի պերօքսիդի լուծույթ: Աշխատանքային գործիքները տեղադրում են 3 ժամով լուծույթի մեջ, որից հետո ցայում են ստերիլ ֆիզ լուծույթով:

4. Գործիքների մանրէազերծում եռացնելու միջոցով: Եռացնում են 35-40 րոպե: Ավելի հարմար տարբերակ է երբ աշխատանքային գործիքները տեղավորված են լինում կրաֆտ թղթի մեջ:



Ախտահանման եղանակներ.

1. Քիմիական - քլորակիր, քլորամին, ակտիվ քլոր, հեքսանիոզ, պրեեսեպտ, ժավել

2. Ֆիզիկական - տաք չոր օդով, գոլորշու միջոցով, եռացման, շիկացման միջոցով
3. Մեխանիկական - Ապահովում է հարուցչի հեռացումը, բայց ոչ ոչնչացումը, համակցվու է այլ եղանակների հետ
4. Կենսաբանական - Կենսաբանական ֆիլտրերի միջոցով

ԹԵՄԱ IV

Ախտահանում և մանրէազերծում

Ասեպտիկա և անտիսեպտիկա

Բժշկությունը և բժշկական պրոցեդուրաները անհնար է պատկերացնել առանց ախտահանման և մանրէազերծման: Աշխատանքային գործընթացը, պետք է սկսել աշխատանքային սենյակի նախապատրաստումից, ինչը ենթադրում է ախտահանումը, մանրէազերծումը, ապանեխումը:

Ասեպտիկա (ապանեխում)

Դրանք մի շարք գործողություններ են, որոնց նպատակն է կանխարգելել մանրէների ներթափանցումը արտաքին աշխարհից աշխատանքային դաշտ:

Անտիսեպտիկա (հականեխում)

Մի շարք գործողություններ են, որոնց նպատակն է վերացնել արդեն առկա միկրոֆլորան:

Ասեպտիկան բոլոր գործիքների, անձեռոցիկների նախապատրուստումն է աշխատանքին, իսկ **անտիսեպտիկան** կատարվում է տարբեր ձևերով և կիրառվում է ամբողջ աշխատանքային պրոցեսի ժամանակ:



Մեխանիկական անտիսեպտիկա

Մրա ժամանակ ախտահարված հատվածից հեռացնում են վնասված հյուսվածքները՝ մկրատի օգնությամբ: Վերքը լվանում են ջրածնի պերօքսիդի օգնությամբ:

Ֆիզիկական անտիսեպտիկա

Մրա ժամանակ օգտագործում են անդրամանուշակագույն ճառագայթները, գերձայնային ճառագայթները և հատուկ ներծծվող վիրակապերը:

Քիմիական անտիսեպտիկա

Սա մի շարք քիմիական նյութերի օգտագործումն է, որոնց թվին է պատկանում՝ 2%-անոց սալիցիլաթթվի լուծույթը, 2-10 %-անոց բետադինի լուծույթը, հակաբիոտիկային քուլքները և լուծույթները, 2%-անոց յոդը և էլի մի շարք ախտահանիչ լուծույթներ: Բուժքույր-դիմահարդարը ամենօրյա աշխատանքի ժամանակ օգտագործում է մի շարք գործիքներ, որոնք պետք է նախապես պատրաստված, մանրէազերծված լինեն: Նաև շատ կարևոր է, որ նախատեսված լինեն սարքերը, աշխատանքային սեղանը, բազկաթոռը, այսինքն՝ այն ամենը, ինչ շրջապատում է հաճախորդին: Այս նպատակին են ծառայում մի շարք մանրէազերծող լուծույթներ:

Ժամանակակից ախտահանիչ լուծույթներ

Ջեքսանիոս – երկնագույն, կիտրոնի հոտով լուծույթ է, թափանցիկ է, պարզ, Ph=6,3-7,7: Միջոցի օգտագործման ժամկետը 3 տարի է: Աշխատանքային լուծույթը՝ փակ տարողության մեջ, կարելի է օգտագործել 14 օր: Միջոցը օժտված է մանրէապան հատկություններով՝ անգամ տուբերկուլյոզի ցուպիկների նկատմամ, վիրուսների նկատմամբ, ունի նաև հակասնկային ազդեցություն: Սա ունի լավ լվացվող հատկություններ, չի փչացնում մշակվող առարկաները, չի առաջացնում մետաղի կոր, ոգիա, չի ֆիքսում օրգանական կեղտոտվածությունը, չի պարունակում բլոր, քիչ վնասակար նյութ է, անգամ

լորձաթաղանթի հետ շփվելիս ունի թույլ գրգռիչ ազդեցություն: Կարելի է օգտագործել ցանկացած բուժկանխարգելիչ բնագավառում: Միջոցը օգտագործվում է լաբորատոր սպասքի, բժշկական սարքավորումների, մակերեսների մաքրման համար, ունի ախտահանող հատկություններ, լայնորեն օգտագործվում է որպես մանրէազերծման միջոց՝ վիրաբուժական կոսմետոլոգիական և այլ բժշկական գործիքների, սարքերի մշակման համար: Հեքսիանիոսի աշխատանքային լուծույթները պատրաստելու համար օգտագործվում է խմելու ջուր: Աշխատանքային լուծույթներն են՝ 0,1-0,5 %-անոց լուծույթներ: 0,1%-անոց լուծույթը պատրաստելու համար 1մլ կոնցենտրացված միջոցը խառնել 99մլ ջրի հետ: 0,5 %-անոց լուծույթը պատրաստելու համար 5մլ կոնցենտրատը խառնել 995 մլ ջրի հետ: Սարքավորումների, սարքերի մակերեսները մաքրում են աշխատանքային լաթով՝ օգտագործելով 100մլ լուծույթը՝ 1մ² մշակելու համար: Բժշկական առարկաները և գործիքները օգտագործելուց անմիջապես հետո հարկավոր է ընկղմել լուծույթի մեջ ամբողջությամբ, որպեսզի լուծույթը 1սմ և ավելի ծածկի գործիքը: Աշխատանքային լուծույթի ջերմությունը 18 C-ից ոչ պակաս է, պետք է պահել 15 րոպեից ոչ պակաս, որից հետո կատարում են գործիքների վաճումը:

Գործիքների վաճում և մանրէազերծում հեքսանիոսի միջոցով

1. Գործիքները ընկղմել հեքսանիոսի 0,5 %-անոց լուծույթի մեջ 15 րոպեով:

2. Յուրաքանչյուր գործիք լվանալ խոզանակով կամ կտորի անձեռոցիկով 1-5 րոպե:
3. Յուրաքանչյուր գործիք պարզաջրել հոսող ջրի տակ 3-4 րոպե:
4. Յուրաքանչյուր գործիք ողողել թորած ջրով՝ 1 րոպեի ընթացքում:

Լվացումը վերջացնելուց հետո հարկավոր է ստուգել գործիքների նախամանրեագերծման որակը՝ ազոպիրամի լուծույթի օգնությամբ: Գործիքները պետք է չորացնել, որից հետո դասավորել բիքսերի մեջ և կատարել գործիքների մանրեագերծում: Հեքսանիոսով կարող են աշխատել այն բուժօբյեկտները, ովքեր զգայուն չեն և չունեն ալերգիկ հիվանդություններ: Պետք է այնպես անել, որ միջոցը չընկնի աչքերի և անպաշտպան մաշկի վրա: Աշխատող բուժօբյեկտը պետք է ունենա հատուկ ռետինե ձեռնոցներ: Բոլոր տարողությունները որոնց մեջ կատարվում է լվացումը, պետք է փակվեն կափարիչներով: 0,1 %-անոց աշխատանքային լուծույթով կարող են մաքրել աշխատանքային մակերեսները, սարքերը: Մաքրումը կարելի է կատարել անգամ հիվանդի ներկայությամբ:

Սայդեզիմ - Սա Ջոնսոն-Ջոնսոն ֆիրմայի արտադրած միջոցն է: Անանուխի հոտով, մանուշակագույն, թափանցիկ հեղուկ է, որի Ph=6-8, պահպանման ջերմաստիճանը 40-42C է, պահպանման ժամկետը 2 տարի է, ունի լավ փրփրացող և լավ լվացող հատկություններ: Աշխատանքային լուծույթներն են՝ 0.8 -1.6 %-անոց լուծույթները: Օգտագործվում է բժշկական առարկաների, գործիքների նախամանրեագերծման համար, ամենօրյա և

վերջնական մակերեսների մաքրման ժամանակ (կահույքի, սարքավորումների, սարքերի մակերեսների, խնամքի պարագաների, անգամ կահույքի ծածկող մակերեսների, կարպետների մակերեսների). օգտագործված բժշկական մնացորդների, առարկաների վարակազերծման համար, ընդհանուր սենյակի օդը մաքրելու նպատակով: Անգամ կարող է օգտագործվել սննդի օբյեկտներում: Միջոցը ազդում է մանրէների վրա (այդ թվում տուբերկուլյոզի բակտերիայի վրա), վիրուսների վրա (այդ թվում հեպատիտների, պոլիոմերիտի, հերպեսի, թռչնագրիպի, Էստերովիրուսների վրա), ունի հակասնկային ազդեցություն (այդ թվում կանդիդա սնկի, դերմաֆիտոնի վրա): Չի պարունակում C1, սպիրտ, ֆենոլ, ալդեհիտներ, ունի լավ վազոդ, դեզինֆեկցող, դեզոդորող հատկություն, չի վնասում մակերեսները, չի փչացնում մետաղը, ակտիվ է օրգանական ախտոտվածությունների ժամանակ (արյուն, թարախ), չունի գրգռող հատկություններ, աշխատանքը կարելի է կատարել անգամ հաճախորդի ներկայությամբ, մանրէասպան հատկությունները երկարատև են (մինչև 3 ժամ), չի պահանջում լրացուցիչ ջրով մաքրում: Օգտագործում են 0,8 %-անոց լուծույթը 18C-ի դեպքում՝ նախաստերիլիզացիայի համար 15 րոպե կամ 1,60%-անոց լուծույթը 40C-ի դեպքում՝ նույնպես 15 րոպե, որից հետո օգտագործված գործիքները վանում են խոզանակով՝ 0,5-1 րոպե, ողողում են հոսող ջրով 4-5 րոպե, ողողում են թորած ջրով 5 րոպե և ուղարկում են մանրէազերծման:

Սուլֆանիոլ - սա արտադրվում է սուլֆանիոլ ցիտրոնի ձևով: Օգտագործվում է 0,25%-անոց լուծույթը, ունի լավ վազոդ և հոտակլանող հատկություններ: Լուծույթով

ախտահանումը կատարում են սրբելու, ողողելու, ընկղմելու, թրջելու եղանակով: Միջոցի հետ աշխատել թույլատրվում է 18-ից բարձր անձանց օգտագործելով պաշտպանիչ միջոցներ(ռետինե ձեռնոցներ, դիմակներ): Արգելվում է միջոցի կոնտակտը աչքի լորձաթաղանթի և մաշկի հետ: Ցանկալի է մշակումը կատարել հաճախորդի բացակայության ժամանակ, կարելի է լուծույթը օգտագործել հատակ լվանալու համար, լրացուցիչ մշակում չի պահանջում: Աշխատանքային լուծույթը պատրաստելու համար կարելի է օգտագործել ապայա կամ պլաստպամետ ամաններ: Նախապես պետք է լցնել 2,5 մլ սուլֆանիոլը և ավելացնել ջուրը մինչև 1 լիտր:

Քլորամին - օգտագործում ենք քլորամինի 0,5 %-անոց, 1 %-անոց և 3 %-անոց լուծույթները: 0,5 %-անոց քլորամինի լուծույթով մշակում են բուժաշխատողի ձեռքերը, օգտագործվող ջերմաչափերը: 1 %-անոց լուծույթով մաքրում են աշխատանքային սենյակի սարքերը, սառցե պարկերը, բազկաթոռը, նաև օգտագործվում է ընդունարանի ընթացիկ մաքրման համար: Մշակումից 10-15 րոպե առաջ լրացուցիչ բոլոր մակերեսները լվանում են հոսող ջրով: 3%-անոց լուծույթը օգտագործում են լվացող խոզանակների համար առանձին, նաև 3%-անոցի մեջ հավաքում են օգտագործված ձեռնոցները և հատկապես վիրաբուժական գործիքները: Աշխատանքային լուծույթները պատրաստելու համար սկզբից քլորամինի փոշին խառնում են ջրի հետ, որից հետո ավելացնում են անհրաժեշտ ծավալը:

Պրոգնոզը Երևանի սենյակի մաքրման ձևերը

Աշխատանքային սենյակը, սարքավորումները, պրոգնոզը Երևանի սենյակը մաքրում են օրը 2 անգամ (առավոտյան և ցերեկը)՝ օգտագործելով հատուկ ախտահանող լուծույթներ և դա համարվում է ընթացիկ մաքրում: Մաքրումից հետո կատարվում է սենյակի օդափոխություն, միացնում են բակտերիոցիդ լամպը՝ յուրաքանչյուր մ²-ին 1 րոպե: Շաբաթը մեկ անգամ կատարվում է վերջնական մաքրում. մաքրում են հատակը և պատերը՝ օգտագործելով ավելի խիտ լուծույթներ բլորամինի 3%-անոց լուծույթ կամ 1%-անոց ակտիվացված բլորամին (100գ բլորամին, 9,9 լ ջուր, 40մլ անուշադրի սպիրտ): Մաքրումից հետո միացնում են բակտերիոցիդ լամպը: Բոլոր լաթերը, որոնք ոգտագործվում են սարքերը և սեղանը մաքրելու համար, պետք է պահել ախտահանող լուծույթի մեջ 10-30 րոպե և պարզաջրել հոսող ջրի տակ:

ԹԵՄԱ V

Ճարպեր

Կոսմետիկ միջոցները իրենցից ներկայացնում են մի քանի կոմպոնենտներից բաղկացած բարդ միացումներ, որոնց խնդիրն է կատարել բուժական կամ այլ միջամտություն: Կոսմետիկ միջոցների բաղադրատոմսերի մեջ շատ հաճախ հանդիպում են

ճարպեր: Սովորաբար օտագործվում է հետևյալ ճարպերը և ճարպանման նյութերը:

- Կենդանական ճարպեր
- Բուսական ճարպեր
- Հանքային ճարպային հիմքեր
- Մումեր
- Արհեստական հիմքեր
- Ֆոսֆոլիպիդային հիմքեր
- Կոլոյդներ

Քիմիական տեսակետից ճարպերը և յուղերը իրենցից ներկայացնում են եռազլիցերիդներ, այսինքն՝ գլիցերինի եթերներ, հազեցված և ոչ հազեցված ճարպաթթու, ֆոսֆոլիպիդներ, վիտամիններ (A, D, E, K), ֆենոլի եթերներ:

Կենդանական ճարպեր

Մի շարք նյութեր են, որոնք ստացվում են կենդանիների ճարպից: Ճարպերը կարող են լինել պինդ և հեղուկ: Հեղուկ ճարպերը ստացվում են հիմնականում ձկներից և ծովային կաթնասուններից: Պինդ ճարպերը ավելի բնորոշ են կենդանիներին:

Լանոլին - մաքուր լանոլինը շատ մաճուցիկ է դժվար է տարածվում մաշկի վրա մուգ գույնի է: Կոսմետոլոգիայում հիմնականում օգտագործվում է ջրային լանոլինը, որը ունի դեղնավուն գույն,

համեմատաբար հեշտ է տարածվում մաշկի վրա: Այն հիմնականում օգտագործվում է վազելինի կամ բուսական յուղի հետ, ստացված էմուլսիա խառնվում է ջրի հետ և կարողանում է թափանցել մաշկի մեջ:

Խոզի ճարպ - պինդ ճարպ է, հեշտ է տարածվում մաշկին, լավ ավանցում է մաշկի խորքերը, հեշտ է խառնվում մյուս ճարպերի հետ, հեշտությամբ հեռացվում է մաշկի մակերեսից, նաև կարելի է օգտագործել գլխիմազածածկ հատվածում: Պահպանման ժամկետը 10 օր է, քանի որ ճապը շատ շուտ է փչանում և սկսում է գրգռել մաշկը:

Հավի, սագի ճարպ - պինդ ճարպեր են, ունեն իրենց բնորոշ հոտ, կարճ օգտագործման ժամկետ: Հիմնականում օգտագործվում են մաշկային խնդիրների ժամանակ:

Ձկան յուղ - հիմնականում ձկան յուղը ստանում են ձկների լյարդից, պարունակում է մեծ քանակությամբ վիտամիններ (A, D, E, K), միկրո և մակրոէլեմենտներ: Ձկան յուղը լավ է տարածվում մաշկի մակերեսին: Ռիսի տհաճ հոտ, շուտ է փչանում, չի կարելի օգտագործել շոգ եղանակին:

Ոսկրածուծ - մինչև ժամանակակից պաշտպանիչ քուկներ ստեղծելը ցուրտ շրջաններում պատրաստում էին քուկներ ոսկրածուծից: Պինդ ճարպ է, հեշտ է հալվում, խառնվում է մյուս ճարպերի հետ, հեշտ է

տարածվում մաշկի մակերեսին, հեշտ է հեռացվում, ունի թեթև բնորոշ հոտ:

ԹԵՄԱ VI

Բուսական յուղեր

Բոլոր բուսական յուղերը բաժանվում են 2 խմբի

1. Չորացվող

2. Չչորացվող

Բուսական յուղերը հեղուկ նյութեր են: Պարուկանում են մի շարք բիոլոգիական ակտիվ նյութեր, որոնք չեն սինթեզվում մարդու օրգանիզմում: Բուսական յուղերը ստանում են տարբեր ձևերով, ցանկալի է օգտագործել սառը մզվածքով ստացած յուղերը, դրանք շատ ավելի հարուստ են վիտամիններով, պարունակում են մոմեր, լեյցիտին, ածխաջրատներ: Աշխատանքային ջերմաստիճանը չի գերազանցում 35%: Չորացող յուղերը - կակաոյի, ընկույզի, կտավատի:

Չչորացողները - դեղձի, գերչակի, արևածաղկի, եգիպտացորենի յուղերը:

Մաքրող ձեթեր - օգտագործում են մաշկը փափկեցնելու նպատակով, մաշկը մաքրելու համար:

Նշի յուղ - տարբերում են դառը և քաղցր; Ստանում են նշի հատիկների սառը մզվածքի օգնությամբ, իսկ մնացորդը օգտագործվում է քերուկ քսուկների մեջ: Դառը նուշը պարունակում է թունավոր նյութեր, որոնք չեն ճզմվում յուղի մեջ :չունի հոտ, դեղնավուն է, շատ լավ է ներծծվում, մուգ գույնի տարայում է հարկավոր պահպանել, 12 ամիս:

Ձիթապտղի յուղ - ստանում են լիովին հասած պտուղներից: Պարունակում է օլիենաթթու, առաքիդոնային թթու նաև սկվալեն, կարոտինոիդներ, վիտամիններ, լավ է ներծծվում, կարելի է պահել 2 տարի:

Ավոկադոյի յուղ - Այս յուղը պարունակում է վիտամիններ, լեյցիտին, չհագեցած ճարպաթթուներ, հանքային նյութեր, հեշտ է ներծծվում, կոսմետիկ միջոցների մեջ կարող է կազմել յուղային մասի 5%, բուսական յուղի 10-20%: Համարյա անհոտ է, կարելի է պահպանել երկար ժամանակ: Առավել ցուցված է չոր և գրգռված մաշկին:



Խաղողից ստացված յուղ - Հեղուկ յուղ է, որի մեջ կարելի է լուծել թանձր նյութերը, կաշուն չէ, հիմնականում օգտագործում են նուրբ, վերականգնող մերսման համար: Չունի հոտ, հեշտ ներծծվում է, բաց կանաչ գույնի է կարելի է պահպանել կես տարի:

Եգիպտացորենի յուղ - Հարուստ է չհագեցած ճարպաթթուներով, պարունակում է կոենզիմ Q10 լայնորեն կիրառվում է կոսմետիկ միջոցների և բերանի խնամքի համար: Այն դեղնանարնջագույն է, ունի հաճելի քաղցր հոտ, պահպանվում է 12 ամիս:

Արևածաղկի յուղ - Ստանում են արևածաղկի հատիկներից: Կիրառվում է դիմահարդարման, մերսման ժամանակ: Պարունակում է վիտամիններ, լեյցիտին ալֆա և բետտա լիելոնաթթու: Ունի հաճելի հոտ, դեղնավուն երանգ, հեշտ ներծծվում է:

Կակաոյի յուղ - Ստանում են ծառի պտուղներից, պարունակում է մեծ քանակությամբ ճարպաթթուներ: Հալեցման ջերմաստիճանը 32-35 է լայնորեն կիրառվում է մի շարք քսուկների մեջ, էմուլսիաների մեջ: Ունի բնորոշ շոկոլադը հիշեցնող հոտ, դեղնավուն է, ունի կարճ պահպանման ժամկետ:

Գլիցերին - Թափանցիկ, ծորացող հիդրոսկոպիկ հեղուկ է, չոր քաղցրավուն համով, հեշտ խառնվում է ջրի հետ, չի խառնվում յուղերի հետ: Գլիցերինը նպաստում է

թափահարուկների մեջ միջոցների խառնմանը, պահպանելով արտաքին տեսքը:

ԹԵՄԱ VII

Հանրային ճարպային հիմքեր

Լայնորեն կիրառվում են կոսմետիկ պատրաստուկների մեջ: Տարբերում ենք **հեղուկ** և **պինդ** հիմքեր: Հեղուկ հանքային ճարպանման հիմքեր են՝ հեղուկ պարաֆինը, նավթը, մեքենայի յուղը:

Վազելինի յուղ կամ հեղուկ պարաֆին՝ իրենից ներկայացնում է նավթի մաքրման արդյունքում ստացված նյութ: Անգույն է, առանց հոտի և համի: Ընդհանրապես չի լուծվում ջրի մեջ, լավ է խառնվում բուսական յուղերի հետ բացի գլիցերինից, օգտագործվում է մաքուր ձևով կամ խառնված մաքուր լանոլինի հետ, կամ պինդ պարաֆինի հետ: Նրա մյուս անվանումը հեղուկ պարաֆին է, օգտագործվում է քսուկների պատրաստման ժամանակ:



Նավթալանային նավթ - իրենից ներկայացնում է ածխաջրերի և խեժի խառնուրդ, սև գույնի թանձր օշարակ հիշեցնող հեղուկ է, իրեն բնորոշ հոտով թույլ թթվային ռեակցիայով, չի լուծվում ջրի մեջ, լավ է լուծվում բենզինի, քլորոֆորմի մեջ, նաև գլիցերինի և մի շարք ճարպերի հետ խառնուրդների ձևով: Լայնորեն կիրառվում է մաշկային տարբեր հիանդությունների բուժման մեջ: Ունի փափկեցնող, ներծող, դեզինֆեկցող, քորը հանգստացնող հատկություն: Օգտագործում են բարդ դեղորայքների պատրաստման ժամանակ, ինչպես նաև ցանափոշի, մածուկներ, քսուկներ, մոմեր պատրաստելու ժամանակ: Այս նավթով պատրաստված միջոցներ կարող են մի փոքր գրգռել մաշկը, նաև ռեֆլեկտոր կերպով ազդում են վեգետատիվ նյարդային համակարգի վրա:

Մեքենայի յուղ - կայուն նյութ է, որը չի քայքայվում, չի գրգռում մաշկը, չի ներծծվում: Մաշկի վրա տարածվելով լավացնում է, արագացնում է վերքերի վերականգնումը,

փակելով խոցերը և էրոզիաները: Օգտագործվում է փափկեցնող քսուկների մեջ:

Գլիցերին - եռատոմային սպիրտ է, թույլ դեղնավուն գույնով, հեղուկ է, հիդրոֆիլ, հեշտությամբ խառնվում է ջրի սպիրտերի հետ: Միջոցներ պատրաստելու ժամանակ գլիցերինը նպաստում է նյութերի խառնվելուն: Մաքուր գլիցերինը կարող է գրգռել զգայուն մաշկը:

Պինդ հանքային ճարպանման հիմքեր

Դեղին վազելին կամ քիմիական ճանապարհով ստացված վազելին - Ածխաջրատ է, որը ստանում են նավթի վերամշակման ժամանակ: Քսուկներ պատրաստելու համար շատ հարմար միջոց է, փափուկ է, անհոտ, չի քայքայում նրա մեջ խառնված դեղորայքային միջոցները, հեշտ է տարածվում մաշկի մակերեսին, սակայն դժվար է խառնվում ջրի հետ: Գրեթե չի թափանցում մաշկի մեջ, կանխում է նրա մեջ խառնված դեղորայքի ներծծումը: Օգտագործվում է այն դեղորայքային միջոցների պատրաստման ժամանակ, որոնք կիրառվում են վերնամաշաի շերտազատման, կամ գեղրեղջերացման երևույթների բուժուման նպատակով: Օգտագործվում են նաև այն միջոցների

պատրաստման համար, որոնք պետք է ունենան միայն մաշկի վրա մակերեսային ազդեցություն:

Պինդ պարաֆին կամ ցերեզին - Այն ածխաջրերի խառնուրդ է, որը ստանում են նավթի վերամշակման ժամանակ: Այս նյութը իրենից ներկայացնում է սպիտակ, կիսաթափանցիկ, բյուրեղանման զանգված՝ առանց հոտի և համ: Ձեռքով հպվելուց այն ճարպոտ է, նման պինդ պարաֆինի: Ցերեզինը, չի լուծվում ջրի և սպիրտի մեջ, սակայն լավ է խառնվում թեյի և քլորոֆորմի, ինչպես նաև ճարպոտ քսուկների մեջ: Օգտագործվում է մի շարք քսուկների և պատրաստուկների մեջ, ավելի հաճախ պարաֆինը օգտագործում են, առանց խառնուրդի, հատկապես սպիերի բուժման ժամանակ (հալեցված պարաֆինը տարածվում է մաշկի մակերեսին, սառչելով ստեղծում է բուժիչ թաղանթ): Ունի փափկեցնող, հանգստացնող ազդեցություն: Լայնորեն կիրառվում է ձեռքերի, ոտքերի խնամքի ժամանակ: Դեմքի խնամքի դեպքում պարաֆինային դիմակները օգտագործվում են ընտրովի, հակացուցված է լայնացած անոթների, մազակալման դեպքում:

Օզոկերիտ - ստանում են նավթի վերամշակումից: Մոմանման զանգված է, մուգ դարչնագույն կամ սև գույնի մի քանի նյութերի խառնուրդ է, պարունակում է պարաֆին, հանքային նյութեր, խեժ: Միախառնվում է

բենզինի, նավթի հետ նաև բուսական յուղերի, հանքային յուղերի հետ: Երկար պահում է տաքությունը հալեցված վիճակում, լայնորեն կիրառվում է մի շարք ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաների, հատկապես տաք կոմպրեսների ժամանակ՝ 40-50 ջերմաստիճանի դեպքում կարող է տաքությունը պահել մինչև մեկ ժամ: Օգտագործվում է կուրսային բուժման ժամանակ, կատարում են 15-20 կոմպրես:



Մումեր - մեծ խումբ նյութեր են, որոնց մեջ մտնում են և կենդանական և մոմանման նյութեր, որոնք շատ նման են իրար և հիշեցնում են մեղրամուր: Մոմանման նյութերը տաքացնելու ժամանակ փափկում են և հալվում են 40-90 աստիճան ջերմության ժամանակ, ջրակայուն են, չեն խառնվում ջրի հետ, չեն լուծվում սառը սպիրտի մեջ, խառնվում են բենզինի, քլորոֆորմի եթերի մեջ էլեկտրականության վատ հաղորդիչ են, հեշտ են այրվում: Քիմիական բաղադրատոմսով նման են ճարպերին: Մումերը և մոմանման նյութերը օգտագործվում են պինդ ճարպաքսուկների

պատրաստման ժամանակ: Նմանատիպ քունկները չեն կծվանում և չեն գրգռում մաշկը: Քունկի հալման ջերմաստիճանը 37-ից ավել է:

Դեղին կամ սպիտակ մեղրամոմ - իրենից ներկայացնում է պինդ գանգված, որը ստանում են մեղուների աշխատանքի արդյունքում: Հիմնականում լինում է դեղին կամ դարչնագույն, հատուկ մշակումից հետո դառնում է սպիտակ, օգտագործվում է քունկների պատրաստման ժամանակ: Հանգստացնում է մաշկը, վերացնում է գրգռվածությունը, հաճախակի օգտագործվում է այրվածքների բուժման ժամանակ:

Սպերմացետ - բնական կենդանական մոմ է, որը ստանում են կետի գլխուղեղի խոռոչներից: Ի տարբերություն ճարպերի չի թողնում ճարպոտ հետքեր, օրինակ թղթի վրա: Քունկները պատրաստելիս հեշտությամբ խառնվում է մյուս ճարպերի հետ՝ ստեղծելով եմուլսիա: Լայնորեն օգտագործվում է սառեցնող և փափկացնող քունկների պատրաստման ժամանակ, հարուստ է սնուցող նյութերով և վիտամիններով: Լայնորեն կիրառում ունի կոսմետիկ պատրաստուկների մեջ:

Մինթետիկ հիմքեր - Ի տարբերություն կենդանական և բնական ճարպերի սինթետիկ հիմքերը լավ են տարածվում մաշկի վրա, հեշտությամբ թափանցում են

մաշկի մեջ, հեշտ հեռացվում են մաշկի մակերեսից: Չեն քայքայվում, չեն օքսիդանում, չեն գրգռում անգամ զգայուն մաշկը: Չեն ճարպոտում մաշկը, պահպանում են մաշկի մեջ գտնվող ջրի քանակությունը, օգտագործվում են մի շարք մաշկային հիվանդությունների, հատկապես բորբոքային պրոցեսների ժամանակ: Լայնորեն կիրառվում են գլխամաշկի համար նախատեսված միջոցների մեջ:

Էթիլեն օքսիդից պատրաստված միջոցներ - շատ կայուն, մանրէսպան հատկություններ ունեցող նյութեր են: Հակացուցված են մի շարք նյութերի հետ օգտագործումը. դրանք են՝ սալիցիլաթթուն, արծաթի նիտրատը, ֆենոլը, յոդը, սուլֆանիլամիդները: Պոլիէթիլեն գլիկոլի էթերները օգտագործում են մի շարք քսուկների, շպարահան կաթերի պատրաստման ժամանակ:

Միլիկոնային հիմքեր - ջուր չպարունակող հեղուկ նյութեր են, չունեն հոտ, չեն կծվում, չեն գրգռում մաշկը, չեն առաջացնում այտուցներ, կարող են պահպանվել երկար ժամանակ: Ջերմաստիճանի բարձրացման ժամանակ չեն հեղուկանում և լայնորեն կիրառվում են պինդ քսուկների պատրաստման ժամանակ: Հեշտ խառնվում են մաշկի ճարպի հետ, առաջացնելով ջրակայուն թաղանթ:

ԹԵՄԱ VIII

Ֆերմենտներ

Սրանք բիոլոգիական ակտիվ նյութեր են, ունեն սպիտակուցային ծագում: Մարդու օրգանիզմում կատալիզում կամ արագացնում են քիմիական ռեակցիաները: Կենդանի օրգանիզմի մեջ 100,000 անգամ արագացնում են բիոքիմիական ռեակցիաները: Յուրաքանչյուր ֆերմենտ ունի իր առանձնահատկությունը և ազդում է միայն որոշակի նյութերի վրա: Դրանք կարող են լինել սպիտակուցները, ճարպերը, ածխաջրերը: Ֆերմենտն այդ ժամանակ մնում է անփոփոխ: Բոլոր ֆերմենտները ունեն մի շարք ընդհանուր հատկություններ:

1. Ամեն մի ֆերմենտ առանձնահատուկ է և ճեղքում է միայն իրեն բնորոշ խմբին պատկանող մի շարք սնուցող նյութեր, և չի ազդում մյուս նյութերի վրա: Օրինակ, Պրոտեոլիտիկ ֆերմենտները կամ պրոտեազները ճեղքում են միայն սպիտակուցները, լիպոլիտիկ ֆերմենտները կամ լիպազները միայն լիպիդները:
2. Ֆերմենտները կարող են ազդել կամ ազդում են Ph-ի վրա:
3. Բոլոր ֆերմենտները բավականին ակտիվ են մարմնի ջերմաստիճանի տատանման ժամանակ:

4. Ֆերմենտնի անգամ քիչ քանակությունը կարող է ճեղքել մեծ քանակությանը օրգանական նյութեր:

Ֆերմենտներ արտադրվում են կենդանիների և բույսերի հյուսվածքներում և բջիջների մեջ: Ֆերմենտները ստանում են կենդանիների գեղձերի արտազատուկից, բույսերի տարբեր մասերից: Օգտագործում են նաև հատուկ սնկեր, արհեստական աճեցրած մանրէներ: Մարդու օրգանիզմի մեջ տարբերում ենք 3000 ից ավել ֆերմենտներ: Միայն մարդու մաշկի մեջ առկա են 100-ավոր ֆերմենտներ, որոնք կարգավորում են մի շարք պրոցեսներ, սկսած կոլագենային և էլաստիկ թելերի սինթեզից մինչև բջիջների թթվածնով մատակարարումը և ազատ ռադիկալների չեզոքացումը: Նշենք նաև, որ կան մի շարք ֆերմենտներ, որոնք քայքայում են կոլագենի և էլաստիկ թելիկները, նաև նպաստում են մաշկի ծերացմանը: Վերջինս հաշվի առնելով, կոսմետիկ պատրաստուկների մեջ ավելացնում են հատուկ նյութեր՝ ինգիբատորներ, որոնք ճնշում են <վատ ֆերմենտները>: Ժամանակակից արդյունբերության մեջ կա կոսմետիկ էնզիմոլոգիա գիտությունը, որի խնդիրն է գիտահետազոտական լաբորատորիաներում, կոսմետիկական մեծ կոնցերներում հետազոտել ֆերմենտները և նրանց ազդեցությունը:

Դիմահարդարին հետաքրքրում են մի շարք ֆերմենտներ, որոնք հատկապես ազդում են սպիտակուցների և ճարպերի վրա:

Օրինակ՝

1. **Պանկրեատին** - ստանում են խոզի ենթաստամոքսային գեղձից, օգտագործվում է մի շարք կոսմետիկ միջոցների մեջ
2. **Տրիպսին** - ստանում են պանկրեատինից, լայնորեն կիրառվում է վիրաբուժության մեջ վերքերի լավացման ժամանակ
3. **Պապային** - ստանում են պապայինի հյութից
4. **Բրոմելին** - ստանում են արքայախնձորի հյութից

Այս նյութերը օգտագործվում են ֆերմենտատիվ պիլինգի մեջ, որոնց նպատակն է շերտազատել եղջերային շերտը (թուլացնում են բջիջների կապը, հեռացնում են մեռուկացած բջիջները) արդյունքում մաշկը դառնում է ավելի հարթ և ավելի թափանցելի: Էնզիմային պիլինգները ուժեղացնելու համար սկզբից մաշկը պատում են պիլիգով, կարելի է մաշկը ծածկել ցելոֆանի թիթեղով և մաշկը մշակել ջրային բաղնիքի օգնությամբ: Այդ դեպքում պիլինգի ազդեցությունը ավելի է ուժեղանում: Լիպոլիտիկ պրեպարատները օգտագործվում են ներարկման ձևով հակացելյուլիտային, նիհարեցնող ծրագրերի մեջ:

ԹԵՄԱ IX

Մակերևութային ակտիվ նյութեր

Մրանք մի շարք միջոցներ են, որոնք շատ անհրաժեշտ են հավասար էմուլգատորների, հակաօքսիդանտների, ներկանյութերի և որոշում են տվյալ միջոցի նպատակը: Մակերևութային ակտիվ նյութերը բոլոր ճարպերի և ճարպանման նյութերի նման, լայնորեն կիրառվում են մի շարք կոսմետիկ պատրաստուկների մեջ և նրանց նպատակն է պաշտպանել վերնամաշկի ջրաճարպային մանտիան, պաշտպանել և ամրացնել ենթամաշկը: Բոլոր ճարպերը փափկացնում են մաշկը, դարձնելով այն անթափանցելի ջրի համար: Առօրյայում հարկավոր է մաշկը մաքրել (հատկապես երեկոյան ժամերին) և նրա մակերեսից հեռացնել օրվա ընթացքում մաշկի վրա կուտակված փոշին, մաշկը վնասող քիմիական տարրերը, ճարպի և քրտինքի մնացորդները:

Մովորաբար օգտագործում են օձառները, որոնց կիրառումից էլ խախտվում է մաշկի ամբողջականությունը, 20-25%-ով նվազում է ճարպը, լվացվելուց հետո զգացվում է մաշկի չորության և ձգվածություն: Եթե մաշկը առողջ է, ունի նորմալ ճարպարտադրություն, ապա արդեն 10-15 րոպե հետո փորձում է վերականգնել ճարպարտադրությունը և, ընդամենը 1 ժամ անց այն վերականգնվում է: Մաշկի մաքրումը պետք է կատարել և առավոտյան, և երեկոյան: Օձառով լվացվելուց հետո

մաշկի մակերեսին առաջանում են Ca-ի և Mg-ի աղեր, որոնք շատ նման են սուր բյուրեղների և կարող են գրգռել մաշկը, այսինքն այս դեպքում կարևոր է ոչ միայն ճարպագերծումը, այլ նաև այս նյութերի ազդեցությունը, որի ժամանակ մաշկը կարող է թեփոսվել, կոշտանալ և գրգռվել: Այս փաստը հաշվի առնելով, քիմիկոսները ստեղծել են մակերևութային ակտիվ նյութեր կամ տենզիլներ, որոնք հիմնականում սինթետիկ միջոցներ են և չունեն հասարակ օձառին բնորոշ բասացական ազդեցություններ: Մակերևութային ակտիվ նյութեր պարունակող ցանկացած միջոց կարելի է օգտագործել ցանկացած ջրում, քանի որ դրանք չեն վնասում մաշկը: Այդ նյութերը կանխում են անցանկալի նյութերի առաջացումը: Հաճախակի գուգահեռ նաև ունեն մանրէասպան, հակասնկային ազդեցություն, որոնք համարյա թե բացակայում են հասարակ նյութերի մեջ: Մակերևութային ակտիվ նյութեր պարունակող ակտիվ նյութերը նույնպես ճարպագերծում են մաշկը ընկճելով ջրաճարպային թաղանթը:

Ամենատարածվածներից են անեոնային մակերևութային ակտիվ նյութերը, որոնք հաճախակի պարունակում են ծծումբ (S), կարբօքսիլային թթուներ, մի շարք աղեր: Ամենահայտնին և ամենատարածվածը Na-ի լաուրինսուլֆատն է, որը համեմատաբար ավելի էժան է և ունի չորացնող հատկություն: Մակերևութային ակտիվ նյութերը հաճախակի ունեն փրփրացող

հատկություն, սրանք նպաստում են էմուլսիաների և փրփուրների առաջացմանը, հեշտությամբ խառնվում են մաշկային ճարպի հետ, լուծում են այն և եթե դա լվացող միջոց է, ապա հեշտությամբ լվանում են, մաշկի մակերեսից հեռացնում են մաշկային ճարպը, և նրա մեջ լուծված բոլոր նյութերը:

Էմուլգատորներ

Ցանկացած կոսմետիկ միջոց կազմված է մի շարք տարբեր նյութերից, որոնք կամ դժվար, կամ ընդհանրապես չեն խառնվում իրար հետ: Դրանք կարող են ժամանակի ընթացքում սկսել խառնվել: Էմուլգատորների հաշվին, կոսմետիկ միջոցը ստանում է կայուն տեսք, չի շերտազատվում, պահպանում է իր որակը, ծառայում է իր նպատակին և ունի երկար պահպանման ժամկետ: Էմուլգատորները հիմնականում կազմված են երկար մոլեկուլներից, որոնց մի ծայրը հիդրոֆիլ է և կապնվում է ջրի հետ, իսկ մյուս ծայրը լիպոֆիլ է և հեշտությամբ խառնվում է ճարպի հետ: Էմուլգատորները կարողանում են կապել իրար մեջ չլուծվող նյութերը, որով նաև նպաստում է բոլոր մյուս նյութերի հավասարաչափ բաշխմանը կոսմետիկ միջոցի մեջ: Արդյունաբերությունը օգտագործում է տարբեր խմբերի էմուլգատորներ.

1. **Բնական էմուլգատորներ՝** սրանք ստացվում են լեցիրինից և լանոլինից:

2. **Արհեստական Էմուլգատորներ**՝ սրանք հիմնականում ստանում են էթիլեն օքսիդից, որի հաշվին էլ ստացվում են շատ որակով էմուլսիաներ (ջուրը ճարպի մեջ և ճարպը ջրի մեջ):
3. **Գլիցերինի և շաքարի հիմքի վրա ստացված էմուլգատորներ** Սրանք նոր սերնդի նյութեր են, որոնք որակապես նման են բուսական և կենդանական էմուլգատորներին: Հաճախ օգտագործվում են սննդամթերքի մեջ, իրենց կազմվածքով շատ նման են մաշկային բնական ճարպին:
4. **Հատուկ բարձրորակ էմուլգատորներ**՝ սրանք նախատեսված են, սննդի համար: Հատկապես օգտագործում են կոսմետիկ միջոցների մեջ, որոնք պարունակում են ցորենի ծիլերից ստացված յուղ, մակադամայի ծիլերից ստացված յուղ, որոնք էլ շատ դժվար են խառնվում մյուս նյութերի հետ և ի շնորհիվ այս նյութերի հնարավոր է լինում ստանալ կոսմետիկ միջոց:

Ամենահաճախ օգտագործվող և ամենաուժեղ էմուլգատորներն են, որոնք ունեն փրփրացող հատկություններ: Կոսմետիկ միջոցը պատրաստելու համար կարևոր է ոչ միայն ճիշտ միջոցի ընտրությունը, այլ նաև ճիշտ քանակությունը: Նորից նշենք, որ մակերևութային ակտիվ նյութերը մաշկի

վրա տարածվելիս խախտում են եղջերային շերտի կապերը՝ դարձնելով մաշկը թափանցելի: Կոսմետիկ միջոցի բոլոր մյուս բաղադրիչները հեշտությամբ կարողանում են թափանցել մաշկի խորքերը:

Ժամանակակից արդյունաբերությունը կոսմետիկ միջոցների որակը լավացնելու համար աշխատում է մի քանի ուղղությամբ.

1. Փորձում է քչացնել էմուլգատորների քանակությունը
2. Օգտագործում է այն էմուլգատորները, որոնք չեն վնասում մաշկը, գրգռող և ագրեսիվ չեն
3. Օգտագործում է նոր սերնդի էմուլգատորները, որոնցով չեն վնասում ջրաճարպային պատնեշը, թանկ են և հիմնականում օգտագործվում են էլիտար կոսմետիկ միջոցների մեջ:

Օգտագործում են նաև մի շարք էմուլգատորներին նմանակող նյութեր, որոնց կիրառումը համեմատաբար քիչ են, սակայն ունեն էմուլգատորներին բնորոշ հատկություններ և կայունացնում են բնական միջոցի որակը: Դրանք են յուղերը՝ ժոժոբայի յուղ, մեղրամոմ՝ սիլիկոնի հիմքի վրա կամ հիդրոլիզներից պատրաստված նյութերը (ժելատին, խոլեստերին, պեկտին), սինթետիկ / պոլիսինթետիկ հիմքերը, սակայն սրանք էլ թանկ են և որակապես զիչ: Արդյունաբերությունը շարունակում է փնտրել նոր միջոցներ, որոնք կհեշտացնեն ստացված

պատրաստուկի թափանցումը մաշկի խորքեր, հեշտ կհեռացվեն մաշկի մակերեսից, կկարողան պահել ջուրը, կունենան երկար պահպանման ժամկետ և չեն վնասի ջրալիպիդային մանտիան:

Լուծիչներ

Լուծիչները լայն կիրառում ունեն և իրենցից ներկայացնում են մի շարք նյութերի խառնուրդներ, որոնցից մեկը հիմնականն է: Սրանք պետք է հավասարաչափ տարածվեն լուծույթի մեջ: Ըստ հիմնական լուծիչի տարբերում են.

1. Ջրային
2. Սպիրտային
3. Յուղային

Ըստ ազդեցության լինում են.

1. Հակաբորբոքային
2. Ախտահանող
3. Տոպոդ

Ջուր- ամենահաճախ օգտագործվող լուծիչն է, նրա մեջ հաճախ են լինում աղեր և օրգանական նյութեր: Հաճախ ջուրը կազմում է լուսյոնների, շպարահան միջոցների, ցերեկային քսուկների, շամպունների ամենամեծ բաղադրիչը: Հիմնականում կոսմետիկ միջոցների մեջ օգտագործում են թորած ջուր, որովհետև այս ջուրը չեզոք է, չի գրգռում մաշկը, թափանցելի է:

Մպիրտ

Ուժեղ լուծիչ է բժշկական օգտագործման էթիլ սպիրտը: Բուժական նպատակով օգտագործում են լոսյոնների մեջ (սպիրտի քանակը չի գերազանցում 15-20%-ը): Մպիրտի և ջրի մեջ ավելացնում են մի շարք նյութեր լոսյոնը ստանալու համար: Լոսյոնները հեշտությամբ խառնվում են մաշկի ճարպի հետ, ինչի հաշվին մաշկը ստանում է թարմացած տեսք, հնարավոր է մաշկի մակերեսից հեռացնել, ճարպի մնացորդները: Լոսյոնները չեն մաշկը և զուգահեռ լավացնում է մաշկի թափանցելիությունը:

Եթեր

Մա ունի ճարպազերծող հատկություն, հրակայուն է, ինչն էլ սահմանափակում է նրա լայն կիրառումը: Այն անգույն է, թափանցիկ, ունի բնորոշ հոտ, հեշտությամբ խառնվում է ջրի և ճարպի հետ, նրա մեջ է հեշտությամբ խառնվում են մի շարք հորմոններ: Լայնորեն կիրառվում է բժշկական լոսյոնների պատրաստման ժամանակ:

ԹԵՄԱ X

Կենսաբանորեն ակտիվ նյութեր

Սրանք մի խումբ նյութեր են, որոնք ավելացվում են կոսմետիկ միջոցների մեջ: Այս նյութերի կիրառման

նպատակն է կոսմետիկ միջոցին տալ հատուկ ուղվածություն (կնճիռները հարթեցնող միջոց՝ antiage, բուժիչ նշանակություն, ճարպագերծում և այլն:) Այս նյութերի որակից և քանակից հաճախակի կախված է լինում կոսմետիկ միջոցի գինը, պահպանման ժամկետը, օգտագործման ձևը և այլն:

Բոլոր ակտիվ նյութերը բաժանվում են 3 մեծ խմբի.

1. Դեֆիցիտը լրացնող նյութեր (նյութեր, որոնց կարիքը ունի մաշկը)
2. Պոռեկտորներ (պաշտպանում են մաշկը արտաքին մթնոլորտի վնասակար ազդեցությունից)
3. Մոդուլարտորներ (փոխում են մաշկի մեջ կատարվող ֆիզիոլոգիական պրոցեսների արագությունը և որակը:)

Դեֆիցիտը լրացնող նյութեր. Սրանք մի շարք նյութեր են, որոնց կարիքը ունի մաշկը, սակայն մարդու օրգանիզմը չի սինթեզվում նրանց և այս նյութերը մաշկին հասցնելու համար մարդը պետք է ընդունի նրանց արտաքին աշխարհից՝ դրանք են վիտամինները, անփոխարինելի ամինոթթուներ, անփոխարինելի ճարպաթթուները, հանքային նյութերը:

Սրանցից՝ մի քանիսը շատ կարևոր են անգամ մաշկի բջիջների գոյատևության համար օրինակ՝

պղնձի պակասից խանգարվում է մաշկի բջիջների և մազարմատի ֆոլիկուլի բազմացումը կամ բաժանումը,

ցինկի պակասի ժամանակ խանգարվում է մաշկի հակաօքսիդանտային պաշտպանությունը, ճարպաթթուների նվազման ժամանակ նկատվում է մաշկի չորությունը, որը կարող է ուղեկցվել թեփոտությամբ:

Նշենք, որ տարիքի հետ վատանում է մաշկի արյան սնուցումը, նյութափոխանակությունը և այս նյութերի առկայությունը ավելի կարևոր է դառնում:

Պոռոտեկտրոնք. Սրանք մի շարք նյութեր են, որոնք անհրաժեշտ են մաշկին՝ նրա երիտասարդ և առողջ տեսքը պահպանելու համար: Պոռոտեկտրոնքը պաշտպանում են մաշկը ուլտրամանուշակագույն ճառագայթներից, ջրագերծումից, ազատ ռադիկալներից և այլն: Իրենց հերթին այս նյութերը բաժանվում են հետևյալ խմբերի.

Լուսապաշտպանական ֆիլտրերի - մաշկը պաշտպանում են ֆոտոձերացումից

Հակաօքսիդանտներ - պաշտպանում են մաշկը ազատ ռադիկալներից

Թաղանթ կազմող նյութեր (լիսուոզան, հիալոռոնաթթո, կոլագեն, սինթետիկ և կիսասինթետիկ նյութեր), տարածվելով մաշկի վրա առաջացնում են կիսաթափանցիկ թաղանթ, որը պաշտպանում է մաշկը արտաքին միջավայրի կեղտից, մանրէներից, սակայն չի խանգարվում արգասիքների արտադրությանը և

արտագատմանը: Նպաստում է նաև մաշկի խոնավեցմանը և կանխարգելում է ջրազրկումը:

Մանրէասպան միջոցներ - սրանք նյութեր են, որոնք չեն վնասում մաշկի բջիջները, սակայն ունեն մանրէասպան հատկություններ. Օրինակ սորիկլոգանը, որը օգտագործվում է վնասված, բորբոքված մաշկի համար, ավելի հաճախ օգտագործվում են բույսերից ստացված միջոցները:

Մոդուլատորները. իրենց հերթին բաժանվում են.

Բջիջների բաժանման խթանիչներ - նյութեր են, որոնք առաջացնում են վերնամաշկի հիմնային շերտի բջիջների բաժանումը, նորացումը, սրանց թվին են պատկանում մրգաթթուները, վիտամին A և C;

Իմունոմոդուլատորներ - նյութեր են, որոնք փոխում են մաշկի իմունային ռեակցիաների արագությունը և ուղվածությունը: Օրինակ՝ B գլյուկանը՝ այս տիպի նյութերը մեղմացնում են մաշկի ավերգիկ ռեակցիաները և բորբոքային պրոցեսները:

Մոդուլատորները - պարտադրում են մաշկին աշխատել երիտասարդ բջիջների նման, սրանց թվին են պատկանում ֆիտորեւստրոգենները:

Աճի գործոններ - մաշկի բոլոր բջիջների սինթեզը, աճը, բաժանումը կատարվում են որոշկի արագությամբ: Կան

մուլեկուլներ, որոնք հետևում են բջիջների կենսունակությանը, կան նաև մի շարք նյութեր՝ դրանք են ցիտոկինները (աճի գործոնները), որոնք կարգավորում են մաշկի բջիջների գործունեությունը: Կոսմետիկ նպատակների համար օգտագործվում են մի շարք ցիտոկիններ, որոնք պարունակում են հյուսվածքների էկստրակտներ, օրինակ՝ ընկերքից ստացված միջոցներ, ձկնկիթը, մեղվի կաթը, կաթի շիճուկը և այլն:

Գոյություն ունեն մի շարք նյութեր են, որոնք կարգավորում են բիոլոգիական մուլեկուլների սինթեզը՝ այսինքն գրգռում են մաշկի բջիջները այս կամ այն նյութերը սինթեզելու համար. Օրինակ՝ խթանում են կոլագենի սինթեզը (վիտ C, մրգաթթուները) կամ ընդհակառակը՝ ընկճում են անցանկալի պրոցեսները՝ օրինակ մաշկի ճարպարտադրությունը: Նշենք մի քանի բիոլոգիական նյութերի ազդեցությունը մաշկի վրա.

Ֆիտոէստրոգեններ - կյանքի ընթացքում մարդու օրգանիզմում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնց հիմքում ընկած են հորմոնները, նրանց քանակությունը և որակը, հորմոնների բալանսը: Տարիքի հետ հորմոնների քանակը սկսում է նվազել, ինչի արդյունքում փոխվում է մազերի և մաշկի որակը, հորմոնների բալանսը, կտրուկ դանդաղում է մաշկի բջիջների բաժանումը: Հորմոնների պակասը նրանց ազդեցությունը վերականգնելու

նպատակով կոսմետիկ միջոցների մեջ ավելացնում են ֆիտոէստրոգեններ, այսինքն փորձում են լրացնել կանանց օրգանիզմի մեջ էստրոգենների պակասը (դանդաղեցնում է մաշկի ծերացումը, խթանում է կոլագենի սինթեզը՝ այսինքն վերականգնում է մաշկի երիտասարդ վիճակը):

Ֆիտոէստրոգեններ - դրանք մի շարք նյութեր են, որոնք ստանում են բույսերից՝ կարմիր խաղողից, նուռից, սոյաից, արմավից և էլի մի շարք բույսերից: Սրանց տեսակը 20-ից ավել է: Ֆիտոէստրոգենների առկայությունը արագացնում է բջիջների միտոզը, ակտիվացնում է նրանց գործունեությունը, երկարացնում է բջիջների կյանքը, այլ խոսքերով կանխարգելում է բջիջների ծերացումը: Ֆիտոէստրոգենները առկա են մի շարք կոսմետիկ միջոցների մեջ, նաև բիոլոգիական նյութերի մեջ, որոնք ընդունում են հաբերի կամ լուծույթների ձևով:

Կոենզիմ Q 10 կամ ուբիսինոն - երիտասարդացնող միջոց է, որը իրենից ներկայացնում է ճարպալույծ խառնուրդ, Q10 բենզոխինոնների դասից: Մասամբ ստանում ենք սննդի միջոցով, մասամբ սինթեզվում է օրգանիզմի մեջ ամինոթթուներից (սրա սինթեզի համար շատ կարևոր է B խմբի վիտամինների և մի շարք միկրոէլեմենտների առկայությունը, 30 տարեկանից հետո քանակությունը սկսում է նվազել և կարևորվում է

կոնենգիմի մակարդակը բարձրացնել սննդային հավելվածքների և կոսմետիկ միջոցների օգնությամբ): Կոնենգիմը շատ կարևոր է մաշկի մեջ կատարվող իմունային ռեակցիաների համար, վերականգնում է մաշկի մեջ փոխանցվող ֆունցիաները, ապահովում է մաշկի հակաօքսիդանտային պաշտպանությունը և այլն:

ԹԵՄԱ XI

Հակաօքսիդանտեր

Ժամանակակից ոչ մի կոսմետիկ պատրաստուկ հնարավոր չէ պատկերացնել առանց հակաօքսիդանտների: Ցանկացած կոսմետիկ միջոց պարունակում է բուսական և կենդանական ճարպեր, մոմեր, որոնք որոշ ժամանակ հետո սկսում են ճեղքվել, ձևափոխվել և արդյունքում ստանում ենք օրգանական պերօքսիդներ, ալդեհիդներ, որոնք կոսմետիկ միջոցին տալիս են ծանր հոտ, փոխվում է միջոցի որակը: Նմանատիպ միջոց օգտագործելուց հետո կարող ենք ստանալ մաշկի գրգռում, ունենալ ալերգիկ ռեակցիաներ: Նմանատիպ փոփոխություններին նպաստում է նաև սխալ խնամքը, բարձր ջերմաստիճանը, լույսի առկայությունը, թթվածնի հետ շփումը, տվյալ միջոցին ախտոտվածությունը տարբեր մանրէներով (բակտերիաներ, սնկեր):



Այս փոփոխությունները կանխելու և միջոցը երկարատև օգտագործելու նպատակով ավելացվում են հակաօքսիդանտներ, որոնք իրենք էլ ժամանակի ընթացքում քայքայվում են, սակայն ստացված նյութերը չեն գրգռում մաշկը: Հակաօքսիդանտներ են կոչվում այն նյութերը, որոնք կանխում են օքսիդացումը: Հակաօքսիդանտները նաև կապում են հյուսվածքների մեջ առաջացած ազատ ռադիկալները, որոնց քանակը ավելանում է տարիքի հետ և նրանց վնասող հատկությունները դառնում են մաշկի ծերացման, ինչպես նաև մի շարք հիվանդությունների պատճառ: Հակաօքսիդանտները ստանում են մի շարք բույսերից, նրանք կապում են ազատ ռադիկալները երկարացնելով կոսմետիկ միջոցի պահպանման ժամկետը: Ավելի հաճախ օգտագործվող հակաօքսիդանտներն են՝ վիտամինները (A, E, C), կարոտինոիդները: Հակաօքսիդանտները նաև համարվում են բիոլոգիական ակտիվ միջոցներ:

Վիտամին A (ռետինոլ) - սա ազդում է վերնամաշկի վրա լավացնելով մաշկի որակը, կարգավորում է ճարպարտադրությունը, բարձրացնում մաշկի դիմադրողականությունը: Լայնորեն կիրառվում է կոսմետիկ միջոցների մեջ: Այն ճարպալույծ վիտամին է մասնակցում է սպիտակուցային ճարպային փոխանակությանը, ուժեղացնում է իմուն համակարգը, ակտիվացնում է մաշկի բջիջների ֆերմենտները, արդյունքում լավանում է մաշկի առաձգականությունը: Լայնորեն կիրառվում է քսուկների մեջ, կարելի է ընդունել հաբերի և կապսուլաների ձևով: Լայնորեն կիրառվում է նախավիտամին A-ն, որը մեծ քանակությամբ կա նարնջագույն մրգերի և բանջարեղենի մեջ (զազար, կարմիր բիբար), օրգանիզմի մեջ ձևափոխվում է վիտամին A-ի. օգտագործվում է սնուցող և վիտամինային քսուկների մեջ, կորյակների բուժման համար նախատեսված միջոցների մեջ, մազերի և եղունգների խնամքի միջոցների մեջ: Սրանք նշանակվում են մի շարք մաշկային հիվանդությունների ժամանակ, հատկապես, երբ կան վերնամաշկի փոփոխություններ: Լայնորեն կիրառվում է հակաձերացնող, մաշկը վերականգնող միջոցների մեջ, ավելացվում է ամենօրյա օգտագործման քսուկների, պիլինգի պարագաների մեջ: Կոսմետիկ միջոցը, հետևողականորեն օգտագործելու դեպքում, լավացնում է մաշկի առաձգականությունը, բարձրանում է

վերականգնողական ֆունկցիան, մաշկը երիտասարդանում է:

Վիտամին E - սա նույնպես կարող է կապել ազատ ռադիկալները, վերականգնում է ճարպային մանտիան, որը կազմված է ոչ հագեցած ճարպաթթուներից, մաշկի խորը շերտերում վերականգնում է բջիջների թաղանթը, դանդաղեցնում է ծերացման պրոցեսը: Օգտագործում են տեղային, կապսուլաների կամ յուղային լուծիչների ձևով:

Վիտամին C - ջրալույծ է, ունի սպիտակ բյուրեղների տեսք, սպիտակեցնող և մաշկը վերականգնող հատկություն: Ունի պահածոյացնող հատկություն, տոքսիկ չէ, օգտագործվում է հաբերի ու լուծույթի ձևով: Կիրառվում է կոսմետիկ միջոցի մեջ, որպես սպիտակեցնող և մաշկը արևի ճառագայթներից պաշտպանող միջոց: Խթանում է կոլագենի սինթեզը, արագացնում է վերքերի լավացումը: Վիտամին C քիչ քանակությամբ կա բոլոր կենդանիների օրգանների մեջ: Վիտամին C ն ընդունում ենք սննդի հետ: Այս վիտամինից պարունակում են բոլոր ցիտրուսները, կանաչ և կարմիր պղպեղները, սև և կարմիր հաղարջը: Վիտամին C-ն լինելով հզոր հակաօքսիդանտ խոչընդոտում է մի շարք բիոլոգիական նյութերի օքսիդացումը: Օգտագործվում է քսուկների, լոսյոնների

պատրաստման և դիմահարդարման մեջ, նաև՝ պարանոցային, հարակնային շրջանում: Կան հատուկ պատրաստուկներ, որոնց մեջ վիտամին C-ն ակտիվացնում են օգտագործումից առաջ: Լինելով շատ նուրբ և ունենալով հեշտ քայքայվող հատկություն, պահանջվում է օգտագործել կարճ ժամկետում:

Մրգաթթուներ


Լայնորեն կիրառվում են մի շարք կոսմետիկ միջոցների մեջ (լոսյոններ, պիլինգներ, քսուկներ): Մրանց կիրառումը սկսվել է վերջին մի քանի տարիների ընթացքում, չնայած, որ մարդկությանը հայտնի են դարերի խորքից: Մրգաթթուները մի խումբ օրգանական թթուներ են, որոնք ստացվում են մի շարք մրգերից: Ամենահաճախ օգտագործվողներից են գլիկոլաթթուն, կիտրոնաթթուն, ինձորաթթուն, գինեթթուն, ինչպես նաև կաթնաթթուն, որը չունենալով բուսական ծագում, իր ազդեցությամբ շատ նման է մրգաթթուներին և լայնորեն կիրառվում է կոսմետիկ միջոցների մեջ: Մրգաթթուները ունեն հատուկ նիշ (AHA) - **ալֆա հիդրօքսիացիդ**: Մրգաթթուները ունեն լավ թափանցելիություն և մաշկի վրա ազդելով նրանք ունենում են մոլեկուլների, ինչպես նաև բջիջների վրա ազդեցություն:

Առաջին և կարևոր ազդեցությունը դա մրգաթթուների շերտազատող ազդեցությունն է: Տարածվելով եղջերային շերտի վրա, մրգաթթուները թուլացնում են

եղջերային շերտի բջիջների կորնեոցիտների կապը և բջիջները հեշտությամբ հեռացվում են մաշկի մակերեսից: Ի պատասխան շերտազատման, խթանվում է հիմնային շերտի բջիջների բաժանումը և վերնամաշք ստանում է նոր, երիտասարդ բջիջների զանգված: Վերնամաշկի վերականգնված բջիջները լինում են լավ խոնավեցված, որովհետև հարուստ են լինում բնական խոնավեցման գործոնով(NMF): Մրգաթթուները կարողանում են թափանցել մինչև բուն մաշկի մեջ խթանելով ֆիբրոբլաստները, այսինքն խթանում են կոլագենի և էլաստինի սինթեզը: Արդյունքում վերնամաշկը բարակում է, նորանում և երիտասարդանում է, դրա հաշվին բուն մաշկը հաստանում է, լավանում է մաշկի արյան շրջանառությունը, մաշկը դառնում է ավելի առաձգական, էլաստիկ, ավելի հարթ և ավելի հավասար գունակավորված: Մրգաթթուները նաև կարողանում են կապել ծանր մետաղների իոնները, իրենց ազդեցությամբ շատ նման են հակաօքսիդանտների, խթանում են վիտամին E-ի ազդեցությունը: Ամփոփելով նշենք, որ մրգաթթուները գործում են որպես շերտազատող, խոնավեցնող, հակաօքսիդանտային միջոցներ, ունեն հակաբորբոքային ազդեցություն, խթանում են գլիկոզամինների և կոլագենի սինթեզը:

Միզանյութ (Urea)

Մեծ քանակությամբ պարունակվում է մեզի և քրտինքի մեջ: Կոսմետիկ միջոցների մեջ օգտագործվում է որպես խոնավեցնող միջոց: Քրտինքը մաշկի մակերեսին արտադրվելիս գոլորշիանում է, իսկ միզանյութը մնում է մաշկի մակերեսին, կապվում է օդի մեջ գտնվող ջրի հետ և մնում է եղջերային շերտի մեջ: Մաշկաբանության մեջ միզանյութը Օգտագործվում է չոր մաշկի բուժման ժամանակ, քանի որ կարողանում է քայքայել սպիտակուցային շղթաների ջրածնային կապերը և փոխարենը կապնվել ջրի մոլեկուլների հետ, արդյունքում սպիտակուցը կապվում է ջրի հետ: Միզանյութի մոլեկուլյար կշիռը բավականին ցածր է, ինչի ` հաշվին նա կարողանում է թափանցել մաշկի խորքերը և արդյունքում մաշկը կարողանում է պահպանել խոնավությունը, իսկ միզանյութի հետ կապված մաշկի խորք են թափանցում մի շարք այլ ակտիվ նյութեր: Վերնամաշկի բջիջները արտադրում են պոլիսախարիդներ, իսկ միզանյութը նպաստում է, որպեսզի շրջակա օդից ջուրը կապնվի պոլիսախարիդների հետ և կարողանա թափանցել ու կապվել վերնամաշկի սպիտակուցի կերատինի հետ: Արդյունքում մաշկը ստանում է վարդագույն երանգ: Վերնամաշկի մեջ միզանյութի քանակությունը հասնում է 1%-ի:



Նշենք, որ միզանյութը ունի 2 ազդեցության ձև՝

Քիչ քանակությամբ միզանյութը խոնավեցնում է մաշկը:

Եթե միզանյութի քանակությունը հասնում է 100 և ավելի, ապա նյութը սատնում է կերատոլիտիկ հատկություն, այսինքն նպաստում է շերտազատմանը, վերքերի լավացմանը, մեծացնում է մաշկի թափանցելիությունը: Միզանյութն ունի մանրէասպան հատկություն:

Կան կոսմետիկ գծեր, որոնց մեջ լայնորեն կիրառվում է միզանյութը: | Ֆրանսիական Topicream ֆիրման գրեթե բոլոր միջոցների մեջ օգտագործում է միզանյութ: Միզանյութը լավ է լուծվում ջրի մեջ, սակայն շատ շուտ քայքայվում է և փոխում է թթվայնությունը, գույնը, ինչպես նաև կարող է գուգահեռ քայքայել էմուլսիան: Այդ պատճառով կոսմետիկ միջոցի մեջ ավելացնում են կաթնաթթուն, որը կայունացնում է կոսմետիկ միջոցը և ստեղծում է խոնավեցնող կոմպլեքս: Միզանյութը կարելի է: օգտագործել նաև կոլագենի, էլաստինի, սոյայի, սպիտակուցի, արգինինի(սպիտակեցնող միջոց)

հետ: Կոսմետիկ միջոցի մեջ օգտագործվում է միզանյութի 3-8%-ը: Լայնորեն կիրառվում է ձեռքերի և ոտքերի համար նախատեսված միջոցների մեջ:

Հորմոններ

Հորմոնները ակտիվ նյութեր են: Հորմոնները իրենց քիմիական կազմվածքով և կառուցվածքով բաժանվում են 2 մեծ խմբերի՝ **սպիտակուցային բնույթի հորմոններ և ստերոիդներ**

Ստերոիդների կառուցվածքով հորմոններն են՝ էստրոգենները, պրոգեստերոնը և անդրոգենները: Կանանց համար նախատեսված միջոցների մեջ հաճախակի առկա են էստրոգենները: Այս հորմոնները ունեն պրակտիկ կիրառում: Կազմելով կոսմետիկ միջոցի անգամ ցածր տոկոսը, նրանք թափանցում են արյան մեջ և կարող են ունենալ ընդհանուր ազդեցություն: Էստրոգենների ազդեցության տակ կարգավորվում է ճարպարտադրությունը, դանդաղում է մաշկի ծերացումը, լավանում է բջիջների ձևավորումը, երիտասարդացումը, վերականգնվում են վերնամաշկի բջիջները, խթանվում է կոլագենի և էլաստինի սինթեզը, լավանում է մազերի աճը և որակը: Տարիքի հետ, հատկապես դաշտանադադարի շրջանում սկսում է նվազել հորմոնների արտադրությունը, գուցահեռ դրան դանդաղում են փոխանակային ֆունկցիաները, կտրուկ փոխվում է մազերի որակը, նկատվում է:

սակավամագություն, մագաթափություն, փոխվում է գլխամաշկը, կոտրատվում և այտուցվում են բուն մաշկի կոլագենային և էլաստիկ թելերը:

Ֆիբրոբլաստների մեծ քանակությունը կորցնում է իր Ֆունկցիաները, նվազում է նոր կոլագենի սինթեզը, արդյունքում մաշկը թորշոմում և կնճռոտվում է, անգամ ճարպոտ մաշկը կարող է դառնալ չոր մաշկ: Անդրոգենների ազդեցության տակ (բարձր քանակության դեպքում) նկատվում է գլխամաշկի ճարպարտադրության ուժեղացում, մազերը բարակում են, սկսած ճակատից մինչև գագաթը դիտվում է մագաթափություն (ալոպեցիա), կարող է ուժեղանալ մագաճը մարմնի և դեմքի վրա, ուժեղանում է դեմքի ճարպարտադրությունը, կարող է առաջանալ կորյակավոր ցանավորում, կարող է փոխվել քաշը:


Մագաթափությունը կոչվում է անդրոգենային կամ անդրոգենետիկ ալոպեցիա: Ցանկացած կոսմետիկ միջոցի մեջ ամենախիստ պահանջը դա անվտանգությունն է, դրա համար էլ հորմոն պարունակող միջոցները պետք է նշանակվեն բժշկի կողմից և օգտագործվեն բժշկի հսկողության տակ:

ԹԵՄԱ XII

Միկրոէլեմենտներ և մակրոէլեմենտներ

Միկրոէլեմենտներ

Էլեմենտներ են, որոնց քանակությունը մարդու օրգանիզմի մեջ տատանվում է 0,00001% մինչև 0,01%: Միկրոէլեմենտների թվին են պատկանում երկաթը, ցինկը, ֆտորը, պղինձը, յոդը, սելենը, պերմանգանատը: Միկրոէլեմենտները մասնակցում են բարդ ֆիզիոլոգիական ռեակցիաների մեջ, կարգավորում են կենսաբանական կարևոր ֆունկցիաները մարդու զարգացման բոլոր էտապներում: Մեր օրգանիզմում կան նաև ուլտրամիկրոէլեմենտներ: Դրանք են ոսկին սնդիկը քրոմը և իկելը, որոնք նույնպես շատ կարևոր են: Մարդու օրգանիզմի նորմալ զարգացման համար կարևոր են ամենաքիչը 13 էլեմենտներ, որոնցից կարևորներն են երկաթը, յոդը, պղինձը, ցինկը և պերմանգանատը, սա նաև վերաբերում է կենդանիների:



Fe 26 55.847 ԳՈՐԵՆՅՈՒ	P 15 30.97376 ՓՈՇՓՈՐ
Na 11 22.98977 ՆԱՏՐՈՍ	Cu 29 63.546 ՄՇՇԻ
K 19 39.098 ՔԱԼԻՍ	Zn 30 65.38 ԼՐՊԻ
Cl 17 35.453 ՔԼՈՐ	Se 34 78.96 ՍՇՆԻ

Fe երկաթ - նորմալ կենսաբանության համար ամենակարևոր էլեմենտներից մեկն է: Կազմում է երիթրոցիտների հեմոգլոբինի կարևոր տարրը, մասնակցում է արյան ձևավորման պրոցեսում, արյան միջոցով թթվածինը փոխանցում է դեպի հյուսվածքներ: Շատ կարևոր է դիմադրողականության ձևավորման հարցում: Երկաթի պակասի դեպքում նկատվում է բերանի անկյուններում վերքեր, ճաքում է լորձաթաղանթը, եղունգները բարակում, կոտրտվում և դեֆորմացվում են, մաշկի վրա ձևավորվում է թարախաբշտիկային ցան, մազերը սպիտակում են: Օրվա նորմալ 11-30մգ է: Երկաթը պարունակում է կանաչ պղպեղի, ծիրանի չրի, ծաղկակաղամբի, սալորի, վարսակի և լյարդի մեջ:

Յոդ - շատ կարևոր է վահանաձև գեղձի նորմալ գործունեության համար, մի շարք հորմոններ, որոնք սինթեզվում են վահանաձև գեղձում, օգտագործում են յոդի պաշարները, յոդը մասնակցում է նաև մի շարք փոխանակային ֆունկցիաների մեջ հատկապես

սպիտակուցների ճարպերի և ածխաջրերի: Յոդի նորմալ քանակությունը հարկավոր է նաև նյարդային համակարգի, սեռական, կաթնագեղձերի ձևավորման, ուղեղի գործունեության համար: Այն շատ կարևոր նշանակություն ունի երեխայի աճի և զարգացման համար: Անգամ մարդու ինտելեկտը, ընդհանուր զարգացվածությունը կախված է յոդի մակարադակից: Յոդի դեֆիցիտի ժամանակ ընկնում է օրգանիզմի դիմադրողականությունը: Օրգանիզմը կուտակում է ճարպը, կարող են զարգանալ ինֆեկցիաներ, առաջանում է հոքնածության զգացողություն: Օրվա չափաքանակը 150-200մկգ (միկրոգրամ): Յոդը պարունակում է բողկի, լոլիկի, կարտոֆիլի, ոլորի, ելակի, սպանախի, կաղամբի և ամենաշատը ծովամթերքի մեջ:

Cu - Պղինձը հարկավոր է նորմալ սպիտակուցային փոխանակման համար, քանի որ սպիտակուցների մի մասը պարունակում են պղինձ, նաև մասնակցում է ոսկրերի, աճառների, ջիլերի ձևավորմանը, ապահովում է արյունատար անոթների առաձգականությունը, մազերի գունակի սինթեզի ժամանակ կանխարգելում է մաշկի թեփոտությունը: Պղինձի պակասի դեպքում տեղի է ունենում ոսկրային և շարակցական հյուսվածքների փոփոխություն, ոսկրերի ձևափոխում: Նկատվում է ոսկրերի կոտրվածքներ, խանգարվում է մազերի գույնը, կարող է զարգանալ վիտիլիգո,

շաքարային դիաբետ, արագանում է օրգանիզմի ծերացումը: Օրվա նորման 2-3մգ է: Պարունակվում է նշի, ընկույզի, թեփի մեջ:

Zn Ցինկ - Շատ կարևոր է օրգանիզմի դիմադրողականության, իմունիտետի ձևավորման ժամանակ: Այն 80-ից ավել ֆերմենտների բաղադրամաս է, մասնակցում է էրիթրոցիտների, ԴՆԹ-ի, ռնթ-ի ձևավորմանը: Ցինկի պակասի ժամանակ նկատվում են կորյակներ, մաշկաբորբ, էկզեմա, փսորիազ, թեփանման ցանավորում մաշկի վրա, ֆուռունկույլոզ: Վերքերը դանդաղում են լավանում են, եղունգները շերտավորվում են, ծածկվում են սպիտակ կետերով, առաջանում է թեփ, մազերը խամրում են, դանդաղում է մազերի աճը, նկատվում է մազաթափություն: Օրվա քանակը 10-15մգ է: Ցինկի աղբյուրներն են ձուն, ընկույզը, սոխը, արևածաղիկը, մսամթերքը, բրինձը, մանանեխը, սունկը:

Մակրոէլեմենտներ

Մակրոէլեմենտների քանակությունը ավելին է քան 0,01%-ը: Բոլոր կենդանի օրգանիզմները 99%-ով կազմված են չորս քիմիական էլեմենտներից՝ ջրածին, թթվածին, ազոտ, ածխածին: Ջրածինը և թթվածինը կազմում են բջիջների 60-70%-ը: Կարևոր է նաև ծծումբը, քլորը, նատրիումը, մագնեզիումը:

Ca Կալցիում - շատ կարևոր է սրտի աշխատանքի մկանների ձևավորման և աշխատանքի մի շարք ֆերմենտների, հորմոնների ձևավորման և ակտիվության համար: Այն ոսկրերի ձևավորման համար ամենակարևոր տարրն է: Կալցիումի պակասի ժամանակ նկատվում է ոսկրերի փխրունություն, ձևափոխում, ատամների քայքայում: Օրվա նորման 800-1200մգ է: Պարունակվում է կաթնամթերքի, լոբազգիների, ընկույզի, արևածաղկի, կանաչ բանջարեղենի մեջ:



Na նատրիում - Նատրիումի պակասի ժամանակ կարող են նկատվել մաշկային ցանավորումներ, մազաթափություն, լորձաթաղանթի չորություն, այտուցներ, մկանային սպազմեր: Նատրիումը մասնակցում է բոլոր բջիջների նորմալ գործունեությանը: Օրվա նորման աղի ձևով 15-20գր է: Նատրիումի աղբյուր են կերակրի աղը, միսը, պանիրը, մեծ քանակությամբ աղի ձևով պարունակվում է սննդամթերքի մեջ:

Ք Կալիում - Պարունակվում է արյան մեջ, կարևոր է մկանային, նյարդային համակարգի համար, սրտի գործունության համար: Կալիումի պակասի ժամանակ նկատվում է սրտի աշխատանքի անբավարարություն, խանգարվում են սրտի կծկումները, նկատվում է մկանային թուլություն, հոքնածություն, լորձաթաղանթի վրա առաջանում են էռոզիաներ, մաշկի չորություն, մազերի խամրում են, դանդաղում է վերքի լավացումը: Օրվա նորման 3000մգ է: Աղբյուր են հանդիսանում կաթնամթերքը, բանանը, կակաոն, լոբազգիները, կարտոֆիլը, ծիրանը, մաղադանոսը, չամիչը, սալորը և սև թեյը:

ԹԵՄԱ XIII

Կալի օգտագործումը

դիմահարդարման մեջ

Կալը օգտագործում են մաշկը տաքացնելու և չորացնելու նպատակով: Կավաբուծությունը հնագույն բժշկական մեթոդներից մեկն է և բնությունը օժտել է կալը մի շարք բուժական հատկություններով: Դեռ հին Եգիպտոսում այն օգտագործում էին զմրսելու նպատակով (կալի մեջ պահում էին միրգ և բանջարեղեն): Եգիպտական պապիրուսներում պահպանում էին մի շարք ներքին և արտաքին

հիվանդությունների բուժման համար նախատեսված դեղատոմսեր: Չինաստանում կավի մեջ ձու պահում էին մինչև 5 ամիս: Հոմեոպաթիները կավը օգտագործում էին լվացքի համար: Կավը իրենից ներկայացնում է փափուկ, նստվածքային լեռնատեսակ: Կավը ստացվում է մի շարք քիմիական ռեակցիաների արդյունքում: Կավերը լինում են տարբեր տեսակի, դրանք կարող են ստանալ խմորի տեսք և այս վիճակով հնարավոր է հեշտությամբ խառնել և տալ ցանկացած տեսք: Մի փոքր ջուր ավելացնելիս այն դառնում է ծորացող և կորցնում է իր փափկությունը: Կավը հարուստ է մի շարք բիոլոգիական նյութերով և միկրոէլեմենտներով (Mg, Cu, Ba, կոբալտ, մոլիբդեն և այլն): Կավով բուժում են ավելի քան 30 հիվանդություն, իսկ մոտ 70 հիվանդություններ բուժական բույսերի, մրգերի և բանջարեղենի հետ միասին: Դիմահրդարման մեջ օգտագործում են մաքրված, գունաթափված, հատուկ մշակված կավի տեսակներ՝ հիմնականում սպիտակ և չինական կավերը: Վերջինս ունի հակասեպտիկ և խթանող հատկություն, հիմնականում օգտագործվում են դիմակների, դիմափոշիների բաղադրության մեջ:

Կավի տեսակները և ազդեցությունը

Կավի տեսակները իրարից տարբերվում են՝ խտությամբ, գույնով, օրգանական և հանքային բաղադրությամբ: Կավերը լինում են նաև հեշտ լուծվող, հրակայուն, ճարպային և պլաստիկ: Կավի գույնը

կախված է հանքային նյութերի կազմությունից Cu ի և Fe ի առկայությունից: Տարբերում ենք սպիտակ, կապույտ, կանաչ, վարդագույն, կարմիր, սև կավի տեսակները: Կոսմետոլոգիայում օգտագործվում են սպիտակ և կանաչ կավ:



Սպիտակ կամ չինական կավ - ամենալայն կիրառվող կավի ձևն է դիմահարդարման մեջ: Սպիտակ կավը չունի քերոդ հատկություն, անվնաս է ինչի շնորհիվ էլ կիրառվում է դիմահարդարման մեջ: Լայնորեն կիրառվում է քսուկների, տալեկ-երի մեջ և կիրառվում է կորյակավոր ցանավորման ժամանակ:

Սպիտակ կավը՝

1. Մաքրում է վերնամաշկը
2. Ունի հականեխիչ, մաշկը վերականգնող հատկություն
3. Հազեցնում է վերնամաշկը հանքային նյութերով

4. Կանխարգելում է մանրէների զարգացումը մաշկի կլանող հատկության շնորհիվ
5. Հեռացնում է մաշկից տոքսինները և կեղտը
6. Լավացնում է փոխանակային ֆունկցիաները
7. Հարուստ է միկրոէլեմենտներով, որոնց հաշվին ունի բուժական հատկություններ, Ph=5, կարող է նաև օգտագործվել զգայուն մաշկի համար
8. Օգտագործվում է նաև շպարահան կաթի, դիմակների և շամպունների մեջ



Կապույտ կամ երկնագույն կավ - փոշենման զանգված է, Ph=7,3, ստանում են Բուլղարիայում: Հարուստ է պղնձով և քրոմով, օգտագործվում է մազերի և դեմքի դիմակների մեջ, փափկեցնում և թարմացնում է մաշկը: Մաքրում է մաշկը կորյակավոր ցանավորումից, ունի սպիտակեցնող, կնճիռները հարթեցնող ազդեցություն: Կարելի է օգտագործել ճարպոտ մազերի դեպքում: Ունի մանրէասպան, հակացելյուլիտային, հակասթրեպսային ազդեցություն: Ցուցված է ջրազրկված, չորացած, գրգռված մաշկի դեպքում: Քրոմը և պղինձը փոշուն տալիս են երկնագույն երանգ: Այս կավը ամենազնահատելին է իր ազդեցությամբ: Նախկինում

բժիշկները կարծում էին, որ երկնագույն կավով կարող են բուժվել բոլորը: Այսօր ևս կա նման կարծիք, քանի որ այն կարգավորում է նյութափոխանակությունը, խթանում և ուժեղացնում է մի շարք բժշկական միջամտությունների ազդեցությունը:

Կանաչ կավ - գույնը բացատրվում է սրա մեջ պարունակվող Fe-ի օքսիդով, հարուստ է նաև Mg-ով, Al-ով, Cu-ով, մոլիբդենով և կոբալտով: Դիմահարդարման մեջ օգտագործվում է ճարպոտ մաշկի դեպքում, նաև մազերի թեփոտության ժամանակ: Կավի 50 % կազմում է սիլիցիլօքսիդը, 13% ալյումինիումը, պարունակվում է նաև մոտ 15% ոսկի և արծաթ (Ph=7): Լավացնում է արյան շրջանառությունը, ճարպային փոխանակությունը, խթանում մազի աճը և կոլագենի սինթեզը: Սիլիցիումը դրական է ազդում վերնամաշկի վրա, մաշկի անոթները սարքում է ճկուն: Դրական ազդեցություն ունի ոսկրային համակարգի վրա:

Վարդագույն կավ - Այն կարմիր և սպիտակ կավի խառնուրդ է տարբեր չափաբաժիններով: Ներառում է մեծ քանակությամբ միկրոէլեմենտներ, օժտված է հականեխիչ, մաշկը հարթեցնող ազդեցությամբ: Քանի որ այս կավը շատ փափուկ է այն ցուցված է նուրբ մաշկի համար: Օգտագործվում է դիմակների, շամպունների պատրաստման մեջ, նորմալ մաշկի և մազերի խնամքի

համար: Գույնը պայմանավորված է Ֆերումի օքսիդի և Կուպրումի առկայությամբ: Որպես դիմակ օգտագործվում է հազվադեպ քանի որ մաշկին տալիս է շիկակարմիր երանգ, օգտագործվում է օրգանիզմում Ֆերումի պակասի ժամանակ:

Դեղին և կարմիր կավ - Դեղին կավը հարուստ է Fe-ով և K-ով, իսկ կարմիր կավը պարունակում է Fe-ում և Cu-ում: Դեղին և կարմիր կավերի հատկությունները ավելի թույլ են քան կանաչինը: Հիմնականում օգտագործվում է Ֆերումի պակասի ժամանակ: Կարմիր կավը հազվադեպ է օգտագործվում որպես դիմակ, սակայն հաճախ կիրառվում է սննդի մեջ: Քիչ կիրառություն ունի նաև սև կավը:

Բոլոր տեսակի կավերը ունեն 3 տիպի ազդեցություն-

1. Տաքացնող
2. Մեխանիկական
3. Քիմիական

ԹԵՄԱ XIV

Բնական և արհեստական ներկանյութեր. Հոտավետ նյութեր

Ներկանյութեր՝ բնական և արհեստական

Վերջիններս օգտագործվում են կոսմետիկ միջոցները ներկելու, գույն տալու նպատակով:

Ներկանյութերը կարող են լինել օրգանական և անօրգանական: Կոսմետիկ միջոցի գույնի կայունությունը կախված է ներկանյութի կայունությունի: Այն պայմանավորված է ներկանյութի բաղադրությամբ ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ զգայունությամբ, ինչպես նաև միջավայրի, միկրոօրգանիզմների, ջերմաստիճանի հանդեպ կայունությամբ: Միայն բնական ներկանյութերը օգտագործվում են առանց հավաստագրման: Իսկ բոլոր սինթետիկ ներկանյութերը պետք է հավաստագրված լինեն և չափավորված լինեն, քանի որ կարող են վնասակար ազդեցություն ունենալ:

Վերջին ժամանակներում ավելի հաճախ օգտագործում են բնական բուսական ներկանյութեր, դրանք են՝ ազոոուբինը, ինդիգոն, աննաթոն, այսօր արդեն հանքային ներկանյութերը՝ ուլտրամարմինը, քրոմի կանաչ օքսիդը և այլն:



Կոսմետիկ միջոցների ներկանյութերը չպետք է գոգոեն մաշկը, չառաջացնեն ալերգիա, ամենակարևորը՝ չլինեն թունավոր: Բացի այդ, գունակը պետք է լինի կայուն և պահպանի գունը երկար ժամանակ:

Ներկանյութերը դասակարգում են նաև հետևյալ ձևով՝ թթվային, հիմնային և չեզոք, ինչպես նաև հիմնական և քիչ լուծվող:

Կոսմետիկ միջոցների պատրաստման ժամանակ շատ կարևոր են նաև հոտավետ նյութերը: Հոտավետ նյութերը ավելացնում են կոսմետիկ միջոցի մեջ, նախնական հումքի հոտը քողարկելու, ինչպես նաև կոսմետիկ միջոցին հաճելի բույր հաղորդելու համար: Որպես հոտավետ նյութ օգտագործում են ինչպես բնական եթերային յուղերը, այնպես էլ հատուկ ստեղծված հոտային կոմպոզիցիաները:

Այսօր սակայն հազվադեպ են օգտագործվում բնական ծաղիկներից ստացված յուղերը, օրինակ վարդի յուղը: Ընդհանրապես կոսմետոլոգիայում օգտագործվող հոտավետ նյութերը դրանք խիստ մտածված

խառնուրդներն են, որոնք կարող են կազմված լինել բնական և արհեստական նյութերից:

Հոտավետ նյութերի դասակարգումը

1. Հոտավետ նյութերի հումքը կարող է լինել բնական և արհեստական:
2. Բնական հոտավետ նյութերը բաժանվում են հետևյալ խմբերի՝

i. եթերային կամ արագ գոլորշացող յուղեր

ii. խեժեր և բալզամներ

iii. կենդանական բնույթի հոտավետ նյութեր

Բնական եթերային յուղեր

Իրենից ներկայացնում են տարբեր քիմ. միացություններ: Եթերային յուղերը առկա են մի շարք բույսերի, ծաղիկների նրանց տերևների և ցողունի մեջ: Բնական եթերային յուղերը ստանում են ծաղիկների նաև ամբողջ բույսի վերամշակելու ժամանակ: Իրենց անվանումը ստացել են որովհետև մի կողմից թանձր յուղային նյութեր են, մյուս կողմից արդեն սենյակի ջերմաստիճանի դեպքում շատ հեշտ գոլորշիանում են արձակելով հաճելի հոտ:

Եթերային յուղերը օգտագործվում են, որպես հոտավետ նյութ և որպես բիոլոգիական ակտիվ միջոց:

Եթերային յուղեր



Սոյայի յուղ - Լոբազգի պարունակող յուղ է, ստանում են հասուն սերմերից, հարուստ է վիտամիններով՝ A, E. մի շարք բիոլոգիական ակտիվ նյութերով: Համարվում է բնական էմուլգատոր, ունի խոնավեցնող և վերականգնող հատկություն, ավելացնում են մերսման նյութի մեջ, նարնջագույն է, լավ է ներծծվում: Պահպանվում է մեկ տարի:

Թեյի ծառի յուղ - օժտված է մանրէասպան հատկություններով, լավ է ազդում վնասվածքների դեպքում, հիմնականում պարունակվում է արտաքին օգտագործման միջոցներում: Ունի հակակնճիռային հատկություն:

Իլանգ իլանգ - ունի հաճելի քաղցրավուն հոտ, թարմացնող, մաշկը լավացնող հատկություն, օգտագործվում է օձանելիքների պատրաստման ժամանակ և կոսմետիկ միջոցների մեջ:

Ռոզմարինի յուղ - նուրբ եթերային յուղ է, ունի տաքացնող, արյան շրջանառությունը լավացնող հատկություն: Օգտագործվում է մազերի խնամքի պարագաների մեջ: Նպաստում է մկանների կցկվածությունը թուլացնելուն, ունի թարմացնող, հոգնացությունը հանող հատկություն:

Կամֆորայի յուղ-սառեցնող, մանրէասպան հատկություն, հանում է սպազմը, լավացնում է շնչառությունը, օգտագործվում է մերսման համար նախատեսված նյութերի մեջ:

Թեյի ծառի յուղ - 100-ր տարիներով օգտագործվող միջոց է, որի օգնությամբ փորձել են բուժել մի շարք հիվանդություններ, թեթևացնել մի շարք խնդիրներ: Թեյի ծառի յուղը օգտագործում են, որպես հզոր հակաբորբոքային, ունի հակասնկային, հակավիրուսային հատկություն: Վերացնում է սունկը մաշկի մակերեսից և բորբոքային պրոցեսը ներքին օրգաններից: Շատ հազեցած յուղ է, պարունակում է 100 ից ավել էլեմենտներ: Օգտագործվում է որպես հակասնկային միջոց, ինչպես նաև թեփի բուժման ժամանակ: Գորտնուկների, վնասվածքների, այրվածքների ժամանակ արագացնում է վերքի լավացումը: Ամրացնում է լնդերը, մաքրում է ատամների փառը: Օգտագործվում է մրսածության ժամանակ, բարելավում է մազերի որակը, կանխարգելում է մազերի ոչլոտությունը, համարվում է հակատիզային միջոց:

Օգնում է մոծակի խայթոցից, կանխարգելում է միջատների հարձակումը՝ (60 մլ յուղը լուծում են 200մլ ջրի մեջ և պատում են ամբողջ մարմինը): Ունի հակակորյակային ազդեցություն՝ (մաքուր յուղով օրը 2 անգամ մշակել կորյակ. ցանավորման էլեմենտները): Հաճախ կիրառում են սունկի բուժման ժամանակ (օրինակ՝ եղունգի սունկի ժամանակ օրական 2 անգամ մշակել եղունգը, 2-2,5 ամիս. եթե սնկով աղտահարված է մաշկը ապա մշակում են օրը 2-3 անգամ 2 շաբաթ):



Եթերային յուղերը օգտագործվում են որպես հոտավետ նյութ և որպես բիոլոգիական ակտիվ միջոց:

Խեժեր և բալզամներ


Պեռունական բալզամ - խեժ, որը ստանում են մշտադալար բալզամային ծառից:



Ունի փափուկ հաճելի հոտ, կարող է օգտագործվել առանց ցուցումի: Լավ ամրացնում է և լրացնում է օձանելիքի հոտը:

Կենդանական բնույթի հոտավետ նյութեր

Ամբռա - առումատիկ մոմանման գորշ գույնի կենդանական բնույթի նյութ է, որը ստեղծվում է կաշալոտի մարսողական ապարատում և կազմված է խոլեստերինից: Կոսմետոլոգիայում հաճախակի օգտագործվում է ամբռան, վորպես հոտը ֆիկքսող միջոց: Ամբռան տալիս է կայունություն հասկապես օձանելիքին:



Մուսկուս - ֆերմենտ է, որը արտադրվում է եղնիկների ներքին սեկրեցիայի գեղձերում նաև մուսկուսային առնետների մոտ: Մուսկուսները ունեն կայուն, ուժեղ բնորոշ հոտ, որը կարելի է ֆիքսել և շատ գեղեցկացնել

հոտային կոմպոզիցիան: Բնական մուսկուսները շատ թանկ են և շատ քիչ քանակով են օգտագործվում: Եվ ավելի հաճախ օգտագործվում են բուսական և արհեստական մուսկուսներ:

Կիսասինթետիկ հոտավետ նյութեր

Հեռանիոլ, մեթիլ հեռանիոլ - սպիրտ է, որը եթերացվում է մի շարք ցածր մոլեկուլյար օրգանական թթուներով: Մտացվում են բարդ եթերներ շատ նուրբ հոտով:

Արհեստական հոտավետ նյութեր

Հոտավետ նյութեր - նշվում են մի շարք հոտեր և հապավումների կոմպոզիցիաներ, որոնք բնության մեջ չունեն համանմանը:

Հականեխիչ պահածոյացնող նյութեր

Այս կարևոր նյութերը օգտագործվում են քսուկների պատրաստման ժամանակ, որպեսզի կոսմետիկ միջոցը ունենա երկար պահպանման ժամկետ: Այս նյութերը նաև կանխարգելում են քսուկների մեջ տարբեր վնասկար մանրէների զարգացումը: Մանրէասպան հատկությունները նշվում են լատիներեն A-D տառերը (հակասնկային, տարբեր խմբերի մանրէասպան հատկություններ, վերացնում են մանրէների ձվիկները, սպորները և այլն):

Պահաձոյացնող նյութերը թույլ չեն տալիս նյութերը թուլանան և փչանան: Ամենահաճախ օգտագործվողներն են՝ բենզոաթթուն, սալիցիլաթթուն, նրանց հավելվածքները, պարաբենները, ասկորբինաթթուն, ֆորմալդեգիդը և այլն:

ԹԵՄԱ XV

Պելոիդոթերապիա (Ցեխաբուժություն)

Ցեխաբուժությունը կիրառվել է բժշկության մեջ տարիներ շարունակ: 1825թ. ստեղծվել է առաջին առողջարանը, որից 3 տարի անց բացվել է նմանատիպ առողջարան Ռուսաստանում: Ցեխի բուժական հատկությունները հայտնի են եղել Հին հունաստանում, Եգիպտոսում, Իտալիայում (16րդ դարից), Ֆրանսիայում (17րդ դարից), Գերմանիայում (18րդ դարից): Դեռևս 13րդ դարում Ռուսաստանի Ղրիմ քաղաքում բուժական նպատակներով մարդուն ընկղմում էին ցեխի մեջ 2-3 ժամ: Վերջին տասնամյակում ստեղծվել են ավելի քան 700 հանքային ցեխի առողջարաններ: Այսօր մենք հնարավորություն ունենք ցեխաբուժությունը կիրառել նաև տնային պայմաններում, կոսմետոլոգիական սենյակներում, SPA կենտրոններում և ֆիզիոթերապեվտիկ կենտրոններում:

Ցեխաբուժությունը - դա ցեխի միջոցով (ցեխի ապլիկացիաների) բուժական կոմպլեքս է, որի

հետևանքով լավանում են օրգանիզմի վերականգնողական, փոխանակային (հորմոնալ և վիտամինային փոխանակություն) ֆունկցիաները և հյուսվածքների սնուցումը: Բուժական ցեխը իրենից ներկայացնում է ծովի հատակում կամ ծովափում առաջացած հանքային նստվածքային մի ամբողջ շերտ, որը կազմված է մի շարք օրգանական և հանքային նյութերից: Բուժական ցեխերը նաև պարունակում են բիոակտիվ նյութեր՝ երկաթի օքսիդ, պղինձ, ալյումինիում, ամինաթթուներ, ածխաջրեր, ազոտ, հորմոնանման և վիտամինանման նյութեր: Հաճախ ցեխերն ունեն նաև մանրէասպան հատկություն:



Բուժական ցեխը իր մեջ պարունակում է 6 տիպի իոններ՝ Na, Mg, պղինձ և այլն:

Բուժական ցեխերի դասակարգումը.

- Անօրգանական ցեխեր
- Օրգանական ցեխեր
- Խառը տիպի ցեխեր
- Տորֆ պարունակող ցեխեր

- Արհեստական գեխեր
- Հրաբխային գեխեր

Ցեխերի ազդեցության մեխանիզմը կատարվում է մի քանի ուղղությամբ: Դրանք են՝ ջերմային, մեխանիկական, ֆիզիկական և քիմիական: Արտաքինից գեխը օգտագործելիս այս 3 գործոնները մաշկի մեջ գտնվող նյարդային ռեցեպտորների գրգռում են առաջացնում, որի արդյունքում Կ.Ն.Հ.-ի վրա տեղի է ունենում հզոր, հիմնականում խթանող ազդեցություն: Արդյունքում խթանվում է մի շարք հորմոնների սինթեզը՝ հիպոֆիզի, մակերիկամների, սեռական գեղձերի: Տաքացված բուժական գեխը շատ երկար է պահում ջերմությունը, այն դանդաղ փոխանցում է օրգանիզմին, ինչի հաշվին էլ ցեխաբուժության պրոցեսը դարձնում է շատ հաճելի: Ցեխը նաև ազդում է մի շարք քիմիական պրոցեսների վրա, փոխելով Ph-ը: Մի շարք ցնդող նյութեր լուծվում են ճարպերի մեջ, դրանց հետ մեկտեղ նաև ամինաթթուները, օրգանական նյութերը, հորմոնատիպ նյութերը, և մաշկի միջոցով այս ամեննը ներթափանցում է արյան մեջ: Երբ գեխը տաք վիճակում է, այս քիմիական պրոցեսները կատարվում են ավելի արագ: Ցեխի մեջ պարունակվում են մի շարք միկրոօրգանիզմներ, որոնք արտադրում են բիոակտիվ միացումներ, ինչն էլ ցեխին տալիս է մանրէասպան հատկություն: Ցեխի ազդեցությունը անդրադառնում է և՛

կենտրոնական և՛ վեգետատիվ Ն.Հ. (նյարդային համակարգ)-ի վրա:

Տեղային բուժման ժամանակ նկատվում են ցեխի նաև ցավազրկող և հակաբորբոքային ազդեցությունները: Օգտագործելիս դեմքի մաշկին թողնում է հակակնճռային ազդեցություն, վերականգնում է կոլագենային և էլաստինային թելերի սինթեզը: Ցեխաբուժության ժամանակ հիմնականում օգտագործվում են տաք ցեխ 35-37 աստիճան, որը ունի հանգստացնող ազդեցություն, եթե ցեխը 40-44 աստիճան է, ապա ունի ներծծող ազդեցություն և հակաբորբոքային էֆեկտ: Ցեխաբուժությունից առաջ հարկավոր է բժշկի խորհրդատվություն, որի ժամանակ հաշվի է առնվում ընդհանուր առողջական վիճակը, մաշկային հիվանդությունների առկայությունը:

Ցեխաբուժության տևողությունը հիմնականում 15-20 րոպե է, հազվադեպ 30 րոպե: Պրոցեդուրան կարելի է կրկնել 1-2 օր, 3 րդ օրը հանգիստ, հիմնականում 12-15 պրոցեդուրա: Հնարավոր է այն ցեխաբուժությունը զուգակցել գերձայնի հետ: Հարկավոր է ուշադիր լինել օրգանիզմում կատարվող փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ապլիկացիայի ժամանակ և դրանից ժամեր անց: Բուժումն ունի կուտակային էֆեկտ: Ցեխաբուժությունը նաև կիրառվում է մաշկային հիվանդությունների բուժման և կոսմետոլոգիայի մեջ: Շատ բարենպաստ է պսորիազի,

իխտիոզի, հիպերտրոֆիկ սպիերի (որոնք կարող են առաջանալ վնասվածքից, այրվածքից) ժամանակ, լայնորեն կիրառվում է նաև օջախային մազաթափության ժամանակ: Ցեխաբուժությունը հակացուցված է սուր բորբոքային հիվանդությունների, ուռուցքների, ձվարանների կիստայի, երիկամների հիվանդությունների, հիպերտոնիայի 2րդ աստիճանի, թուրքի, լայնացած երակների և թոքախտի ժամանակ:

Կոսմետոլոգիայում օգտագործում են ցեխային կոսմետիկ դիմակներ, որոնք ունեն չորացնող, ճարպագերծող ազդեցություն: Ցեխի ազդեցությամբ լավանում է արյան և ավշի հոսքը, մաշկի շնչառական և ռեգեներացիոն ֆունկցիաները, ցեխը կլանում և մաշկից հեռացնում է տոքսինները, կուտակված ճարպը և փոշին, արդյունքում լավանում է մաշկի գույնը, առաձգականությունը, մաշկը դառնում է հարթ: Լավ ազդեցություն ունի նաև գլխամաշկի վրա, օգտագործվում է ճարպոտ մաշկի, սեբորեայի, կորյակավոր ցանավորման, թորշոմած ծերացող մաշկի, կելոիդային սպիների, օջախային կամ ընդհանուր մազաթափության, ցելյուլիտի ժամանակ: Հակացուցված է մաշկաբորբերի, ռոզեոլաների, մազակալման ժամանակ: Նախապես տաքացված ցեխը կարելի է մի փոքր տաքացնել 36-37 աստիճան և տաքածել մաշկին: Դրանից առաջ կարելի է մշակել մաշկը գոլորշիով,

կարելի է կատարել ամեն օր կամ օրը մեջ, 10-12 պրոցեդուրա:

Բուժական նպատակով ցելսը օգտագործում են նաև գերձայնի հետ: Մշակվող հատվածը ծածկում են թանգիֆոլ, ցելսը տարածում են 1-2 սմ հաստությամբ, որից հետո մշակում են գերձայնով: Ցելսի ազդեցությունը չի ավարտվում միայն այդ մի քանի բույսերով, որի ժամանակ ցելսը տարածված է մաշկի վրա, այլ նաև դեռ 24 ժամվա ընթացքում նկատվում են մի շարք ֆիզիոլոգիական փոփոխություններ. որոնք կատարվում են օրգանիզմի մեջ: Կուրսային բուժման դեպքում նկատվում է կուտակային ազդեցություն; Ցելսաբուժությունը լայնորեն կիրառվում է փսորիազի, նեյրոդերմիտի, քրոնիկ էկզեմաների, կարմիր տափակ որքիների, ինչպես նաև այրվածքների, ցրտահարությունների, հյուսցվածքների սնուցման խանգարման ժամանակ:

Դիմահարդարման մեջ կիրառում ենք սեբորեայի, կորյակների բուժման, մազաթափության, եղունգների հիվանդությունների և մի շարք այլ հիվանդությունների ժամանակ:

Ցելսի դիմակ

Ցելսից պատրաստված դիմակները հիմնականում ունեն չորացնող, ճարպագերծող ազդեցություն, լավացնում են արյան և ավշի հոսքը, անոթալայնիչ են,

արդյունքում լավանում է հյուսվածքների փոխանակային ֆունկցիան, սնուցումը, շնչառական ֆունկցիան, արագանում են օքսիդացնող և վերականգնող պրոցեսները, վերականգնվում է մաշկի առողջ գույնը, մաշկը լինում է ավելի առաձգական, ունենում է թավշե տեսք, ներծծվելով՝ դիմակը ազդում է նաև դիմային մկանների վրա՝ հարթեցնելով կնճիղները: Մաշկի մակերեսից հեռացնում է արգասիքները, ճարպը և փոշին, ունի մաքրող և մանրէասպան հատկություններ: Դիմակը կարելի է օգտագործել նաև գլխի մազաձածկ մասում: Այն ամրացնում է մազաբույսերը և խթանում է մազաճը:



Դիմակի ցուցումները

1. Ճարպոտ մաշկ
2. Սերորեա
3. Կորյակացան
4. Թորշոմած մաշկ
5. Կարելի է դնել դեմքին և պարանոցին

6. Կելոիդ սպիներ
7. Այրվածքներից մնացած սպիներ
8. Մի շարք մազերի հիվանդություններ՝ օջախային մազաթափություն, վաղաժամ մազաթափություն
9. Մաշկի վաղաժամ ծերացում
10. Ցելյուլիտի բուժում
11. Կարելի է մշակել նաև լանջաբացվածքը

Դիմակի հակացուցումները

1. Մաշկաբորբեր
2. Մնկային հիվանդություններ
3. Վարդագույն կորյակներ
4. Լայնացած անոթներ
5. Անոթային ուռուցքներ
6. Մազակալում
7. Նորագոյացություններ

Նախապես ցեխը տեղադրում են պարկի մեջ, դնում են տաք ջրի մեջ՝ մինչև ցեխի ջերմաստիճանը լինի 36-37 աստիճան ցելսիուս, որից հետո տարածում են մաշկին և թողնում են 15-30 րոպե: Կարելի է նախապես մշակել գոլորշու բաղնիքի օգնությամբ կամ կատարել

պարաֆինի դիմակ: Դիմակի ժամանակ ցանկալի է, որ մկանները լինեն անշարժ: Պետք է կրկնել 10-12 դիմակ, օրը մեջ կամ ամեն օր, որից հետո կատարել 20 օրվա ընդմիջում: Թեփի, օջախային մազաթափության և սերոբեայի ժամանակ ցեխը տարածում են վրձնի օգնությամբ՝ գլխի մաշկին, գլուխը ծածկում են պոլիէթիլենային տոպրակով, բրդյա շորով կամ սրբիչով, պահում են 20-25 րոպե, որից հետո մաշկը ցայում են առանց լվացող միջոցի, չեն կիրառում ֆեն, կրկնում են շաբաթը 1-2 անգամ: Եթե հանկարծ առաջանում է մաշկի գրգռում, սրացում, ապա 2-3 օրով ընդհատում են բուժումը կամ կրճատում են դիմակի ժամանակը:

ԹԵՄԱ XVI

Կոսմետիկ միջոցներում հաճախ

օգտագործվող դեղանյութեր

Կոսմետիկ միջոցների մեջ հաճախ օգտագործվող դեղանյութերից են սալիցիլաթթուն, բորաթթուն, պերհիդրոլը, ծծումբը, Zn -ի օքսիդը և մի շարք մանրէասպան միջոցները: Ցանկացած միջոց օգտագործելուց առաջ դիմահարդարը պետք է պատկերացնի տվյալ դեղանյութի ազդեցությունը և՛ մաշկի, և՛ ընդհանուր օրգանիզմի վրա: Մասնագետը պետք է տիրապետի տվյալ դեղանյութի պատրաստման

պահանջներին և ձևին, ինչպես նաև օգտագործելիս պետք է պահպանի անվտանգության կանոնները, անցանկալի հետևանքներից ու բարդություններից խուսափելու համար, որոնք կարող են առաջանալ տվյալ դեղանյութի օգտագործումից:

Մալիցիլաթթու

Մալիտակ կամ դեղնավուն (բյուրեղների) փաթիլներից կազմված նյութեր են, լավ են լուծվում ճարպերի և սպիրտի մեջ, չեն լուծվում ջրի մեջ: Եթե սալիցիլաթթվի քանակությունը ավելի շատ է, ապա նյութը բյուրեղանում է նստվածքի ձևով: Կոսմետոլոգիայում հիմնականում օգտագործվում են սալիցիլաթթվով պատրաստված քսուկները, որոնք ցանկալի է օգտագործել սահմանափակ հատվածների վրա: Մալիցիլաթթվի ցածր տոկոսներով պատրաստված միջոցները ազդում են կերատոլիտիկ, այսինքն՝ կարող են հեշտությամբ հեռացնել եղջերային թեփուկները՝ խախտելով եղջերային շերտում բջիջների կապը: Զուգահեռ ճնշում են ճարպարտադրությունը, և արդյունքում լավանում է մաշկի թափանցելիությունը: Նաև ունի մանրէասպան հատկություն, կարող է հանգստացնել քորը:

Կոսմետոլոգիայում օգտագործվում են սալիցիլաթթվի 1%-անոց և 2%-անոց սպիրտային լուծույթները:

Սալիցիլաթթվի 3 %-անոց լուծույթը մի քանի օր օգտագործելուց հետո մաշկը չորանում է, թեփոտվում, այսինքն՝ այս լուծույթը կարելի է օգտագործել կա՛մ կետային, կա՛մ բժշկի նշանակումով և նրա հսկողության տակ: Առօրյա աշխատանքում դիմահարդարը կարող է օգտագործել նաև 5% -անոց լուծույթը (օգտագործվում է միայն կետային՝ թարախաբշտիկները վերացնելու համար, մաշկային հիվանդությունների ժամանակ, կոշտուկների բուժման ժամանակ): Նախկինում դիմահարդարները օգտագործում էին 10-20%-անոց լուծույթները՝ խորը շերտազատման նպատակով (միջին խորության պիլինգների նախամայրն էր):

Սալիցիլաթթուն կարելի է օգտագործել քուկների ձևով է կոշտուկների հեռացման ժամանակ: Պետք է նշել, որ ճարպերի հետ խառնվելիս սալիցիլաթթուն հեշտությամբ կարող է թափանցել մաշկի խորքերը և մեծ հատվածների վրա օգտագործելիս կարող է առաջանալ ինտոքսիկացիա: Ժամանակակից դիմահարդարման մեջ լայնորեն օգտագործվում են սալիցիլաթթվի 0.5-2%-անոց լուծույթները, 5-15%-անոց քուկները, սալիցիլաթթվային պիլինգները, մի շարք դեղորայքային միջոցներ, որոնք օգտագործվում են բուժական նպատակով (լորինդեն A դիպրոսավիկ և այլն): Ցածր տոկոսի սալիցիլաթթուն կերատոլիտիկ է, իսկ բարձր տոկոսը գրգռում է մաշկը:

Բորաթթու

Սպիտակ գույնի, արտաքնապես կերակրի աղը հիշեցնող միջոց է: Բյուրեղներին ձեռք տալիս մի փոքր յուղայնության զգացողություն է առաջանում: Չի լուծվում սառը ջրի մեջ, լավ է լուծվում տաք ջրի և գլիցերինի մեջ: Ջրային լուծույթները ունեն թույլ թթվային ռեակցիա: Օգտագործվում է որպես մանրէասպան, հակաբորբոքային, գրգռվածությունը հանգստացնող պրեպարատ: Մաշկին տարածելով՝ բորաթթուն չի փոխում մաշկային սպիտակուցների որակը, չի գրգռում մաշկը, ջրազերծում է մաշկը, շատացնում է եղջերային շերտի թեփուկների քանակությունը:

Դիմահարդարման մեջ հիմնականում օգտագործվում է բորաթթվի 2-3 %-անոց ջրային լուծույթները: Բորաթթվի 3% -անոց լուծույթը օգտագործվում է, որպես թույլ թթվային տոնիկ: Նպանատիպ լուծույթով պատրաստում են նաև փոշենման դիմակները: Այս լուծույթը նաև կիրառվում է սառը թրջոցների ձևով, ունի հանգստացնող, հակաբորբոքային, լայնացած անոթները նեղացնող հատկություն: Չի թույլատրվում բորաթթվի լուծույթը օգտագործել մեծ հատվածներում, քանի որ ներծծվելով մեծ մակերեսից կարող է առաջացնել թունավորման երևույթներ: Բորաթթուն ավելացվում է նաև դիմակների մեջ, մածուկների

պատրաստման ժամանակ, լայնորեն կիրառվում է քսուկների մեջ նաև մաշկային հիվանդությունների ժամանակ: Օգտագործվում է նաև օճառի ձևով, հակաբորբոքային է, կարող է օգտագործվել կորյակացանի ժամանակ:

Ծծումբ

Լայնորեն կիրառվում է մաշկային հիվանդությունների բուժման ժամանակ, նաև կոսմետիկ պրոբլեմները լուծելու համար (սեբորեայի, կորյակավոր ցանավորման բոլոր ձևերի, դեմոդեկոզի, մազերի հիվանդությունների ժամանակ): Կոսմետոլոգիայում օգտագործվում են ծծմբի բոլոր տեսակները:

Նստվածքային ծծումբ

Սև դեղնականաչավուն փոշի է և ունի բնորոշ հոտ: Հաճախակի օգտագործվում է մաշկային հիվանդությունների ժամանակ (քուս, ոջլոտություն, դեմոդեկոզ):

Ունի հակապարազիտային և հակասնկային հատկություններ: Դիմահարդարման մեջ տասնյակ տարիներ արդեն օգտագործվում են թափահարուկներ, որոնք բաղկացած են ծծմբի և ստրեպտոցիդի սպիրտային լուծույթներից: Ցածր տոկոս պարունակող միջոցները օժտված են կերատոլիտիկ հատկություններով, օրինակ՝ կորյակավոր ցանավորման ժամանակ մենք օգտվում ենք ծծմբի

կերատուլիտիկ հատկություններից՝ հեռացնելով մազարմատի շուրջը առաջացած գերեղջերացումը: Վերոնշյալից գատ միջոցը ունի հակաբորբոքային, մանրէասպան, սնկերը վերացնող, հատկություն, նաև ճնշում է ճարպարտադրությունը: Լայնորեն կիրառվում է թարախաբշտիկային ցանավորումների ժամանակ:

Մաքուր ծծումբ

Մաքուր փոշի է, որն ունի վառ դեղին գույն, փխրուն է, չի լուծվում ջրի մեջ, չի օգտագործվում կոսմետիկ պատրաստուկների մեջ, օգտագործվում է փոքր քանակությամբ՝ 1-2 պտղունց: Դնում են լեզվի տակ՝ օրական 1-2 անգամ: Օգտագործվում է կորյակավոր ցանավորման բուժման ժամանակ:

Պերհիդրոլ

Մա ջրածնի պերօքսիդի 33% -անոց ջրային լուծույթն է: Դիմահարդարման մեջ օգտագործվում է մի շարք աշխատանքային լուծույթների ձևով: Լայնորեն օգտագործվում է պերհիդրոլից ստացված 3% և 6%-անոց ջրածնի պերօքսիդի լուծույթները: 33%-անոց պերհիդրոլը առանց հոտի, թափանցիկ, ջուր հիշեցնող լուծույթ է: Մաշկի հետ շփվելիս կարող է առաջացնել քիմիական այրվածք (մաշկը սպիտակում է, սաստիկ մրմռում): 3%-անոց լուծույթը ստանալու համար 33%-անոց պերհիդրոլը խառնում ենք ջրի հետ՝ 1:10 հարաբերությամբ: 3%-անոց լուծույթը օգտագործվում է

դեմքի մաքրման ժամանակ, կարելի է օգտագործել դիմակների պատրաստման ժամանակ՝ որպես լուծիչ:

Օգտագործում են նաև որպես հակաբորբոքային միջոց՝ թարախաբշտիկների ժամանակ, թարախային խոռոչները լվանալու ժամանակ, այրունահոսությունները կանգնեցնելու նպատակով: Խառնվելով թարախի և այրան հետ առաջանում է ազատ թթվածին, որը պղպջակների տեսքով արտածորում է դեպի առողջ մաշկը՝ իր հետ հեռացնելով թարախը և կանգնեցնելով արյունահոսությունը: 6%-անոց ջրածնի պերօքսիդը չի օգտագործվում բուժական նպատակով, սակայն լայն կիրառվում է որպես մանրէասպան միջոց՝ աշխատանքային գործիքները մշակելու ժամանակ: 6%-անոց լուծույթի մեջ տեղադրելով լվացած գործիքները 3 ժամով, ստանում ենք ախտահանված, ստերիլ գործիքներ: 6%-անոց լուծույթը ստանալու համար պերիդոլը ջրի հետ խառնում ենք 1:5 հարաբերությամբ:

ԹԵՄԱ XVII

Թալասոթերապիա (Աղաբուժություն)

Թերապևտիկ մի շարք միջոցառումներ են, որոնց ժամանակ օգտագործվում են ծովի ջուրը, աղը, ջրիմուռները, տիդմը և այլն: Դեռ մ.թ. 3000 տարի առաջ ջրիմուռներով բուժում էին վահանաձև գեղձը:

Ջրիմուռները, որպես դեղամիջոց կիրառվել են մ.թ. 2700 տարի առաջ: 1887թ.-ից կիրառվում է թալաստթերապիա հասկացությունը: Ծովի ջուրը պարունակում է մեծ քանակությամբ միկրո և մակրոէլեմենտներ (K, Mg, Ca, Fe, Cl, J, մկնդեղ, քիչ քանակությամբ արծաթ, ոսկի, ռադիում): Ծովի ջրում լողանալիս մենք ստանում ենք միկրո և մակրոէլեմենտների մեծ քանակություն: Այս թերապիան նյարդային համակարգի վրա նույնպես հանգստացնող ազդեցություն ունի: Դիմահարդարման մեջ նաև մեծ ազդեցություն ունեն ծովային աղերը: Բնության մեջ տարբերվում են մի քանի տեսակի աղեր, օրինակ՝ կերակրի աղ, ծովի աղ: Ծովի աղերը ևս լինում են շատ տարբեր ոչ այնքան որակապես, ինչքան՝ քանակապես: Որակապես առանձնացվում է Մեռյալ ծովի աղը, որը կարելի է գնել անգամ դեղատներում: Ծովի աղը մեկ լիտր ջրի մեջ պարունակում է 6-35գ աղ, որից 90%-ը կազմում են NaCl և 10%-ը Ca-ի, Mg-ի, K-ի, Br-ի և J-ի աղերը: Մեռյալ ծովի ջրում աղի պարունակությունը շատ մեծ է, ընդհամենը 4-8%-ը NaCl-ն է, իսկ 90%-ը 40-ից ավելի էլեմենտներ, դրանք են՝ Ca, Mg, Br, K, J, S, Fe: Մեռյալ ծովը համարվում է աշխարհի ամենաաղի ծովը, Աղի քանակությունը ծովում գերազանցում է մնացած ծովերին և օվկիանոսներին: Մեռյալ ծովի բուժական ազդեցությունյան մասին հիշատակվում է Աստվածաշնչի մեջ: Այն գտնվում է ծովի մակարդակից 400մ-ից ավելի ներքև: Ցածր խոնավությունը, հազվադեպ

տեղացող անձրևը և ձյունը, համեմատաբար ընդհանուր բարձր ջերմաստիճանը ծովի հատվածում առաջացնում է գարնանահրաշ կլիմա: Ծովի աղը լայնորեն կիրառվում է մի շարք կոսմետիկ պրոցեդուրաների մեջ: Առավել հաճախ այդ աղը օգտագործվում է պիլինգների և պարուրումների ժամանակ: Ծովի աղով կատարվող պիլինգները լայնորեն կիրառվում են մաշկի, մարմնի, ձեռքերի և ոտքերի խնամքի ժամանակ:

Աղերով կատարվող պրոցեդուրաներ - Աղը տարածում են մաշկի մակերեսի վրա, այն կուտակվում է ծալքերի, ճարպա և քրտնագեղձերի մեջ, մասամբ մնում է այդ տեղերում և ունենում է ջերմային ազդեցություն: Օրվա ընթացքում օրգանիզմի մեջ կուտակվում են միզանյութը, միզաթթուն, ֆոսֆատները, որոնք արտադրելով մաշկի մակերեսին կարող են տարբեր ցանավորումների պատճառ դառնալ: Աղով կատարվող կոսմետիկիական պրոցեդուրաները խթանում են քրտնարտադրությունը մաշկի մակերեսի վրա, արդյունքում՝ տեղի է ունենում դետոկսիկացիա, անցնում է մկանների ջղաձգությունը: Ծովային ջուրը 3 անգամ ավելի է կարողանում է թափանցել մաշկի խորքերը քան հասարակ ջուրը՝ իր հետ տանելով միկրո և մակրոէլեմենտները: Ծովի ջուրը նաև ազդում է նյարդային վերջույթների վրա՝ վերացնելով սթրեսը և ստեղծելով խաղաղություն, հանգստության էմոցիոնալ դաշտ: Ճարպա և քրտնագեղձերի, մազարմատների միջոցով հանքային

աղերը, օրգանական նյութերը, բիոակտիվ նյութերը ներթափանցում են մաշկի մեջ, լավացնում է մաշկի դիմադրողականությունը, խթանում իմունիտետը, կենսորոնական ներվային համակարգից հեռացվում է լարվածությունը, մաշկից հեշտությամբ հեռացվում են արգասիքները, կարգավորվում է արյան շրջանառությունը, փոխանակային պրոցեսները ոսկրերում, շարակցական հյուսվածքում, աճառային հյուսվածքում, կտրուկ նվազում են ալերգիկ երևույթները: Մեռյալ ծովի աղը կարելի է օգտագործել նեյրոդերմիտի, դիաթեզի, մաշկաբորբերի բուժման ժամանակ: Կիրառելի է նաև փոքրիկների համար: Միկրոէլեմենտները արագացնում են օրգանիզմի բոլոր բիոքիմիական պրոցեսները, ինչի արդյունքում ստանում ենք երիտասարդ, թարմացած տեսք: Ծովաջրով և աղով կատարված պրոցողորանները նաև մաշկից հեռացնում են դրական լիցքերը, որոնք առաջացել են մաշկի մեջ մեծ քանակությամբ սինթետիկ հագուստը կրելու արդյունքում: Մեռյալ ծովը թույլ հիմնային է, pH= 8,5-ի, ինչի հաշվին օժտված է մաքրող հատկություններով՝ մաքրում է մաշկի ծակոտիները, իոնները թափանցում են մաշկի խորքերը:



Աղը և աղաջրերը օգտագործում են սիրտ-անոթային, հենաշարժողական համակարգի հիվանդությունների, փսորիազի, ֆուրունկուլյոզի, կորյակավոր ցանավորման, ալրալեցիաների ժամանակ: Ծովաջրով լողանքը ունի հզոր մաքրող ազդեցություն մաշկի վրա: Ծովաջրի լողանքը պետք է ունենա 37C ջերմաստիճան, 100գ աղը պետք է լուծել ջրի մեջ: Ամեն անգամ պետք է շատացնել աղի քանակությունը, տևողությունը 20-30 րոպե, 10-15 ամգամ, պետք է կրկնել 3 ամիս հետո: Երեխաների դեմքում 5-10 լողանքի համար տևողությունը պետք է լինի 7-10 րոպե, ամեն օր, 8-10 պրոցեդուրա: Լողանքից հետո մաշկը պետք է ցայել և հանգստանալ: Կարելի է նաև աղով տրորել մաշկը 30-60գ աղ լուծել քիչ քանակությամբ, 36-39C ջրի մեջ, շփել մաշկը և թողնել 5-10 րոպե, ցայել տաք ջրով: Աղից կարելի է պատրաստել նաև քերուկ 1-2գ աղը խառնել սերուցքի կամ օձառի հետ, տարածել մաշկին՝ ըստ մերսման գծերի, կատարել թեթև մերսում կամ օգտագործել բրոսածը, թողնել 5-10 րոպե, որից հետո մաշկը լվանալ առատ ջրով: Կարելի է կրկնել 7-10 օրը

մեկ անգամ: Այդ սկրաբով կարելի է մաքրել և դեմքը, և մարմինը: Կարելի է կատարել նաև պիլինգ՝ ծովային աղը պետք է լուծել բուսական յուղով ստացված խյուսով, տրորելով մշակել մարմինը, թողնել մի քանի րոպե, որից հետո մաշկը ցայել տաք ջրով:

Աղի ապլիկացիաները լավ են ազդում չիբանի, մազաթափության, սալջարդի ժամանակ: 1լ ջրի մեջ լուծել 30-45գ աղ, ստացված աղաջրի մեջ թրջել 3-4 տակ ծալած թանզիֆը, դնել մաշկի մշակվող հատվածին և պահել 20-30 րոպե:

ԹԵՄԱ XVIII

Կոսմետիկ պատրաստուկների դասակարգումը

Կոսմետիկ միջոցները դասակարգվում են մի քանի ձևով.

Ըստ իրենց ազդեցության՝

ա) **մաքրող միջոցներ** - կարող են պարունակել մրգաթթուներ, քերուկներ, էնզիմներ, ճարպեր և մի շարք քիմիական տարրեր, որոնց նպատակն է մաշկի վրայի կուտակված ճարպը և փոշին հնարավորինս հեռացնել մաշկի մակերեսից:

բ) **տոնուսավորող նյութեր** - նյութեր, որոնք վերականգնում են մաշկի թթվածնությունը, ավարտում են մաշկի մաքրումը և նպաստում են մաշկի առաձգականության լավացմանը:

գ) **խոնավեցնող միջոցներ** - պարունակում են մի շարք նյութեր, օրինակ՝ հիալուրոնաթթու, ռիբոսոմներ, պոլիոլներ, որոնք բացի խոնավեցումից, ջուրը կարող են նաև պահել մաշկի մեջ, այս միջոցների պարունակում են նյութեր, որոնք շատ նուրբ շերտազատում են մաշկը:

դ) **սնուցող նյութեր** - սրանք մի մեծ խումբ միջոցներ են, որոնք վերականգնում են, սնուցում են, նպաստում են մաշկի երիտասարդացմանը: Դրանք կարող են լինել և Vit-ներ և ակտիվ նյութեր, ամինաթթուներ, պանտենոլ:

ե) **պաշտպանող միջոցներ** - քսուկներ (արևապաշտպան, ցրտից) պաշտպանող միջոցներ և սիլիկոնային քսուկներ:

Ըստ իրենց կոսմետիկ ձևի՝

- ա) քսուկներ
- բ) դիմակներ
- գ) լուծույթներ
- դ) քերուկ քսուկներ
- ե) պիլինգներ
- զ) ցանափոշի
- է) շիճուկներ
- ը) դոնդողներ

- թ) սրվակներ
- ժ) շամպուններ
- ի) ներկեր և այլն:

Ըստ մարմնի հատվածի՝

- ա) դեմքի
- բ) կոպերի
- գ) շուրթերի
- դ) պարանոցի
- ե) կրծքավանդակի
- զ) մարմնի
- է) գլխի և մազածածկ մասի
- ը) ձեռքերի, ոտքերի և եղունգների

Ըստ մաշկի ճարպարտադրության (տեսակի)՝

- ա) չոր
- բ) ճարպոտ
- գ) նորմալ
- դ) պրորլեմատիկ
- ե) զգայուն
- զ) խառը մաշկ

Ըստ տարիքի՝

ա) շատ երիտասարդ մաշկի համար (հիմնականում կազմված է մաքրող, պաշտպանող և խոնավեցնող նյութերից) 17-20 տարեկան,

- բ) երիտասարդ մաշկի համար՝ 20-30 տարեկան,
- գ) հասուն տարիքի մաշկի համար՝ 35+-45 տարեկան,
- դ) ծերացող մաշկի համար՝ 45 և ավելի,
- ե) ծեր մաշկի համար՝ սրանք բիոլոգիական ակտիվ նյութերով հարուստ միջոցներ են՝ հորմոններ, յուղեր:


Ըստ սեռի՝

- ա) կանանց
- բ) տղամարդկանց

ԹԵՄԱ XIX

Մաշկի խնամք

Մաշկի խնամքը գործընթաց է, որը պաշտպանում է մաշկի ամբողջականությունը, բարձրացնում է արտաքին տեսքը և թարմացնում մաշկը: Յուրաքանչյուր տարիք և եղանակ պահանջում է առանձնահատուկ խնամք:



Տարիքային խնամք

15-20 տարեկան

Այս տարիքում կնոջը մեծ անհանգստություն է պատճառում ճարպագեղձերի ուժգնացած գործունեությունը: Մաշկի ավելորդ ճարպաարտադրության հետևանքով դեմքը յուղոտվում է, այս փուլում բարձր է բորբոքվելու վտանգը:

20-25 տարեկան

Այս տարիքում առհասարակ պարտադիր չէ գնել թանկարժեք միջոցներ մաշկը խնամելու համար, բավարար է բնական մթերքներից պատրաստված դիմակներ դնելը:

25-30 տարեկան

Հայտնի է որ, արևայրուքի թերթևակի թխությունը ծածկում է դեմքի թերությունները, թարմ ու առողջ տեսք է տալիս: Սակայն արևի տևական ազդեցության հետևանքով խախտվում է մարմնի ջերմափոխանակությունը, քայքայում է մաշկի առաձգականությունն ապահովող երկու սպիտակուցները, կոլագենը և էլաստինը՝ մաշկը կորցնելով առաձգականությունը, ծածկվում է կնճիռներով: Այս գործընթացը դանդաղեցնելու համար հարկ է օգտագործել դոնդողանման նյութեր պարունակող մթերքներ:

30-35 տարեկան

Այս շրջանում կլինը երիտասարդությունից անցնում է հասուն տարիք: Այս տարիքում նախ և առաջ պետք է ինքնաճանաչման ճիշտ ուղի բռնել: Մաշկը պետք է խնամել բնական ծագում ունեցող միջոցներով:

35-40 տարեկան

Այս տարիքում առաջանում են առաջին կնճիռները, նաև սկսում է թառամել մաշկը: Եթե անցյալում կարելի էր մաշկի խնամքին անրադառնալ երբեմն երբեմն, ապա այս տարիքում մաշկի խնամքը պիտի կատարվի հանգամանորեն ու պարբերաբար:

40-50 տարեկան

Այս տարիքում կնոջ օրգանիզմը ունենում է մեծ փոփոխություններ, այդ իսկ պատճառով մաշկը կորցնում է առանձգականությունն ու փափկությունը: Այս տարիքում պետք է ցուցաբերել ուշադրություն կնոջ նկատմամբ և պետք է մաշկի ճիշտ և ռացիոնալ խնամքին հետևել:

50-55 տարեկան

Մաշկի բնական ծերացումը շարունակվում է, նրա բջիջները կորցնում են իրենց բաղադրության մեջ եղած հեղուկը: Այն կանայք ովքեր անտեսել են առողջ ապրելակերպը, անխնա ծախսել են իրենց կենսական ուժերը, չափից շատ օգտագործել են քիմիական

միջոցներ կանգնում են տխուր փաստի առաջ: Պետք է ռացիոնալ խնամել մաշկը, բանական միջոցներով:

Մեզոնային խնամք

Գարնանային խնամք

Ձմռան ցրտերից հետո մաշկն առավել լուրջ խնամքի կարիք է զգում: Չոր մաշկ ունեցողներն առավել չորություն ու կոպտություն են զգում, յուղոտ մաշկն ասես բորբոքված տեսք է ստանում, կնճիռներն էլ ավելի տեսանելի են դառնում, ի հայտ են գալիս բշտիկներ:

Ձմռանը վնասվում է մաշկի պաշտպանիչ շերտը: Ակտիվ արևը միայն սրում է այդ խնդիրները: Բացի այդ գարնանը չեն բավարարում օրգանիզմում վիտամինների քանակը: Այս եղանակին պետք է լվացվել եռացած գոլացրած ջրով: Մաշկի վրա բարերար ազդեցություն է ունենում բուսական թուրմերով լվացումներ, օրինակ դադձի, մաղադանոսի կամ երիցուկի: Դեմքը լվանալիս պետք է օգտագործել սառցե կտորներ: Գարնանը մաշկը ունի հավելյալ սնուցման կարիք, ինչպես դրսից այնպես էլ օրգանիզմից: Մաշկին օգնելու համար առաջին հերթին պետք է ճիշտ սնվել, դուրս բերել օրգանիզմից թունավոր նյութերը, քանի որ մաշկը աղիների հայելին է:

Ամառային խնամք

Ամառը պետք է մաշկը շատ նուրբ մաքրել և խնամել: Այս ժամանակահատվածում ցանկալի է չօգտագործել դեմքի սկրաբներ, իսկ ընտրության դեպքում միայն մանր գնդիկներով և բնական հիմքով քսուկներ: Ամռան տապին մաշկը չորանում է և կորցնում է իր էլաստիկությունը, վիճակն էլ ավելի չբարդանալու համար պետք է չօգտագործել սպիրտային հիմքով քսուկներ, մաշկը պետք է պահպանի իր բնական խոնավությունը:



Աշնանային խնամք

Աշնանը մաշկը հատուկ խնամքի կարիք ունի: Տարվա այս եղանակին պետք է նուրբ մաքրում կատարել, քանի որ մաշկը վնասված է ոչ միայն ամռան արևից, այլև եղանակի փոփոխությունից: Պետք է վերականգնել մաշկի հարթությունն ու ձգությունը: Աշնանը պետք է օգտագործել մաշկը վերականգնող ու պաշտպանող քսուկներ, ճարպային բաղադրամասերով: Պետք է

ապահովել մաշկի անհրաժեշտ խոնավությունը և օգնել դուրս բերել տոքսինները:

Ձմեռային խնամք

Ձմռանը մաշկը նույնպես խոնավության կարիք է զգում: Ցուրտ դրսից-ներս, տաքի և սառի հակադրությունը հաղթահարելու համար բջիջները զգալի քանակությամբ խոնավաթյուն են ծախսում: Նշանակում է՝ մաշկը մշտապես պետք է խոնավացնել՝ օգտագործել խոնավացուցիչ բաղադրիչներով քսուքներ: Այդ սուր-հիդրատանտներն անհրաժեշտ են բոլոր տեսակների մաշկերին. յուղոտ մաշկը խոնավության պակաս այնքան չունի, որքան չոր մաշկը:



Ձմռանը խոնավացնող քսուքը դեմքին պետք է քսել տնից դուրս գալուց ոչ ուշ, քան կես ժամ առաջ: Այլապես կարող է առաջանալ հակառակ երևույթը. դեմքը կարող է, թեփոտվել կամ ծածկվել բծերով: Դա ալերգիկ երևույթ չէ. պարզապես քսուքի խոնավացնող բաղադրիչը ցուրտ

եղանակին սատչում է, և այդ դեպքում մաշկի վրա նրա ներգործությունը կարող է ոչ թե օգուտ, այլ վնաս բերել:

Ձմռանը պարտադիր կարգով պետք է խոնավացնող հիմքի վրա բարակ շերտով քսել յուղոտ սնուցող քսուք կամ դեկորատիվ որևէ երանգ: Դա մաշկը հուսալիորեն պաշտպանում է սառը քամուց, ձնից, ցրտից: Ձմեռը սկսվելուն պես ճարպային գեղձերն աշխատում են ավելի ինտենսիվ՝ կատարելով պաշտպանական ֆունկցիա, ուստի և արտազատում են ավելի շատ մաշկային ճարպ՝ սեբիա, այդ իսկ պատճառով պետք է հաճախ լվացվել: Ճարպոտ մաշկի դեպքում չպետք է չարաշահել սպիրտ պարունակող լոսյոնները, հակառակ դեպքում մաշկը բոլորովին կդադարի նորմալ աշխատել, և ճարպագեղձերն ավելի շատ ճարպ կարտադրեն: Նման իրավիճակում լավագույն միջոցը բնական հիմքով մաքրող լոսյոնն է, որը կարգավորում է ճարպագեղձերի աշխատանքը

Դեմքի մաշկի խնամքի հիմնական փուլեր

Մաքրում

Մաշկի խնամքը սկսվում է այս փուլից. մաշկի մաքրումը կարող է լինել մակերեսային և խորը: Մակերեսային մաքրումն անհրաժեշտ է իրականացնել ամեն օր, դա հատկապես կարևոր է ճարպոտ մաշկ ունենալու դեպքում՝ ծակոտիների խցանումից

խուսափելու և բորբոքման այլ օջախներ չստեղծելու համար: Մաքրող միջոցի ընտրությունը կախված է անհատական նախասիրություններից և մաշկի առանձնահատկություններից:

Տոնուսի բարձրացում

Մաշկի խնամքի այս փուլն անհրաժեշտ է մաշկի թթվահիմնային բալանսը չեզոքացնելու կամ հավասարակշռելու, մաշկի արտաքին շերտը ևս մեկ անգամ մանրէազերծելու և հակաօքսիդանտներով սնուցելու համար: Տոնուսավորումը «հող է նախապատրաստում» խոնավացնող քսուկի համար:

Խոնավացում և սնուցում

Մաշկի խնամքն անհնարին է առանց խոնավացման՝ անկախ մաշկի տիպից: Խոնավացումն իրականացվում է ամենատարբեր միջոցներով՝ սկսած օճառից մինչև տարատեսակ դիմակներ ու թերմալ ջրեր:

Մաշկի սնուցումն իրականացվում է տարբեր քսուկների և դիմակների միջոցով, որոնք պայքարում են մաշկի վաղաժամ ծերացման ու կնճիռների առաջացման դեմ, քանի որ սնուցող միջոցները խթանում են կոլագենի առաջացումը: Այս խնամքը նշանակալիորեն կախված է մաշկի տիպերից ու տարվա եղանակներից:

Պաշտպանում

Շրջակա միջավայրն իր վնասակար ազդեցությունն է գործում մաշկի վրա՝ դարձնելով այն խամրած և «անկենդան»: Այս հարցում մեծ դեր ունի արևի ճառագայթումը, ուստի հատկապես ամռանն ակտուալ է արևապաշտպան ֆիլտրով քսուկների օգտագործումը:

ԹԵՄԱ XX

Մաքրող միջոցներ

Առողջ լինելու, մաշկային խնդիրներից խուսափելու, ինչպես նաև գեղեցիկ ու երիտասարդ մաշկ ունենալու համար, մարդը պետք է անպայման հետևի իր մաշկի մաքրությանն ու օրական գոնե երկու անգամ մաքրի այն: Այս պրոցեդուրան հատկապես կարևոր է քնելուց առաջ, քանի որ այն կօզնի ազատվել օրվա ընթացքում կուտակված աղտից ու կբացի մաշկի ծակոտիները:

Մովորաբար մաշկը մաքրելու համար կիրառվում են հատուկ խնամքի միջոցներ, սակայն դրանք պարունակում են քիմիական տարրեր, որոնք նույնպես կարող են վնասել մաշկը: Մակայն կան նաև շատ արդյունավետ բնական մաքրող միջոցներ, որոնք ոչ միայն չեն վնասում, այլև սնուցում ու խոնավեցնում են մաշկը:



Տարբերում են մի շարք մաքրող միջոցներ, որոնք նախատեսված են տարբեր տեսակի մաշկի համար: Այդ նյութերը պետք է հեռացնեն մաշկի մակերեսից մաշկային ճարպը և փոշին առանց մաշկը վնասելու և գրգռելու: Զուգահեռ մաքրող միջոցները չպետք է չորացնեն, ճարպագերծեն, ջրազրկեն մաշկը և չվնասեն մաշկի ամբողջականությունը:

Ամենահաճախ օգտագործվող մաքրող միջոցները հիդրոֆիլ միջոցներն են: Հիմնականում այդ միջոցները նախատեսված են ինչպես մաշկը մաքրելու, այնպես էլ շպարը հեռացնելու համար:

Մաքրող միջոցները կարող են բաղկացած լինել մի քանի մասից.

1. Զրային
2. Ճարպային

Մաքրող միջոցները իրենց մեջ պարունակում են նուրբ, ճարպային նյութեր: Նպատակն է մաշկի մակերեսից հեշտությամբ հեռացնել ճարպի մեջ վատ լուծվող շպարի մնացորդները: Այդ նպատակով մաքրող միջոցը կազմված է երկու մասից. ճարպոտ միջոցը լուծվում է ճարպի մեջ, ջրային միջոցը՝ ջրի մեջ, ինչի արդյունքում

մաշկը հեշտ մաքրվում է: Կան մաքրող միջոցներ, որոնք նախատեսված են հարակնային շրջանի մաքրման համար: Այս նյութերը հիմնականում պարունակում են օրգանական լուծիչներ, մակերևութային ակտիվ նյութեր, ձևավորված գերչակի յուղ: Մաշկի մաքրման պրոցեսը կարելի է ավարտել մաշկը ջրով լվանալով կամ լուսնյոնով մաքրելով:

Մաքրող միջոցները լինում են.

Շպարահան կաթ – ամենահաճախ օգտագործվող նյութն է, որը նախատեսված է դեմակիաժի համար:

Մաքրող քսուկ – նախատեսված է չոր և զգայուն մաշկի համար, պարունակում է իր մեջ սինթետիկ և կիսասինթետիկ ճարպանման նյութեր, մուրեր, էմուլգատորներ: Հեշտությամբ խառնվում է մաշկային ճարպին՝ հեշտացնելով շպարի հեռացումը մաշկի մակերեսից:

Մաքրող լոսյոններ – կազմության մեջ մտնում է սպիրտ պարունակող նյութեր: Կան նաև լոսյոններ, որոնք չունեն սպիրտային կազմ և նախատեսված են նորմալ և չոր մաշկի համար:

Դոնդողներ – նախատեսված են նուրբ և զգայուն մաշկի համար: Պարունակում են իրենց մեջ մաքրող և մաշկը հանգստացնող, վերականգնող միջոցներ /ալոէ, պանտենոլ/:

ԹԵՄԱ XXI

Պիլինգ որպես լրացուցիչ մաքրող միջոց

Պիլինգը դեմքի մաքրման հատուկ գործողություն է, որի ընթացքում հեռացվում են մաշկի անհարթությունները և նույնիսկ մանր կնճիռները, ինչի արդյունքում տեղի է ունենում դեմքի մաշկի թարմացում: Այս մեթոդիկան նախատեսված է մաշկի ծերացման կանխարգելման և տարիքային կոսմետիկ թերությունների շտկման համար: Պիլինգի ժամանակ հեռացվում է մաշկի վերին եղջերացած և ծերացած բջիջների շերտը, ինչը երիտասարդեցնում է մաշկը և դարձնում այն ավելի էլաստիկ:



Պիլինգի տեսակները

Կոսմետոլոգիայում առանձնացնում ենք պիլինգի հետեվյալ տեսակները.

- Կոսմետիկ /մակերեսային/ պիլինգ
- Մեխանիկական պիլինգ
- Ֆիզիկական պիլինգ
- Քիմիական պիլինգ

Կոսմետիկ մակերեսային պիլինգ

Կոսմետիկ մակերեսային պիլինգը կարելի է իրականացնել տնային պայմաններում: Այն, որպես կանոն, ունի զուտ կանխարգելիչ բնույթ: Ամեն շաբաթյա մաշկի մաքրման շնորհիվ պահպանվում է նրա առաձգականությունը, հեռացվում են մահացած բջիջները, մաքրվում են ծակոտիները և վերանում են սև կետերը: Պարբերաբար իրականացվող այս գործողությունը դարձնում է մաշկը մաքուր և փափուկ:

Սկրաբ կամ գոմած՝ ելնելով մաշկի վիճակից

Մակերեսային պիլինգը կատարվում է երկու հիմնական միջոցներով՝ սկրաբի և գոմածի: Սկրաբերը պարունակում են բուսական կամ արտադրական ծագման հարթեցնող գնդիկներ: Բնական սկրաբերում օգտագործվում են կոկոսի կամ նշի մանրացված ընկուզային կորիզները, ցորենի թեփր: Հենց նրանք են շերտազատում մահացած բջիջների վերին շերտը: Ավելի զգայուն մաշկի համար պետք է օգտագործել գոմածներ, նրանց ազդեցությունն ավելի մեղմ է և չի վնասում մաշկը:

Կոսմետիկ պիլինգի իրականացման տեխնիկան

Գոմաժն ու սկրաբը քսում են մատների բարձիկներով՝ զուգակցելով դեմքի կոսմետիկ մերսման հետ: Գոմաժը սկզբում քսում են դեմքին, ապա մատներով գորում են այն՝ մակերեսային բջջային շերտի հետ միասին: Գոմաժի օգտագործման համար հակացուցում են հանդիսանում մաշկի ծերացման պրոցեսները, քանի որ էլաստիկությունը կորցրած մաշկը կարող է թուլանալ:

Կոսմետիկ-քիմիական պիլինգ

Կոսմետիկ պիլինգը կարող է լինել նաև քիմիական, երբ մահացած բջիջները ոչ թե հեռացվում են, այլ լուծվում են: Դա տեղի է ունենում պիլինգային քուկներում մրգային թթուների առկայության շնորհիվ (կաթնաթթու, խնձորաթթու, կիտրոնաթթու): Որոշ պիլինգներ պարունակում են ֆերմենտներ: Ամենից հաճախ ժամանակակից կոսմետոլոգիայում օգտագործում են մրգերից ստացված ֆերմենտներ, օրինակ՝ պապայայից կամ կիվիից:

Կոսմետիկ պիլինգի անցկացման հաճախականությունը

Կոսմետիկ պիլինգի անցկացման հաճախականությունը գլխավորապես կախված է մաշկի վիճակից, բայց այն պետք է լինի ոչ ավել քան շաբաթը 1-2 անգամ: Պիլինգը քսում են շրջանաձև շարժումներով՝ դեմքի կենտրոնից դեպի եզր և վեր ուղղությամբ: Պետք է խուսափել աչքերի շրջակա հատվածներից: Պիլինգն անպայման պետք է որոշ ժամանակ մնա դեմքի վրա (մինչև երեք րոպե):

Անհրաժեշտ ժամանակը լրանալուն պես խնամքով լվանում են դեմքը տաք ջրով և սրբում տոնիկով: Որից հետո կարելի է քսել դեմքի դիմակը կամ ամենօրյա խնամքի միջոցը:

Մեխանիկական պիլինգ

Մեխանիկական պիլինգը ներառում է՝

- Բրուսաժ
- Վակուում-պիլինգ
- Ուլտրաձայնային պիլինգ
- Միկրոդերմաբրազիա

Ֆիզիկական պիլինգ

Ֆիզիկական պիլինգի ժամանակ մաշկը շերտազատվում է ֆիզիկական ազդեցությունների հետևանքով: Ֆիզիկական պիլինգը ներառում է լազերի, ցածր ջերմաստիճանի (կրիոթերապիա) և այլ մեթոդների կիրառումը:

Քիմիական պիլինգ

Քիմիական պիլինգն իրականացվում է հատուկ բաղադրիչների և քիմիական նյութերի օգնությամբ, որոնք առաջացնում են մաշկի մակերեսային շերտի այրվածք՝ հետագա շերտազատմամբ: Պիլինգը սկսում են մաշկը մաքրելուց, որ կարգավորեն մաշկի թթվայնությունն ու ճարպագերծեն այն: Թթվի թույլ լուծույթները հավասարաչափ շերտազատում են

Էպիդեմիաի շերտերը, արդյունքում արագանում է կոլագենի սինթեզը՝ բարձրացնելով մաշկի տոնուսն ու էլաստիկությունը: Վերջում թթվի ազդեցությունը չեզոքացվում է:

Քիմիական պիլինգի տեսակները

Կոսմետոլոգիայում առանձնացնում են՝

- Մակերեսային պիլինգ
- Միջային պիլինգ, երբ թթուն հասնում է մաշկի միջին շերտերին
- Խորը պիլինգ

ԹԵՄԱ XXII

Քերուկ քսուկ /Սկրաբ/

Մաշկը ավելի խորը մաքրելու և ավելի հարթ դարձնելու նպատակով օգտագործում են քերուկներ /սկրաբ/, որոնք պետք է օգտագործել ոչ հաճախ քան շաբաթը մեկ անգամ կամ ավելի ուշ: Քերուկը կարող է ունենալ տարբեր բաղադրություն: Նա կարող է լինել քսուկի կամ դոնդողի տեսքով: Քերուկները կամ սկրաբերը պարտադիր պարունակում են ամուր մասնիկներ, կամ էքսֆոլատորներ /отшелушивающее средство/, որոնցով մաշկը մշակելու ժամանակ տեղի է ունենում մեխանիկական շերտազատում:



Քերուկները լինում են կոշտ կամ փափուկ:

Կոշտ քերուկ - քսուկները հիմնականում կազմված են ջրից և բնական նյութերի մանր ծեծած հասիկներից: Արդի ժամանակահատվածում կոշտ քերուկները խորհուրդ է տրվում օգտագործել մարմնի այլ հատվածների համար և հազվադեպ դեմքի համար, քանի որ էքսֆոլատորները, որոնք պարունակում են քերուկի մեջ, կարող են ունենալ սուր ծայրեր և վնասել մաշկի ամբողջականությունը:

Քերուկ-քսուկը տարածում են մաշկին դեմակիաժից հետո, մի քանի րոպե պտտուտակաձև շարժումներով տրորում ենք մաշկը քերուկ-քսուկով՝ տարածելով այն ըստ մերսման գծերի: Եթե մաշկը հաստ է և ուզում է խորացնել ազդեցությունը, ապա գործողությունը կատարում ենք հատուկ խոզանակների օգնությամբ /բրոսած/: Բրոսածից բացի քերուկ-քսուկի ազդեցությունը կարելի է խորացնել նաև՝ օգտագործելով կոշտ կտոր, որից հետո սպոնժի կամ փափուկ

անձեռոցիկի օգնությամբ հեռացնել այդ ամենը մաշկի վրայից:



Սկրաբը չի օգտագործվում զգայուն, լայնացած անոթներով մաշկի դեպքում, ցանավորված մաշկի և հատկապես թարախաբշտիկային ցանավորման ժամանակ: Նաև հակացուցված է սկրաբը օգտագործել մի շարք մաշկային հիվանդությունների ժամանակ:

ԹԵՄԱ XXIII

Քսուկների դասակարգումը

Շատ կարևոր է պատկերացնել, թե ինչ բան է քսուկը և ինչով են տարբերվում մեկը մյուսից: Քսուկները իրենցից ներկայացնում են էմուլսիաներ, իսկ էմուլսիա նշանակում է երկուսից ավել նյութերի խառնուրդ, որոնցից մի քանիսը լուծված են հեղուկ միջավայրի մեջ: Քսուկները հիմնականում կազմված են ճարպից և

ճարպանման նյութերից /մում, պարաֆին, վազելին/, որոնք խառնված են ջրի հետ:

Տարբերում են երեք տիպի էմուլսիա.

1. Ջուրը ճարպի մեջ
2. Ճարպը ջրի մեջ
3. Խառը տեսակի էմուլսիա

Կախված էմուլսիայի բաղադրատոմսից որոշվում է քսուկի օգտագործման նպատակը, ձևը և կիրառումը:

Ջուրը ճարպի մեջ էմուլսիա

Այլ խոսքերով գերիշխող միջավայրը ճարպն է, որի մեջ ավելի քիչ խառնվում է ջուրը: Մեզ ծանոթ էմուլսիան է քրտինքը, որը խառնված է մարմնի ճարպի մեջ: Նման էմուլսիաներն են բոլոր պաշտպանական միջոցները, որոնք ստեղծում են պաշտպանական շերտ, որն էլ շատ նման է մեր ջրալիպիդային թաղանթին, կարողանում են կանխել ջրի գոլորշիացումը և կրճատում են կոնսերվացնող միջոցի օգտագործումը քսուկի պատրաստման ժամանակ:

Դիմահարդարման մեջ ջուրը ճարպի մեջ քսուկները սնուցող, ճարպոտ և պաշտպանական քսուկներն են: Ջրային ֆազան այս քսուկների մեջ պաշտպանված է գոլորշիացումից, չի չորանում և քսուկի մեջ պահպանված են այն նյութերը, որոնք լուծված են ջրի մեջ: Լուսապաշտպան միջոցները այս հատկության

հաշվին դառնում են ջրակայուն և դժվար են հեռացվում լոգանքից հետո: Ժամանակակից քսուկները հնարավոր է լինում պատրաստել ավելի շատ ջրով, արտաքուստ ավելի քիչ ճարպոտ են, սակայն կորցնում են իրենց կայունությունը: Նման քսուկները կոչվում են գիշերային, որոնց նպատակն է սնուցել և վերականգնել մաշկին պակասող ճարպարտադրությունը, հարստացնել մաշկը ակտիվ միջոցներով:

Ճարպը ջրի մեջ էմուլսիա

Այս դեպքում ճարպերը լուծված են մեծ քանակությամբ ջրի մեջ: Նման քսուկները շատ մեղմ և փափուկ ազդեցություն ունեն մաշկի վրա, չեն թողնում ճարպոտության և յուղի զգացում, հեշտությամբ և հավասարաչափ տարածվում են մաշկին, օգտագործելուց թողնում են զովության և թարմության զգացում:

Նման քսուկները լայն կիրառում ունեն, հարուստ են ակտիվ նյութերով, որոնք լուծված են ջրի մեջ և հեշտությամբ թափանցում են մաշկի մեջ: Նման քսուկի բացասական կողմը հանդիսանում է այն, որ ջուրը շուտ գոլորշիանում է, ինչի արդյունքում քսուկը կորցնում է իր որակը: Ջրի առկայությունը բարենպաստ միջավայր է մանրէների և սնկերի զարգացման համար: Քսուկների մեջ պարտադիր է կոնսերվացնող և պահածոյացնող նյութերի առկայությունը:

Խառը էմուլսիա

Այս էմուլսիաների պատրաստումը պահանջում է հատուկ արդյունաբերական սարքեր, որոնց օգնությամբ հնարավոր է ջուրը լուծել ճարպի մեջ և մնացորդ ճարպային կաթիլները կրկին լուծել ջրի մեջ: Խառը էմուլսիաի որակը ապահովում են էմուլգատորները:

Գիշերային և ցերեկային քսուկներ

Գիշերային քսուկ հիմնականում հանդիսանում են սնուցող, ջուրը ճարպի մեջ էմուլսիաները, որոնք հիմնականում օգտագործվում են երեկոյան ժամերին օրվա խնամքը ավարտելուց հետո: Գիշերային քսուկը օգտագործում են քնելուց 1-1,5 ժամ առաջ: Քսուկը մաշկի վրա թողնում են 15-ից-20 րոպե, ինչից հետո ավելցուկը հեռացնում են անձեռոցիկի օգնությամբ: Չմոռանք նպատակային է նաև սնուցող քսուկը օգտագործել առավոտյան ժամերին:

Քսուկները ըստ ազդեծության.

1. Մաքրող
2. Խոնավեցնող
3. Մնուցող
4. Պաշտպանական
5. Վիտամինային
6. Գունաբացող
7. Զգայուն մաշկի համար
8. Լայնացած անոթներով մաշկի համար

Ըստ մարմնի հատվածների

1. Դեմքի
2. Կոպերի
3. Պարանոցի և լանջաբացվածքի
4. Մարմնի
5. Ձեռքերի
6. Ոտքերի

Ըստ մաշկի ճարպարտադրության

1. Ճարպոտ
2. Չոր
3. Նորմալ
4. Կոմբինացված

Քսուկները ցանկալի է ընտրել տարիքին համապատասխան: Բոլոր քսուկները իրենցից ներկայացնում են կայուն էմուլսիաներ, որոնք պետք է ունենան պահպանման և պիտանելիության ժամկետ:

ԹԵՄԱ XXIV

Քսուկների պատրաստման կանոնները

Քսուկները պատրաստելուց առաջ նախապատրաստում են առանձին ճարպերը /սպերմացևոլ, մեդրամոմը, կակաոյի յուղը/ և առանձին ջուրը /եռացրած, սառեցրած կամ ֆիլտրած/: Տնային

պայմաններում քսուկը պատրաստելու համար նախապատրաստում են գոլորշու բաղնիքը: Պետք է ունենալ 2 էմալպատ կամ ապակյա տարա, որոնցից մեկը պետք է մյուսից մեծ լինի: Մեծ տարաի մեջ լցնում են ջուրը, իսկ փոքրի մեջ՝ բոլոր յուղերը ըստ բաղադրատոմսի: Փոքրը դնում են մեծի մեջ և դնում են կրակին: Միաժամանակ ճարպերը սկսում են հալվել և դառնում է միասեռ զանգված:



Երբ ճարպերը հալվում են ու ստացվում է միասեռ զանգված, զուգահեռ պետք է ունենալ եռացրած ջուրը, որի մեջ լուծում են կոնսերվացնող նյութերը /բորաթթու, բորակ/: Ճարպերով տարան հանում են կրակի վրայից, բարակ շիթով սկսում են ավելացնել ջուրը և խառնում են քսուկը: Խառնում են մինչև ջուրը ամբողջությամբ խառնվում է ճարպի հետ և մինչև քսուկի սառչելը: Օրվա ընթացքում քսուկը մի քանի անգամ խառնում են: Խառնելու համար կարելի է օգտագործել հարիչ: Խառնելուց հետո քսուկը պետք է ծածկել կափարիչով:



Մյուս օրը մի քանի անգամ կրկին պետք է խառնել քսուկը /1-2 րոպե/: Երկրորդ օրվա վերջում կարելի է ավելացնել վիտամիններ /A և E/, հոտավետ նյութեր /վարդի յուղ, կիտրոնի յուղ/: Ստացված զանգվածը պետք է պահել սառնարանում:

Քսուկների մեջ օգտագործում են ինչպես ճարպեր, այնպես էլ բուսական յուղեր /նշի, ձիթապտղի, ծիրանի կորիզի և եգիպտացորենի յուղերը/:

ԹԵՄԱ XXV

Մնուցող միջոցներ

Մնուցող միջոցները հիմնականում պարունակում են վերականգնող նյութեր՝ բիոլոգիական ակտիվ նյութեր և վերականգնող միջոցներ: Մնուցող միջոցներն են՝ սնուցող քսուկները, դիմակները, շիճուկները և այլն: Այս միջոցների նպատակն է վերականգնել, շատացնել

բիոլոգիական ակտիվ նյութերը, սնուցող միջոցները հասցնել մաշկի խորքերը, երիտասարդացնել ծերացող մաշկի բջիջները, երիտասարդ և հասուն մաշկի համար լավացնել մաշկի սնուցումը: Մնուցող քսուկները ընտրվում են ըստ խնդիրների և համապատասխանաբար որոշվում է նրանց օգտագործման ձևը: Մնուցող միջոցների օգնությամբ կարելի է լուծել այս կամ այն խնդիրների առկայությունը:

Չոր մաշկը ճարպագերծված է, հաճախակի նաև ջրազրկված, և այս խնդիրը պետք է լուծել խնամելով մաշկը և՛ ցերեկը, և՛ երեկոյան: Ցանկացած խնդիրների լուծումը պահանջում է համապատասխան անհատական խնամք: Մնուցող քսուկը տարածում են մաշկի վրա քնելուց 1,5 – 2 ժամ առաջ: Քսուկի օգտագործումից 20-ից-30 րոպեից հեռացնում են ավելցուկը անձեռոցիկի օգնությամբ. անգամ ամենահեշտ ներծծվող քսուկը չպետք է մնա հաստ շերտով մաշկի վրա, քանի որ առավոտյան դեմքը կարող է լինել այտուցված:

Մնուցող քսուկը ձմռանը կարելի է օգտագործել նաև առավոտյան ժամերին: Այս քսուկները չի կարելի չարաշահել երիտասարդ մաշկի դեպքում, սակայն շատ կարևոր է սնուցող քսուկի առկայությունը չոր մաշկի դեպքում:

Ճարպոտ սնուցող քսուկները պարունակում են ավելի շատ ճարպային կոմպոնենտներ, մի փոքր դժվար են

ներծծվում, ջրի քանակությունը նրանց մեջ ավելի քիչ է: Հասուն և ծերացող մաշկի համար քսուկները պարունակում են նաև հորմոններ, բիոլոգիական ակտիվ նյութեր, վիտամիններ /A և E/, որոնք պիտանի չեն երիտասարդ մաշկի համար:

ԹԵՄԱ XXVI

Խոնավեցնող միջոցներ

Մաշկը խոնավեցնելու համար գոյություն ունեն մի շարք խնամքի միջոցներ: Դրանք են՝ խոնավեցնող քսուկները, դիմակները, մրգաթթու պարունակող կոսմետիկ միջոցները: Հայտնի է, որ երիտասարդ մաշկը հիմնականում լինում է ջրով հագեցած, սակայն տարիքի հետ ջրի քանակությունը սկսում է նվազել, մաշկը ջրազրկվում է և դիմահարդարի խնդիրներից մեկն է վերականգնել ջրային բալանսը, հատկապես եղջերային շերտի խոնավեցումը:

Նորմալ մաշկը բավականին պաշտպանված է և ունի բնական խոնավեցնող գործոն: Դա իրականացվում է մի քանի նյութերի առկայությամբ, որոնք կան մաշկի մեջ: Դրանք են՝ ազատ ամինաթթուները, միզանյութը, կաթնաթթուն, նատրիին /Na/, կալցիին /Ca/, կալին /K/: Այս

գործոնը բավականին արտահայտված է երիտասարդ բջիջների մեջ և տարիքի հետ նվազում և փոխվում է:

Տարիքի հետ նաև նվազում է կոլագենի և գլիկոզամինոգլիկանների սինթեզը: Ուստի պետք է տարբեր միջոցների օգնությամբ փորձել վերականգնել մաշկի եղջերային շերտի բջիջների աշխատանքը: Խոնավեցնող միջոցների օգնությամբ վերականգնվում է մաշկի պաշտպանական ֆունկցիան, սինթեզվում են կենսաբանորեն ակտիվ նյութերը, մաշկը մի փոքր երիտասարդանանում է և խոնավանում:

Դիմահարդարի խնդիրն է վերականգնել ջրազրկված մաշկի ջրային բալանսը, բարձրացնել խոնավության մակարդակը եղջերային շերտում, իսկ դա հաճախակի պահանջում է լիպիդների քանակական և որակական վերականգնում, որոնց շնորհիվ վերնամաշկի բջիջները միանում են իրար, ամրանում և կանխում մաշկի ջրազրկումը:

Դրանք են.

1. Հիդրոակտիվ նյութերը
2. Ֆերմենտները
3. Վիտամինները
4. Միզանյութը
5. Քիչ քանակությամբ մրգաթթուները

Խոնավեցնող միջոցների խնդիրներն հետևյալն են.

1. Քսուկի օգնությամբ մաշկի եղջերային շերտը պաշտպանել արտաքին միջավայրից՝ ստեղծելով պաշտպանական թաղանթ, ինչը կանխում է ջրազրկումը: Նմանատիպ նյութերն են՝ վազելինը, պարաֆինը, սկվալենը, մոմերը, լանոլինը, բնական ճարպաթթուները:
2. Շատ կարևոր է եղջերային շերտը հագեցնել ջրով: Մաշկի մեջ ջուրը կարելի է պահպանել երկու տիպի նյութերով՝ ա/ ճարպասեր /լիպոֆիլ/ նյութերով, ճարպաթթու, խոլեստերին, ցերամիդներ: Այս նյութերը ամրացնում են բջիջների կապը միմիանց հետ: բ/ ջրասեր /հիդրոֆիլ/ նյութերով, որոնք պահպանում են ջուրը: Դրանք են հիալուրոնաթթուն, կոլագենը, խիտոզանը: Այս նյութերը կարողանում են կլանել ջուրը:

Խոնավեցնող հասկություններով օժտված են նաև տոնային քսուկները: Այս քսուկները պահպանվում են մաշկի մակերեսին՝ վերականգնելով մաշկի հարթությունը: Դրանք հիմնականում ճարպը ջրի մեջ էմուլսիաներն են, որոնք թաղանթի նման ծածկում են մաշկը, պաշտպանելով շրջապատող անբարենպաստ միջավայրից: Նման քսուկները կարող են պարունակել 3-ից-25% ներկանյութ: Եթե ներկանյութի քանակությունը 10%-ից ավել է, ապա նա կոչվում է կրեմ-դիմափոշի:



Լայնորեն կիրառվում են նաև խոնավեցնող դիմակները, որոնց օգնությամբ հնարավոր է խոնավեցնել մաշկի խորը շերտերը: Խոնավեցնող դիմակները հիմնականում օգտագործում են պիլինգներից և քերուկներից հետո: Երիտասարդ մաշկի համար նախատեսված միջոցները խոնավեցնում են մաշկը՝ պաշտպանելով այն ջրազրկումից: Տարիքային մաշկի համար նախատեսված միջոցները ունեն երկու խնդիր՝ խոնավեցնել մաշկը և պահպանել խոնավությունը մաշկի մեջ երկար ժամանակ: Տարիքային խոնավեցնող քսուկները ավելի հարուստ են բիոլոգիական ակտիվ նյութերով, հատուկ վիտամիններով և հակաօքսիդանտներով:

ԹԵՄԱ XXVII

Պաշտպանիչ միջոցներ

Արևապաշտպան քսուկներ

Վերջին տարիներին նորաձև է ունենալ գեղեցիկ արևայրուք: Կանայք մրցակցության մեջ են մտնում, փորձելով ավելի մգացնել և գեղեցկացնել արևայրուքը,

առանց մտածելու, բացասական հետևանքների մասին: Արևը կարող է բացասաբար ազդել մաշկի վրա՝ առաջին հերթին առաջացնելով չորություն՝ վնասելով այն, հետագայում նաև արագ զարգացող ֆոտոծերացման պատճառ դառնալ:

Ժամանակակից կոսմետոլոգիական միջոցները առաջարկում են արևապաշտպան քսուկների, լոսյոնների, կաթեյի մեծ տեսականի:

Ֆոտոծերացման նշաններն են.

1. Եղջերային շերտի հաստացումը, որը կոչվում է **արևային կեռատոզ,**
2. Գերզունակային բծերի առաջացումը, որը կոչվում է **լենտիգո,**
3. Էլաստիկ հյուսվածքի վնասվածքը՝ արևի ճառագայթների երկարատև ազդեցության հետևանքով, կոչվում է **էլաստոզ,**
4. Կոլլագենի ձևափոխումը, որը կոչվում է **ֆոտոծերացում:**

Վառ պատկերը տեսնում ենք սարերում ապրող և արևի տակ աշխատող մարդկանց մոտ: Արևը կարող է վաղաժամ ծերացման պատճառ դառնալ: Արևի ճառագայթումն ունի տարբեր երկարություն, դա է ՈւՄՃ 200-400 նմ /նոնոմետր/, տեսանելի լույս 400-700, ինֆրակարմիր ճառագայթներ – 700 նմ և ավելի: Առաջին և վերջին ճառագայթումը աչքի համար տեսանելի չէ,

նշենք որ ՈւՄՃ ազդեցության տակ են առաջանում կնճիռները:



Իր հերթին ՈւՄՃ-ը բաժանվում են 3 խմբի՝ A, B, C:

ՈւՄՃ-ը ճեղքելով օզոնային շերտը, հասնում են մարդու մաշկին, ներթափանցում են վերնամաշկի /էպիդերմիսի/ մեջ:

A (315/320-400 նանոմետր) տիպի ճառագայթները անցնում են վերնամաշկը, ունեն բարձր թափանցելիություն և հասնում են անգամ բուն մաշկին: Հենց այս ճառագայթներն են դառնում ֆոտոծերացման պատճառ:

B (280-315/320 նմ) տիպի ճառագայթները ունեն մաշկը վնասող ազդեցություն, չեն հասնում մինչև բուն մաշկը, հաճախակի առաջացնում են սուր, կամ խրոնիկ պրոբլեմներ և հատկապես մաշկի կարմրություն:

C (200-280 նմ) տիպի ճառագայթները նախորդների համեմատությամբ բնութագրվում են ուժգնության և վտանգավորության առավել բարձր մակարդակով:

Բարեբախտաբար, մինչև երկիր հասնելը, դրանք գրեթե ամբողջությամբ կլանվում են օգոնային շերտի և մթնոլորտում գտնվող այլ գազերի կողմից:

Մարերում և հյուսիսային երկրներում արևի ռադիացիան ավելի բարձր է և ավելի շատ են ստանում այրվածք կամ ուժեղ արևայրուք: ՈւՄՃ-ը թափանցելով մաշկի մեջ վնասում են մաշկի անհրաժեշտ մի շարք նյութեր, ջրազրկում են մաշկը, նրա խորը շերտերը, արդյունքում մաշկը կորցնում է իր առանձգականությունը, սկսում է թորշումել: Եթե արևի քանակությունը քիչ է, ապա մաշկը գիշերվա ընթացքում վերականգնվում է: Եթե ճառագայթները շատ ուժեղ են, ապա մաշկի ուժերը չեն բավարարում և սկսում են առաջանալ խնդիրներ:

Այս ամենը հաշվի առնելով, ստեղծվեցին արևապաշտպան միջոցներ: Միջոցի հնարավորությունը ցույց տալու համար ստեղծեցին **SPF** նիշը: Եթե SPF= 1, նշանակում է, որ քսուկը պաշտպանում է մաշկը մոտավորապես 20-25 րոպեի ընթացքում, այսինքն այն ժամանակահատվածում, որի ժամանակ գտնվելով արևի տակ մարդը կարող է ստանալ մաշկը վնասող առաջին ախտանիշները: Սակայն դա չի նշանակում, որ եթե տարածում ենք մաշկի SPF-30 քսուկը, մենք կարող ենք ամբողջ օրը գտնվել արևի տակ: Առաջին հերթին նշենք, որ նույն նիշով քսուկը տարբեր ձևով է աշխատում շիկահերների և մուգ մաշկ ունեցողների մոտ: Շիկահերները արևի տակ պետք է գտնվեն շատ ավելի քիչ, քան մուգ մաշկ ունեցողները:



SPF նիշը ցույց է տալիս, թե ինչքան ժամանակ ամբողջ օրվա ընթացքում մարդը կարող է գտնվել արևի տակ: Ինչքան նիշը բարձր է, այնքան հզոր են տվյալ միջոցի պաշտպանական հնարավորությունները:

Նշենք, որ արևապաշտպան քսուկի կիրառումը շատ անհատական է: Եթե կինը գնում է ծովափնյա հանգիստ, ապա ցանկալի է ունենալ 2 տիպի արևապաշտպանիչ քսուկներ՝ **ցածր** նիշով և **բարձր** նիշով: Առաջին օրերը, երբ մաշկը դեռ անսովոր է ուժեղ արևի ճառագայթների նկատմամբ, չունի արևայրուկ, մաշկը պետք է պաշտպանել բարձր SPF ունեցող քսուկով: Մի քանի օր անց կարելի է քսուկը փոխել, օգտագործելով ցածր նիշով քսուկ /օրինակ SPF-ը = 20 և 8, 10, 40/:

Լուսապաշտպան միջոցներ

Լուսապաշտպան միջոցները, քսուկները, արևապաշտպան ֆիլտրերով բաժանվում են 2 խմբի.

1. Ֆիզիկական մեխանիզմով պաշտպանող նյութեր.
Էկրանի նման պատում են մաշկը, առաջացնելով

պաշտպանական թաղանթ և թույլ չեն տալիս, որպեսզի մաշկը կարմրի արևի ճառագայթների տակ կամ մզանա: Դրանք հիմնականում ցինկի պրեպարատներն են՝ ցինկի օքսիդը, տիտանի օքսիդը, որոնք ունեն սպիտակ գույն: Այս նյութերը փոշիներ են, հեշտ են խառնվում յուղի մեջ, ստեղծելով մածուկ, որն էլ տարածելով մաշկի վրա, էկրանի նման փակում են մաշկը արևի ճառագայթներից:

2. Քիմիական /ֆիլտրերով/ մեխանիզմով պաշտպանող միջոցներ. Դրանք մի շարք բուսական յուղերն են՝ ստացված խինոլինի, բենզոլի հիմքի վրա, որոնք կարողանում են կլանել, իսկ մի շարք նյութերը նաև ցրել այս կամ այն երկարությամբ արևի ճառագայթները: Կան միջոցներ, որոնք ընտրովի են թույլ տալիս մաշկի վրա ազդել արևի ճառագայթներին:

Ինչպես օգտագործել լուսապաշտպան միջոցները.

1. Ճիշտ ընտրել SPF, ինչքան բարձր, այդքան պաշտպանական հնարավորությունները ավելի հզոր են:
2. Երեկոյան պաշտպանական միջոցները պետք է հեռացնել մաշկի մակերեսից:
3. Անհրաժեշտ է խստիվ պահպանել պաշտպանական միջոցի օգտագործման ժամկետը:

4. Կոսմետիկ պաշտպանական միջոցը չպետք է խնայել և օգտագործել շատ քիչ: Միջոցի շերտը պետք է լինի բավականին հաստ: Ամբողջ մարմինը պատելու համար պետք է մոտ 3-4 ճ/գդ. քունկ:
5. Եթե քունկի վրա նշված է տոտալ /ամբողջական/ պաշտպանություն, ապա քունկը պաշտպանում է ձեր մաշկը արևի ճառագայթներից ամբողջությամբ: Այն օգտագործվում է սարերում և համարյա թույլ չի տալիս արևայրուկի առաջացմանը:

Մաքսիմալ պաշտպանական քունկները օգտագործում են նրանք, ովքեր վախենում են մաշկի քաղցկեղից, առաջին տիպի մաշկ ունեցողները, վիտիլիգոյով, ալբինիզմով տառապողները: Արևի տակ անհրաժեշտ է մնալ մինչև ժամը 11-ը և 5-ից հետո:

Արհեստական արևայրուքը կարելի է ստանալ սոլյարիներում: Ենթադրվում է, որ արհեստական ճառագայթները չեն վնասում մաշկը, այլ միայն նպաստում են գույնի փոփոխմանը, սակայն ցանկացած անձ պետք է նախապես խորհրդակցի բժշկի հետ սոլյարի հաճախելուց առաջ: Կան հատուկ քունկներ, որոնք կարող են մաշկը արհեստական ներկել: Դրանք կոչվում են ավտոգազառ, առանց արևի: Այս մեթոդը ոչ մի կապ չունի արևի հետ, սովյալ նյութերը միայն ներկում են մաշկը որոշակի ժամանակով:

Չնայած այն փաստին, որ հաճախակի լուսապաշտպան միջոցների վրա գրված է լինում, որ նրանք ջրակայուն են, խորհուրդ է տրվում ծովում կամ լողանալուց հետո այդ միջոցի շերտը թարմացնել, որովհետև որոշ չափով այն թափվում է:

ԹԵՄԱ XXVIII

Դիմակներ. Դիմակների դասակարգումը

Դիմակները ամենահաճախ օգտագործվող կոսմետիկական միջոցառումներն են: Դիմակների կիրառման նպատակն է լավացնել արյան շրջանառությունը, մաշկի սնուցումը, մաշկի թարմացումը, հեռացնել մաշկի մակերեսից թեփուկները, մաշկը դարձնել հարթ և վերականգնել և թարմացնել մաշկի գույնը:



Դիմակները հատկապես ցուցված են մերսումից հետո: Դիմակները կարող են ուղեկցել դեմքի մաքրումը, կամ կարող են լինել, որպես ինքնուրույն պրոցեդուրա: Այդ դեպքում դիմակից առաջ կարելի է կատարել վապորիզացիա, օգտագործել քերուկ-քսուկ և կատարել բրոսաժ: Որպես կանոն բոլոր դիմակները ունեն հիմք և լրացուցիչ սնուցող կամ բուժական նյութեր: Բիոլոգիական ակտիվ նյութերը դիմակների մեջ ավելի շատ են քան քսուկները:

Դիմակը տարածում են մաքուր և չոր մաշկին, հիմնականում դեմքին պահում են 15-20 րոպե, հատուկ ցուցումների դեպքում՝ 40 րոպե: 15-20 րոպեից հետո դիմակը չորանում է, կորցնում է իր ազդեցությունը և սկսում է վնասել մաշկը: Դիմակները պետք է հեռացնել սենյակային ջերմաստիճանի գոլ ջրով, որից հետո մաշկը ամպայման պետք է պատել համապատասխան քսուկով: Եթե դիմակը ունի սպիտակեցնող ազդեցություն, ապա օգտագործում ենք լուսապաշտպան քսուկ: Դիմակները տարածում ենք դեմքի վրա ներգնդի վերև ըստ մերսման քծերի: Հաճախորդը պետք է լինի պարկած և պրոցեսի ընթացքում չխոսի: Դիմակը հեռացնում ենք բամբակե սկավառակներով ներքևից վերև՝ ըստ մերսման գծերի:

Եթե դիմակը պահենք նշված ժամանակից ավել, այն սկսում է ձգել մաշկը, հոգնեցնում է դեմքի մկանները: Այն հեռացնելուց հետո հաճախորդը ունենում է

հոգնածության զգացում, մաշկը վնասվում է: Պետք չէ դիմակից հետո օգտագործել օձառ, այն կարող է վնասել ջրաճարպային թաղանթը:



Դիմակները լինում են տարբեր տեսակի.

1. Ըստ արտաքին տեսքի՝

- Հեղուկ
- Փոշենման
- Մոմանման
- Մածուկանման
- Դոնդողանման
-

2. Ըստ ազդեծության՝

- Մախտակեցնող
- Խոնավեցնող
- Մնուցող
- Բուժական
- Մաքրող

- Աղտահանիչ
- Երիտասարդացնող
- Չորացնող, ձգող, ծակոտիները նեղացնող

3. Ըստ մաշկի տիպի՝

- Չոր
- Ճարպոտ
- Պրոբլեմային
- Ծերացող
- Զգայուն

4. Ըստ մարմնի հատվածի՝

- Դեմքի
- Պարանոցի
- Լանջաբացվածքի
- Կոպերի և շուրթերի
- Մազերի
- Ջեռքերի և ոտքերի
- Մարմնի

ԹԵՄԱ XXIX

Դիմակների դասակարգումը ըստ արտաքին տեսքի

Մածուկանման դիմակներ

Այս տիպի դիմակների բաղադրատոմսի մեծ մասը կազմում են պինդ նյութերը՝ բենտոնիդը, սպիտակ կավը: Մրանք թանձր դիմակներ են, տարածվում են շպատելի կամ ձեռքի օգնությամբ: Տարածելով հարթ, հավասարաչափ շերտ, դիմակը թողնում են 10-15 րոպե: Որպեսզի այն չչորանա, հաճախակի դիմակի մեջ ավելացնում են գլիցերին: Որպեսզի դիմակը հեշտ հեռացվի, նախապես այն խոնավեցնում են, իսկ հետո զգուշորեն հեռացնում: Մածուկանման դիմակները ունեն հակաբորբոքային, բուժական և չորացնող հատկություն:

Քսուկանման դիմակներ

Հիմնականում երիտասարդացնող, սնուցող դիմակներ են: Նպատակն է կանխարգելել մաշկի ծերացումը: Օգտագործվում են չոր, բարակ, զգայուն մաշկի համար: Նաև ունեն խոնավեցնող հատկություններ, հեշտ է տարածվում մաշկի վրա: Եթե դիմակի վրա նշված է, որ այն ունի հակածերացնող հատկություններ, ուրեմն այն հարուստ է վիտամիններով, հորմոններով, խոտաբույր-մերով: Դիմակը մաշկին կարելի է պահել 15-20 րոպե,

հեռացնել գոլ ջրի մեջ թրջված անձեռոցիկով կամ սպունգով, որից հետո մաշկը մշակել թթվային տոնիկով:

Փռշենման դիմակներ

Այս դիմակները իրենցից ներկայացնում են մի քանի փռշենների խառնուրդ: Դիմակը պատրաստվում է օգտագործելուց առաջ /1 թեյի գդալ փռշու դիմակը լուծում են հատուկ լուծիչով, օգտագործում են 3%-անոց բորաթթվի լուծույթը/: Ճարպոտ, ծակոտկեն, հաստ մաշկի դեպքում կարելի է օգտագործել 3%-անոց ջրածնի պերօքսիդի լուծույթը: Որպես լուծիչ օգտագործում են նաև խոտաթուրամերը՝ երիցուկի, չերեդայի, նանայի թուրամերը: Կարելի է որպես լուծիչ օգտագործել նաև բուժական լուծույթներ: Դիմակը խառնում են մինչև թթվասերանման զանգված ստանալը: Դիմակը տարածում են վրձինով կամ ձեռքով: Թողնում են մաշկի վրա մինչև չորանալը /կախված դիմակի հաստությունից 5-15 րոպե/, որից հետո կարելի է լվանալ սենյակային ջերմաստիճակի ջրով: Եթե դիմակը ուղեկցում է դեմքի մաքրումը, ապա այն հեռացնում են չոր բամբակի օգնությամբ, որից հետո պատում են 3%-անոց բորաթթվով կամ ջրածնի պերօքսիդով, այնուհետև օգտագործում են համապատասխան քսուկը:

ԹԵՄԱ XXX

Դիմակների տեսակները

Խմորանման դիմակներ

Պարունակում է պինդ նյութերի մեծ տոկոս, օրինակ սպիտակ կավը /կաոլին/: Այս դիմակների խմբին պատկանում են կաոլինային և ցելյուլոզի հիմք ունեցող դիմակները: Դիմակը տարածում են նախապես մաքրած դեմքին՝ շպատելի կամ վրձնի օգնությամբ: Դեմքի վրա առաջանում է դիմակի թաղանթ, որը պահպանվում է այնքան ժամանակ, մինչև հեղուկ զանգվածը գոլորշիանա /մոտ 10-15ր/: Գոլորշիացմանը զուգահեռ դիմակը սկսում է չորանալ, քարանալ, երկար պահելու դեպքում դժվարանում է դիմակի մաքրումը: Այս տիպի դիմակի մեջ կարելի է ավելացնել գլիցերին՝ բորբոքային պրոցեսը կանխելու նպատակով:



Ցեխային դիմակներ

Չորացնող, ճարպագերծող ազդեցություն են թողնում մաշկի վրա: Այս դիմակները լայնացնում են անոթները, լավացնում արյան և ավշի հոսքը՝ նպաստելով նյութափոխանակության ակտիվացմանը, լավացնում են հյուսվածքներում սնուցման և շնչառության ֆունկցիաները: Այս ամենի հետևանքով վերականգնվում է մաշկի առողջ գույնը, մաշկը դառնում է ավելի փափուկ և նույնիսկ սկսում են հարթվել մանր կնճիռները: Այս խմբի դիմակները լավ ազդեցություն են թողնում մազաթափության վրա, ամրացնելով և նպաստելով մազերի աճին, թողնում են բակտերիոցիտ ազդեցություն:



Հեղուկանման դիմակներ

Նման դիմակները ավելի հեշտ և արագ են չորանում: Հիմնական բաղադրիչներն են հանդիսանում ջուրը և ժելատինը: Դիմակը տարածելուց հետո մաշկի վրա

առաջանում է թաղանթ, որը հանդիսանում է պաշտպանիչ շերտ և թույլ չի տալիս որպեսզի ջուրը գոլորշիանա: Ջուրը պաշտպանվում է մաշկի եղջերային շերտում, որի հետևանքով անգամ կարող է բարձրանալ մաշկի ջերմաստիճանը, լայնանում են արյունատար անոթները, լավանում և արագանում է արյան հոսքը դեպի մաշկը:



Մոմանման դիմակներ

Այս դիմակները պատրաստելու համար հալեցնում են բաղադրիչներ, որից հետո շերտ առ շերտ տարածում են դեմքին և թողնում չորանա: Բաղադրիչները հիմնականում պարաֆինն է, լանոլինը և այլ մոմանման նյութերը: Դիմակը տարածելով դեմքին շպատելի օգնությամբ թողնում են մի քանի րոպե, որից հետո տարածում են 2-րդ շերտը, շերտերի քամակը 3-4-ն է: Վերջին շերտը տարածելուց հետո դեմքին դնում են սրբիչ: Այդ դիմակները լավացնում են արյան շրջանառությունը, խոնավեցնում, սնուցում են մաշկը: Այս դիմակները ունեն նաև մաքրող

հասկություն, հեռացնում են վերնամաշկի մեռուկացած շերտը:



Թիթեղային դիմակներ

Հանդիսանում են թափանցիկ, դոնդողանման դիմակներ: Հիմնական բաղադրիչը պոլիվինիլային սպիրտն է: Դիմակը տարածելիս դեմքին հիմնական նյութը սկսում է գոլորշիանալ, ցնդել, իսկ դիմակը ամբողջությամբ հալվում է մաշկին՝ առաջացնելով թաղանթ: Այդ թաղանթը հանդիսանում է մաշկի կրկնօրինակը, այնքան ամուր է հալվում մաշկին: Պահպանվում է 20 րոպե, որից հետո հեռացվում: Այդ թաղանթը հեռացնում է իրենց ժամանակը սպառած, մաշկի մեռուկացած բջիջները, աղային և եղջերացած խցանները: Այս տիպի դիմակները ցանկալի չէ չոր և զգայուն մաշկ ունեցող մարդկանց համար, քանի որ ունեն գրգռիչ ազդեցություն: Էֆեկտիվ չէ նաև բարակ և մանր կնճիռների առկայության դեպքում: Հակացուցված է բարակ և շեկ մազերի առկայության դեպքում, քանի որ

դիմակը հեռացնելու ժամանակ կարող են հեռացվել այդ մազերը՝ հետագայում առաջացնելով սև և հաստ մազեր:



Ներծծվող դիմակներ

Այս տիպի դիմակները հիմնականում լինում են դոնդողանման կամ ավելի հազվադեպ քսուկանման: Անհրաժեշտություն չի լինում դիմակները լվանալու կամ հեռացնելու: Խորհուրդ է տրվում այս դիմակները կատարել այնպիսի պրոցեդուրայից հետո, երբ վնասվում է մաշկի վերին շերտը:



Պատրաստի թաղանթային դիմակներ

Այս դիմակները հիմնականում նախատեսված են մեկանգամյա օգտագործման համար: Պահպանվում են հատուկ, փակ տարաների մեջ, որտեղ առկա է կտորանման թաղանթ հատուկ կտրվածքներով /աչքերի, շրթունքների և քթանցքների համար/: Այդ թաղանթը լինում է խոնավեցնող, սնուցող, սպիտակեցնող, հակաբորբոքային, հանգստացնող և այլ բաղադրիչներով: Հաճախորդի դեմքը նախապես մաքրում են, որից հետո դիմակը դնում են դեմքին, թողնելով 15-30 րոպե: Դիմակը հեռացնելուց հետո, անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել սնուցող կամ խոնավեցնող քսուկ: Նմանատիպ դիմակ կարելի է պատրաստել նույնիսկ տան պայմաններում, օգտագործելով թանձրիվ:



Ալգինատային դիմակներ

Ալգինատը ստանում են ջրիմուռներից, որոնք հարուստ են ակտիվ և օգտակար նյութերով: Հիմնականում չեն

պարունակում կոնսերվանտներ, հավելումներ, որի հետևանքով չեն առաջացնում ավերգիկ ռեակցիաներ: Այս դիմակի նպատակն է խոնավեցնել, սնուցել, հանգստացնել մաշկը, հարթեցնել մանր կնճիռները, ամրացնել և ձգել մաշկը, ակտիվացնել ակտիվ նյութերի թափանցելիությունը, բարձրացնել թթվածնի հոսքը դեպի մաշկ, լավացնել արյան շրջանառությունը:



ԹԵՄԱ XXXI

Մաշկի ծերացում և կնճիռների առաջացման տեսակները

Օրգանիզմի զարգացման ընթացքում օրինաչափորեն ի հայտ եկող հասակային անվերադարձ փոփոխությունները, որոնք սահմանափակում են նրա հարմարվողական հնարավորությունները, կոչվում է ծերացում:

Ծերացումն ուսումնասիրող գիտությունը կոչվում է **գերոնտոլոգիա**, որը որպես գիտություն սկիզբ է առել 20-րդ դարում: Ծերացումը շարունակական և դինամիկ պրոցես է, որը սկսվում է մարդու ծնունդով և ավարտվում է մարդու մահով:

Ծերացումը սկսում է շատ վաղ տարիքից /30-ից-32 տարեկան/, արտաքնապես դա արտահայտվում է մաշկի մի շարք փոփոխություններով՝ մաշկը ջրազրկվում է, տեղի է ունենում մաշկի արտաքին տեսքի և գույնի փոփոխություն, նվազում են փոխանակային ֆունկցիաները, բարակում է ենթամաշկային ճարպային բջջանքը, կտրուկ կրճատվում է ճարպարտադրությունը և քրտնարտադրությունը, քչանում է կոլագենի և էլաստինի սինթեզը, հաճախակի մաշկը չորանում է, ձևափոխվում է վերնամաշկը, արդյունքում առաջանում են կնճիռներ:

Տարբերակում են **խրոնոլոգիական** և **բիոլոգիական** տարիք հասկացությունները: Խրոնոլոգիական տարիքը դա ըստ անձնագրի տարիքն է, իսկ բիոլոգիականը որոշվում է միջին ստատիստիկական նորմերի համապատասխան:

Տարբերում են **բնական ծերացում** և **վաղաժամ ծերացում**: Բնական ծերացումը ունի իր ընթացքը, որը կանգնեցնել, դանդաղեցնել կամ խոչընդոտել անհնարին է, իսկ վաղաժամ ծերացումը կարելի է փորձել կանգնեցնել

կամ կանխարգելել: Բիռձերացման գործընթացը սկսում է արդեն 25 տարեկանից:

Ծերացման հիմնական պատճառներն են.

1. Արտաքին վնասակար գործոնների ազդեցությունը անմիջապես մաշկի վրա /արևի ճառագայթներ, մեխանիկական գրգռիչներ, վնասակար նյութեր, ախտոտված օդ, եղանակային փոփոխություն/;
2. Հորմոնային համակարգում տեղի ունեցող փոփոխությունները;
3. Իմուն համակարգի ախտահարումը
4. Չարորակ, ինչպես նաև բարորակ նորագոյացությունների առկայությունը;
5. Օրգանիզմում տեղի ունեցող տարբեր գործընթացների հետևանքով առաջացած վնասակար նյութերի դուրսբերման խանգարումը, որոնք կուտակվում են և կանխում նյութափոխանակության գործընթացը:

Տարբերում են օրգանիզմի ծերացման ներքին և արտաքին ձևեր:

Ներքին – հիմնական պատճառը հանդիսանում է լիպիդային մանթիայի բացակայությունը, որի հետևանքով խախտվում է մաշկի պաշտպանող ֆունկցիան: Այն ուղեկցվում է նոր բջիջների առաջացման ընթացքի խանգարմամբ, վերականգնողական ֆունկցիան ընկճվում է, որի հետևանքով վերնամաշկը բարակում և դառնում է խոցելի տարբեր

արտաքին գործոնների համար: Խանգարվում է քրտնագեղձի և ճարպագեղձի արտադրողական ֆունկցիան, ինչի հետևանքով առաջանում է այտուցվածություն, որը բերում է նաև ավշի հոսքի խանգարմանը: Մաշկը ստանում է թորշումած տեսք, սկսում է կախվել, առաջանում են կնճիռներ:

Արտաքին – անվանում են նաև լուսային ծերացում, քանի որ հիմնական պատճառը հանդիսանում է արևի ուղիղ ճառագայթների ազդեցությունը: Մաշկի շերտերում ակտիվանում է մելանոցիտների, ֆերմենտների, հիմնային շերտում կեռատինոցիտների կիսման արագացումը:

Տարիքային կնճիռների վերացման նպատակով օգտագործվող հիմնական բուժիչ միջոցներից բացի կարելի է կիրառել հակատարիքային միջոցներ: Բացի նրանից, որ մաշկը սկսում է բարակել, պատվում է մանր և խորը կնճիռներով, տեղի է ունենում նաև փափուկ հյուսվածքներում տարբեր աստիճանների դեֆորմացվող փոփոխություններ, որոնք էլ դեմքի և պարանոցի շրջանում հաղորդում են հիմնական ծերացման նշանները:



Տարբերում են **ծերացման 3 հիմնական տիպ**.

1. **Մանր կնճիռային տիպ** – նկատվում է չոր, ջրազրկված մաշկ ունեցող մարդկանց մոտ, որոնք չարաշահում են ծխախոտը և արևային լոզանքների սիրահար են: Կարող է նկատվել նույնիսկ մինչև 40 տարեկան մարդկանց մոտ: Հիմնականում արտահայտված են լինում աչքերի շուրջ կնճիռները, վերին և ստորին շրթունքի շրջանի կնճիռները: Հաճախորդներին, որոնց մոտ նկատվում է մանր տիպի ծերացում, ցուցված է ընդհանուր մաշկի խնամք, որի հիմնական նպատակը մաշկը խոնավեցնելն է: Կարելի է կիրառել տարբեր պիլինգներ, դիմակներ /տաքացնող և վերականգնող հատկությամբ, մաշկի հղկում և տարբեր շիճուկներ/:
2. **Դեֆորմացվող տիպ** – դեմքը հակված է լինում այտուցների, այտերը արտահայտված են, հաճախակի ունենում են կրկնակզակ, արտահայտված է խորը քիթ-շրթունքային ծայք, հիմնականում դա ընդհանուր առաձգականության նվազման արդյունք է: Օրվա վերջում դեմքը ունենում է <<հոգնած>> տեսք: Դեմքի վրա կարելի է նկատել լայնացած անոթներ, երբեմն վարդագույն կորեակներ, կրկնակզակի հետ միասին նկատվում է ծալքերով պատված

պարանոցը: Զուգահեռ դրան կնճիռները համարյա թե պակասում են: Դեֆորմացնող տիպի դեպքում նկատվում է նաև ճարպի կուտակումը և կախվածությունը վերին և ստորին կոպերի շրջանում: Նման տիպ ունեցող հաճախորդներին խորհուրդ է տրվում ավշի հոսքը լավացնող պրոցեդուրաներ, կամ լիմֆոդրենաժ, մկանների կծկողականությունը լավացնող պրոցեդուրաներ: Դիմակներից նշանակում են լիֆտինգային դիմակներ:

3. **Կոմբինացված տիպ** – նկատվում է հյուսվածքների փոփոխություններ, դրա հետ մեկտեղ ընդհանուր դեմքը դեֆորմացված է, մաշկը պատված է լինում կնճիռներով:

Կնճիռներ կամ **խորշումները** մաշկի տեսանելի ծալքեր են: Առաջանում են դեմքի մկանների ավելորդ գործունեության, մաշկի առաձգականության կորստի և այլ պատճառներով: Մաշկին առաձգականություն հաղորդում են դերմիսում առկա կոլագենային մանրաթելերը, իսկ հարթություն՝ նրանց միջև տեղակայված հիալուրոնաթթվի մոլեկուլները:

Տարբերակում են կնճիռների հետևյալ ձևերը.

1. Միմիկային կնճիռներ
2. Ակտինիկ կնճիռներ
3. Տարիքային կնճիռներ

Միմիկային կնճիռները առաջանում են շատ վաղ տարիքում՝ դեմքի այն հատվածներում, որտեղ այդ դիմախաղի մկանները ավելի ակտիվ են /ճակատի շրջանում, աչքերի շուրջը՝ փոքր սագաթաթ, ճակատի կենտրոնում, քթի շրջանում/: Հիմնականում կնճիռները ուղղահայաց են մկանի ուղղությամբ:

Ակտիվ կնճիռները առաջանում են 25-30 տարեկանում և նրանց առաջացման պատճառը արևի չարաշահումն է: Արևի ճառագայթների ազդեցության տակ մաշկը ճարպագերծվում է, ջրազրկվում, ծածկվում է մանր կնճիռներով: Երիտասարդ մաշկի դեպքում բավական է կատարել մի քանի պիլինգ, օգտագործել խոնավեցնող և հակաօքսիդանտային միջոցներ, ունենալ օրվա խնամքի ճիշտ մոտեցում և արդյունքում կնճիռները կհարթվեն և չեն խորանա:

Տարիքային կնճիռները առաջանում են մաշկի ծերացման արդյունքում: Առաջացման պատճառը դա մաշկի բարակումն է և առանձգականության փոփոխությունները: Դեմքի վրա առաջանում են ոչ միայն կնճիռներ, այլ նաև փափուկ հյուսվածքների դեֆորմացիաներ: Այս կարգի կնճիռները պահանջում են երկարատև աշխատանք՝ տնային ամենօրյա ճիշտ խնամք, դիմահարդարի օգնություն՝ մերսում, դիմակներ, մի շարք կոսմետիկ միջոցներ, ներարկումային միջոցների օգտագործում /բոտոքս, հիալուրոնաթթվով ներարկումներ/, որոնց արդյունքում կնճիռները

դառնում են ավելի հարթ և աչքին քիչ տեսանելի: Ապարատային բուժման արդյունքում հյուսվածքներում լավանում է արյան շրջանառությունը, նորմալանում է մկանների կծկվածությունը, նյութափոխանակությունը, ուժեղանում է մաշկի ներթափանցումը:

Ե՛վ ապարատային բուժումները, և՛ դիմահարդարի աշխատանքը պետք է կատարվեն կուրսային՝ կրկնվելով տարվա մեջ 2-3 անգամ: Տարիքային մաշկը պահանջում է օրվա ընթացքում առավոտյան և երեկոյան օգտագործել հատուկ խնամքի պարագաներ: Մաքրող միջոցները պետք է լինեն շատ նուրբ /շպարահան կաթ, առանց սպիրտի մաքրող լոսյոններ, օճառ չպարունակող դոնդողներ/: Դեմքը մաքրելուց հետո պետք է մաշկը պահել չոր, զգայուն մաշկի համար նախատեսված տոնիկով, մի քանի օր շարունակ կուրսային կամ շաբաթվա մեջ 2-3 անգամ:

ԹԵՄԱ XXXII

Հարակնային շրջանի պարկերի առաջացումը

Հարակնային շրջանի մաշկը խիստ տարբերվում է դեմքի այլ հատվածների մաշկից և ծերացման առաջին նշանները հաճախակի առաջանում են հենց այս


հատվածում: Այն շատ ավելի բարակ է, ունի յուրօրինակ կառուցվածք (գրեթե բացակայում է ենթամաշկային ճարպային բջջանքը, հաճախակի բացակայում է փայլուն շերտը: Եղջերային շերտը շատ բարակ է, սրա հետ մեկտեղ ստորին կոպի հատվածում հաճախակի առաջանում են այտուցներ, փոփոխություններ, որոնք արտաքինապես հիշեցնում են պարկիկներ): Դա բացատրվում է և այդ հատվածի մկանների առանձգականության կորուստով, և թուլանում են աչքի ներքին և արտաքին մկանների կծկողության ուժը, սկսում են առաջանալ սկզբում շատ նուրբ տարիքի հետ խորացող կնճիռներ:

Պարկիկների առաջացման պատճառներն են՝

1. Գիշերվա ընթացքում հյուսվածքների մեջ կուտակվում է հեղուկ, ձևավորվում է այտուց, ինչի պատճառով կարող է լինել ալերգիան, մաշկի գրգռվածությունը, երիկամների հիվանդությունը, սրտանոթային անբավարարությունը, անքնությունը, լարված աշխատանքը, հատկապես՝ վատ տեսողության ժամանակ: Նման խնդիրների դեպքում խորհուրդ է տրվում դիմել բժիշկի օգնության և անցնել համապատասխան հետազոտություն:

2. Տարիքային ճարպային փոփոխությունները, որը ստորին կոպի ճարպային ճողվածքն է՝ այսինքն ճարպային կուտակումներ ստորին կոպի հատվածում: Այս դեպքում խորհուրդ է տրվում պլաստիկ վիրաբույժի

օգնությունը և կատարվում է ստորին կոպի պլաստիկա (բլեֆառոպլաստիկա):



Պարկիկների առաջացման արդյունքում փոխվում է դեմքի արտահայտությունը, դեմքը ստանում է հոգնած տեսք: Հարակնային շրջանի խնամքը պետք է լինի յուրահաստուկ: Պարկիկների առաջացումը կարելի կանխարգելել: Խորհուրդ է տրվում հատուկ սննդակարգ, որի մեջ բացառում են աղին, կծուն, գարեջուրը, ալկոհոլային խմիչքները, նաև ճիշտ է երեկոյան ժամերին սահմանափակել սննդի և թեյի օգտագործումը: Խորհուրդ է տրվում քնել օրթոպեդիկ բարձերի վրա կամ բարձը լինի մի փոքր ավելի մեծ, որպեսզի գլխի դիրքը լինի ավելի բարձր, քան մարմնինը:

Պետք է օգտագործել հատուկ խնամքի պարագաներ, որոնք պարունակում են ակտիվ նյութեր, կատարվում են ներարկումային միջոցներ (լիպոլիտիկների, մեզոթերապևտիկ պրեպարատների օգտագործում, մերսումներ, ավշի հետքը լավացնող մերսումներ):



Հարակնային շրջանի խնամքի պարագաները հիմնականում պետք է լինեն առանձին կամ պետք է նախատեսված լինել շատ չոր, զգայուն մաշկի համար: Բոլոր կոսմետիկ միջոցները պետք է անցնեն հատուկ ստուգում ակնաբուժների կողմից և նոր թույլատրվեն օգտագործման:

Հարակնային շրջանի համար նախատեսված բոլոր կոսմետիկ միջոցները ունեն հանգստացնող հատկություն, չունեն ներկող, հոտավետ նյութեր, չեն գրգռում աչքերը:

ԹԵՄԱ XXXIII

Մաշկային տարբեր հիվանդությունների ժամանակ օգտագործվող դեղորայքային նյութեր

Եվ մաշկային հիվանդությունների, և կոսմետոլոգիական խնդիրները լուծելու նպատակով մասնագետը օգտագործում է տարբեր միջոցներ, որոնց նպատակն է

արտաքինից կազդուրել մաշկը: Օգտագործելով արտաքին թերապիայի միջոցները ամենակարևոր օրենքներից մեկն է չվնասել մաշկը: Արտաքին օգտագործման միջոցները ունեն տարբեր տեսք, օգտագործվում են հիվանդության տարբեր փուլերում և պետք է օդագործվեն միայն խիստ ցուցումներով:

Արտաքին օգտագործման դեղորայքը ըստ ազդեցության խորության դասակարգվում է հետևյալ ձևով.

1. Ցանափոշի
2. Թրջոցներ
3. Ջրային թափահարուկներ
4. Յուղային թափահարուկներ
5. Դոնդոններ
6. Մածուկներ
7. Քսուկներ ճարպը ջրի մեջ
8. Քսուկներ ջուրը ճարպի մեջ
9. Քսադեղեր
10. Կոմպրեսներ

Տարբեր դեղամիջոցներ ընտրելիս դրանք պետք է համապատասխանեցնել հիվանդությանը՝ որոշելով հիվանդության աստիճանը, ստուգել դեղորայքի տանելիությունը: Խորհուրդ է տրվում ցանկացած միջոց տարածել մի փոքր հատվածի վրա բացառելով կողմնակի ազդեցությունը և հետո նոր միայն օգտագործել մաշկի մեծ հատվածների վրա:

Ցանափոշի, Դիմափոշի - Սա երկու և ավելի փոշիանման նյութերից կազմված միջոց է, որը պետք է տարածել շատ բարակ շերտով: Ցանափոշիների հիմնական նյութը դա չեզոք հանքային բուսական փոշին է, հազվադեպ օրգանական նյութերը: Դիմահարդարման մեջ օգտագործում են ամենալավ մանրեցրած փոշիները: Ցանափոշիների հիմք կարող է լինել տակը, որը իրենից ներկայացնում է սպիտակ կամ գորշ գույնի, առանց հոտի և համի փոշի, շոշափելիս ճարպոտ է և օժտված է սահող հատկություններով:

Ցինկի օքսիդ - սպիտակ կամ դեղնավուն, առանց հոտի, չեզոք փոշի է:

Սպիտակ կավ - Al-ի սիլիկատի, Ca-ի և Mg-ի սիլիկատների խառնուրդ է, սպիտակ կամ դեղնավուն երանգի, շոշափելիս յուղոտ է, ավելի քիչ օգտագործվում է կարմիր կավը:

Բենտոնիդ - Al-ի սիլիկատ է, որն օգտագործվում է ճարպոտ մաշկի դեպքում:

Mg-ի օքսիդ, կամ այրված Mg – սպիտակ, թեթև, շատ մանր փոշի է, օգտագործում են դիմակների պատրաստման ժամանակ: Ցանափոշիների մեջ նաև կիրառվում են օրգանական նյութեր, տարբեր տիպի օսլաներ, ցորենի, բրնձի, եեզիպտացորենի, կարտոֆիլի: Օսլաները սպիտակ, շատ նուրբ փոշիներ են, առանց

հոտի և համի, չեն խառնվում սառը ջրի մեջ, իսկ տաքի մեջ խառնվելիս ստացվում է ծանր ծորացող լուծույթ: Հանքային փոշիները ավելի լավ են կլանում ճարպը, իսկ բուսականները՝ ջուրը, այդ պատճառով դիմակները պատրաստում են երկուսի խառնուրդից:

Ցանափոշիների մեջ կարելի է ավելացնել հետևյալ դեղորայքները՝

1. Ստրեպտոցիդ
2. Նորսուլֆազոլ
3. Սուլֆադիմիզին

Ցանափոշին թողնում է հակաբորբոքային ազդեցություն՝ քսերոֆորմ (5-10%), բորաթթու (2-5%), դեզինֆեկցող ազդեցություն՝ մենթոլ (0,5-2%), անեսթեզին (5-10%), հակաբորբային ազդեցություն՝ սալիցիլաթթու(1-3%), ուրոտրոպին (10-20%), օգտագործում են ոտքերի խնամքի ժամանակ, վերացնում է ոտքերի հոտը, ճնշում է քրտնարտադրությունը:

Ցանափոշիների ազդեցության մեխանիզմը

Մա չորացնում, ճարպագերծում, կլանում է մաշկային քրտինքն ու ճարպը: Տարածվելով մաշկի վրա մեծացնում է մաշկի մակերեսը, ջերմարտադրությունը և որպես հետևանք տեղի է ունենում անոթների նեղացում, մաշկի սառեցում, այսինքն՝ ունի հակաբորբոքային,

քորը հանգստացնող ազդեցություն, պաշտպանում է մաշկը արտաքին ազդակներից: Պետք է օգտագործել օրը 1-2 անգամ շատ բարակ շերտով: Ցուցված է մակերեսային սուր բորբոքային պրոցեսների ժամանակ, երբ չկա խոնավ մակերես, այտուցներ, սակայն կա քորի, այտուցի զգացողություններ հատկապես ծալքերի շրջանում:

Հակացուցումներ - թաց մակերեսով բորբոքային պրոցեսները (քանի որ ցանափոշին կխառնվի արտադրության հետ և կվնասի մաշկը), մաշկի քրոնիկ հին բորբոքումները, որոնք ուղեկցվում են մաշկի չորությամբ և թեփոսվածությամբ, թարախաբշտիկային հիվանդությունները (երբ կա թարախահոսություն) թաց մակերեսով ծալքերի շրջաններում: Նշենք, որ օսլաները իրենցից ներկայացնում են պոլիսախարիդներ և կարող են նպաստել մանրէների և սնկերի աճին, ինչպես նաև կլանելով քրտինքը՝ կարող են փակել մազարմատները և առաջացնել թարախաբշտիկային ցանավորում՝ գուգահեռ զրգռելով մաշկը: Օրգանական ցանափոշիները ավելի լավ է կիրառել այն հատվածներում, որտեղ չկա թաց մակերես:

Մածուկներ

Լատիներենից pasta - խմոր - սա հավասար քանակություններով ճարպային հիմքի և փոշիանման նյութերի խառնուրդ է, որը արտաքնապես հիշեցնում է խմոր, քիչ ճարպոտ է, իսկ փոշիները մածուկին տալիս են

կամրավուն տեսք: Մածուկները ավելի երկար և խորն են ազդում մաշկի վրա, խորը թափանցելու համար մածուկին ավելացնում են լանոլին: Մածուկների մեջ նաև կարող են օգտագործել դեղորայքներ- 1-5% ստրեպտոցիդ, 1-5% սուլֆադիազոլ, 2-10% ծծումբ, 1% մենթոլ: Մածուկները կարող են լինել շատ չոր և համեմատաբար փափուկ: Դրանք տարածում են մաշկի վրա օրը 1-2 անգամ, դրանք ցուցված են ենթասուրբորբոքումների ժամանակ, եթե չկա թաց մակերես, ապա նաև քրոնիկ բորբոքային դերմատոզների ժամանակ: Կարելի է նաև մշակել ծալքերի և խոցերի շուրջ: Հակացուցված է սուր բորբոքումների ժամանակ մաշկի այն հատվածներում, որտեղ կա արտահայտված մազաձածկույթ, քանի որ դժվարացած կլինի մածուկի հեռացումը և կարող է լրացուցիչ բորբոքման պատճառ դառնալ:

Քսադեղեր (мазь)

Մաշկային հիվանդությունների ժամանակ օգտագործվող դեղն է, որի հիմնական մասը ճարպերն են: Շատ կարևոր է քսադեղերի օգտագործման ժամկետը: Քսադեղերը պատրաստվում են բուսական և կենդանական ճարպերից, փոշիանման նյութերը կամ բացակայում են, կամ էլ կազմում են քսադեղի քիչ մասը: Հիմնականում օգտագործում են վազելինից, լանոլինից պատրաստված քսադեղերը:

Ցուցումներն են - մաշկի քրոնիկ բորբոքումները, հատկապես եթե կա չորություն, թեփոտություն: Քսադեղերը նաև նպաստում են հին պրոցեսների ներծծվելուն, օգտագործվում են որպես հակապարա-զիտային միջոց, վերացնում են բորբոքումները, կիրառվում են նաև կեղևները փափկեցնելու նպատակով: **Հակացուվցած** է մազակալման, թարախա-բշտիկային ցանավորման և մի շարք թարախային հիվանդությունների ժամանակ:

ԹԵՄԱ XXXIV

Թուրմեր. Ուստրաստման տեխնիկա

Թուրմեր – ֆիտոթերապիա /դա բժկության մեջ մի մեծ բաժին է, որը նշանակում է բուժում բույսերի միջոցով, հուն. – fito – բույս, terapia – բուժում/: Արդեն երկար տարիներ այս գիտությունը կիրառվում է տարբեր խնդիրների բուժման նպատակով: Բուժական և կոսմետիկ նպատակներով օգտագործում են բույսերի հյութը, թուրմը, դեղաթուրմը, եփուկը, թրմօղին /настойка/:

Թուրմը կամ դեղաթուրմը պատրաստվում է սառը կամ տաք ձևով: Սառը պատրաստելու համար օգտագործում են եռացրած սառեցրած ջուր, թողնելով 6-ից-8 ժամ և հետո ֆիլտրում: Տաք թուրմը պատրաստելու համար

օգտագործում են եռման ջուր, թողնելով 20-ից-30 րոպե, որից հետո սառեցնում և ֆիլտրում ենք:

Թուրմի պատրաստման տեխնոլոգիան բարդ բան չէ: Դրա համար նախապես հումքը մանրացվում է (անհրաժեշտության դեպքում) ու լցվում լայն բերանով հերմետիկ փակվող տարայի մեջ: Դրանից հետո վրան ավելացվում է անհրաժեշտ քանակությամբ ջուր /տաք կամ սառը/, սպիրտ կամ որակյալ թորած օղի:



Եփուկներ – օգտագործում են խոտաբույսի արմատ, ծառի կեղև, չոր խոտ, ավելացնելով եռացրած ջուր և եփելով ցածր կրակի վրա 20-ից-30 րոպե:



Թրսօղի – պատրաստում են սպիրտի կամ օղու հիմքի վրա: Բույսի վրա ավելացնում են 40-ից-96% սպիրտ, թողնելով 2-ից-3 շաբաթ մութ միջավայրում, ժամանակ առ ժամանակ թափահարում:

Խոտերից պատրաստված ցանկացած միջոցները բազմազան են օգտագործման մեջ: Դրանք կարող են օգտագործվել ինչպես բուժիչ, այնպես էլ կոսմետիկ նպատակներով՝ կոմպրեսներ, թրջոցներ, լոսյոններ և այլն:

Թրջոցներ

Օգտագործում են սուր բորբոքային պրոցեսների ժամանակ, երբ կա արտահայտված հիպերեմիա, այտուց, թաց մակերես, հատկապես՝ էրոզիաներ: Թրջոցները կարելի է օգտագործել սուր էկզեմաների, ալերգիկ դերմատոզների, սուր մաշկաբորբերի ժամանակ: Թրջոցի հակաբորբոքային և սառեցնող ազդեցությունը 1-2 րոպեից հանգստացնում է բորբոքային օջախը:



Կախված նպատակից օգտագործում են տարբեր տիպի բուժական միջոցներ, որոնք օժտված են հակաբորբոքային, դաբադող, մանրէասպան հատկություններով: Բորաթթվի 2-3% լուծույթը օգտագործվում է որպես հակաբորբոքային միջոց, իսկ չերեդայի սառը թրջոցը ունի հանգստացնող հատկություն: Թարախաբշտիկային սուր բորբոքումների ժամանակ օգտագործում են հետևյալ միջոցները – հեքսիլոկ (0.02-0.05%), ռեզորցին (1-2%), ֆուռացիլին (0.05%), որոնք ունեն հակաբորբոքային և չորացնող հատկություն: Կարելի է նաև օգտագործել թեյից, հազարաթերթիկից, շալֆեյից, նոան կեղևից, գվերաբոյից պատրաստված սառը թրջոցներ: Թրջոցներ կատարելու համաջ լուծույթի քիչ քանակությունը լցնում են տարախ մեջ, թանձիքը ծալում են 4-6 տակ՝ համապատասխան մշակվող հատվածին, թրջում են լուծույթի մեջ, քամում են և ծածկում մշակվող հատվածը, պահում են մինչև սառնության զգացում: Թրջոցները պետք է կատարել 15-20 րոպեյվա ընթացքում: Ցուցված է սուր բորբոքային պրոցեսների ժամանակ:

Թրջոցների արդյունքում ուժեղանում է ջերմափոխանակությունը, մաշկը սառում է, նեղանում են անոթները, քչանում է թաց մակերեսի արտադրուկը, իջնում է այտուցը, նվազում է հիպերեմիան, անցնում են այտուցի և քորի զգացումները: Օգտագործում են բոլոր տիպի սուր մաշկաբորբերի ժամանակ: Հակացուցված է

չոր, թեփոտվող մաշկի համար, եթե կան զուգակցող բորբոքային պրոցեսներ, թոքերի, երիկամների բորբոքային պրոցեսներ, բրոնխիտ, նաև պետք է զգույշ կիրառել երեխաների, հատկապես նորածինների խնամքի ժամանակ:

Կոմպրեսներ

Կոմպրեսը - բուժիչ բազմաշերտանի վիրակապ է: Կոմպրեսները լինում են սառը և տաքացնող:



Տաքացնող կոմպրես - առաջացնում է մաշկային և խորը տեղադրված արյան անոթների երկարատև լայնացում, ինչի հետևանքով կատարվում է արյան հոսք դեպի տվյալ հատվածը, բորբոքված օջախի ներծծում և ցավի պակասում: Տաքացնող կոմպրեսը կարելի է դնել ցանկացած առողջ մաշկի հատվածին:

Տարացնող կոմպրեսը կազմված է **3 շերտից**.

1. Մաքուր, խիտ, բայց փափուկ և լավ ջուր ներծծվող որակի կտոր, թանգիվ, թրջված և լավ քամած սենյակային ջերմաստիճանի հեղուկի մեջ:

2. Մովլաթ – клеенка

3. Բամբակ

Ամեն մի հաջորդող շերտը պետք է լինի նախորդից 2 սմ լայն, որպեսզի խոնավությունը չգուրռշիանա: Կոմպրեսը դրվում է նուրբ մարմնի հատվածին ամուր կպած, դնելուց հետո կոմպրեսը փաթաթում են բինտով: Վերջում կարելի է կապել տաք, բրդյա շարֆով:

Կոմպրեսի օգտագործման ժմկետն է 6-ից - 8 ժամ, բայց 12 ժամից ոչ ավել: Կոմպրեսները փոխում են առավոտյան և երեկոյան: Որպեսզի մաշկը չգրգռվի, կոմպրեսը փոխելու ժամանակ մաշկը մաքրում են գոլ ջրով և չորացնում են գոլ և փափուկ սրբիչով, կատարելով ընդմիջում 2 ժամ: Նոր կոմպրեսը դնելու համար վերցնում են մաքուր կտոր: Կոմպրեսների համար օգտագործում են գոլ ջուր և քացախի թեթև լուծույթ – 1 գթ. 0,5լջ.- կամ օղի, սպիրտ, լուծված ջրի մեջ:

Եթե մաշկը ցանավորվում է, անհրաժեշտ է քսել ցանափոշի կամ տալկ: Եթե հիվանդը զգում է դող, սարսուր, ապա կոմպրեսը սխալ է դրված; անհրաժեշտ է հանել և դնել կրկին: Եթե մոմլաթը կամ բամբակը,

Թանգիվը լավ չեն ծածկում կամ կոմպրեսը լավ չի կապած, ապա իրանց և մաշկի միջև անցնում է օդ. ջուրը շուտ գոլորշիանում է, առաջացնելով ոչ թե մաշկի տաքացում, այլ սառեցում: Որպեսզի նման բան չառաջանա, պետք է պահպանել բոլոր կանոնները:

Սպիրտային կոմպրեսները շատ շուտ գոլորշիանում և չորանում են, այդ պատճառով նման կոմպրեսները հաճախ են փոխում: Սպիրտային կոմպրեսները շատ չեն օգտագործում, քանի որ մաշկի գրգռվում է:

Սառը կոմպրեսներ - դրվում է վնասվածքների, արյունահոսությունների դեպքում: Առաջացնում են տեղային սառեցում և արյան անոթների նեղացում, պակասեցնում են ցավը: Սառը կոմպրեսի համար օգտագործում են թանգիվի կամ կտավի կտոր, ծալելով մի քանի շերտով, թրջում են սառը ջրով, քամում և դնում անհրաժեշտ հատվածի վրա 2-3 բուպեյով, մինչև կոմպրեսի տաքանալը:

ԹԵՄԱ XXXV

Օձանաջրեր

Ժամանակակից կոսմետոլոգիան հաճախակի իր մեջ ներառում է ավանդական և ոչ ավանդական բուժման մեթոդներ: Հաճախակի մենք ընտրում ենք այս կամ այն կոսմետիկ միջոցը, որի հիմնական ցուցանիշներից մեկը

ոչ միայն արտաքին տեսքը, գույնը, կոնսիստենցիան է այլ նաև այդ միջոցի հոտը, բույրը: Հաճախակի հոտը և բույրը օգտագործում են նաև արոմոթերապիայի մեջ, այսինքն փորձում են հոտի միջոցով ազդել բուժման վրա:

Դեռ հին Հունաստանում, Հին Հռոմում, Եգիպտացիները չէին բաժանվում հոտավետ նյութերից իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Նշենք ավելին, որ խոտերից ստացող հոտավետ նյութերի պատրաստման ձևերը այնքան են զարգացել, որ չեն փոփոխվել դարեր շարունակ: Բուժական խոտերի ազդեցությունը ստուգվել է դարերով, սակայն ժամանակակից հոտերից փորձում են օգտագործել միայն այն նյութերը, որոնք օգտակար են և նպատակային: Կան հոտավետ նյութեր, որոնք տոնուսավորում և տաքացնում են:

Ժամանակակից կոսմետիկ միջոցների մեջ հաճախակի են օգտագործում հոտավետ նյութեր, դրանց թվին են պատկանում օծանաչրերը: Օծանաչրերի մեջ կա քիչ քանակությամբ սպիրտ, նյութեր, որոնք պահպանում են և չեն թողնում, որ միջոցը փչանա (консерванты): Այս կամ այն հոտավետ նյութերն հաճախակի մի քանի հոտերի խառնուրդներ են, որոնք օրվա ընթացքում կարող են փոխվել:

Օծանաչրերի օգտագործումը շատ անհատական է, ամեն մեկը ընտրում է իրեն բնորոշ, իրեն համապատասխան և հարմար բույրը: Խորհուրդ չի

տրվում օգտագործել հագուստի վրա, քանի որ օծանաջրերի մեջ հոտավետ նյութերը պարունակում են նաև յուղեր, որոնք կարող են հետքեր թողնել հագուստի վրա: Ցանկացած հոտավետ նյութի քանակ պետք է լինի սահմանափակ, քանի որ կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ (մաշկաբորբ, ալերգիկ ռինիտ, ինչպես նաև անհատական անտանելիություն:

Շատ շոգ եղանակին խորհուրդ չի տրվում օգտագործել օծանաջրերը: Չի կարելի օգտագործել արևային լոգանքի ժամանակ, քանի որ այդ արոմատիկ կոմպոզիցիաները կարող են մաշկի զգայունությունը կտրուկ փոխել և առաջացնել այրվածք կամ ալերգիկ ռեակցիաներ: Նաև նշենք, որ նրանք չեն քչացնում քրտնարտադրությունը:

ԹԵՄԱ XXXVI

Կոսմետիկ միջոցների պիտանելիության ժամկետները

Ժամանակի ընթացքում կոսմետիկ արտադրանքի հատկությունները կարող են փոխվել միկրոօրգանիզմների, օքսիդացման, ուլտրամանուշակագույն ճառագայթման, բաղադրիչների միջև քիմիական փոխազդեցության ազդեցության տակ:

Պահպանման ժամկետը սկսվում է արտադրանքի արտադրական գործընթացի ավարտից հետո և ավարտվում է կրիտիկական ամսաթվով, որից հետո

արտադրանքի հատկությունները անցնում են անդառնալի փոփոխությունների:

Պահպանման ժամկետը այն ժամանակահատվածն է, երբ արտադրանքը պահպանում է իր հատկությունները:

Մրանք հետևյալ պարամետրերն են.

- օրգանոլեպտիկ հատկություններ;
- ֆիզիկաքիմիական հատկություններ;
- տարբեր կենսաբանական նյութերի թույլատրելի պարունակություն.
- սննդային արժեք;
- վտանգավոր միկրոօրգանիզմների առավելագույն թույլատրելի պարունակությունը.
- համապատասխանությունը դրա գործառնական նպատակին:

Պահպանման ժամկետը ուղղակիորեն կապված է ապրանքների պահեստավորման պայմանների հետ: Այսպիսով, ժամկետի ավարտը չի սկսվում այն պահից, երբ արտադրանքը հայտնվեց դարակներում: Այն ներառում է ինչպես արտադրանքի պահեստում պահելու պահը, այնպես էլ դրա տեղափոխման ժամանակը մինչև վաճառքի կետը և պահեստում գտնվելու ժամանակահատվածը:

Ի՞նչն է որոշում կոսմետիկայի պահպանման ժամկետը

Առաջին հերթին, հարկ է նշել, որ դա ուղղակիորեն կախված է դրա կազմից և տեսակից: Օրինակ՝ ակոհոլ պարունակող օժանելիքները չեն կարող պահվել ավելի քան 5 տարի: Մաշկի համար նախատեսված արտադրանքի պահպանման ժամկետը չպետք է գերազանցի երեքը, իսկ արևապաշտպանները՝ երկու տարի:



Դեմքի քսուք - Դեմքի քսուքների ժամկետները լրանում են բացելուց հիմնականում 6 ամիս անց: Իսկ փակ վիճակում նրանք պիտանի են մինչև 3 տարի:



Շրթներկ - Ժամանակի ընթացքում շրթներկի բաղադրությունը փոխվում է: Բուսական յուղերը փչանում են, հեղուկը պնդանում է, փայլը՝ անհետանում: Հին շրթներկը հնարավոր է նույնիսկ

գրգռի շրթունքները: Շրթներիկ պիտանելիության ժամկետը 2-ից - 3 տարի է:

Սևաներկ - Օդում շփվելիս սևաներկը պնդանում է և չորանում: Սևաներկի ժամկետները ձգվում են 6-12 ամիս:

Մազերի լաք - Մազերի լաքն ամենաերկար պահպանվող կոսմետիկ միջոցն է: Որակյալ լաքը կարող է ծառայել մինչև 5 տարի:

Մատիտ - Մատիտը ատամի խոզանակի պես շատ անհատական իր է: Շուրթերի, աչքերի և հոնքերի մատիտների պիտանելիության ժամկետը մինչև 6 ամիս է:

Օծանելիք – Օծանելիքի համար շատ վտանգավոր է արևը և լույսը: Որակի փոփոխության նշաններն են, երբ օծանելիքը պղտորվում է, փոխում է գույնը և հոտը: Եթե կոսմետիկ միջոցները պիտանելի չեն օգտագործման համար, ապա հարկավոր է պարզապես նետել դրանք, քանի որ օգտագործելու դեպքում կարելի է ստանալ մաշկաբորբ, գրգռվածություն, ալերգիկ ռեակցիաներ, այսինքն վտանգը ավելի շատ է քան օգուտը:

ԹԵՄԱ XXXVII

Կոսմետիկ միջոցների որակը գնահատելու ցուցանիշները ըստ ժամկետի

Ցանկացած կոսմետիկ միջոց իր վրա ունի նշված պիտանելիության ժամկետ, որը ցանկալի է չխախտել, որովհետև անգամ եթե արտաքին տեսքը փոխված չի լինում, կարող է փոխված լինել նյութի որակը: Բացի ժամկետի պահպանումը, շատ կարևոր է նաև, թե ինչ պայմաններում է պահպանվել միջոցը: Կարող է լինել նոր բացված կոսմետիկ միջոց, որը օգտագործվել է 1-2 անգամ, սակայն նկատվում է ծանր հոտ, տեսքի փոփոխություն, ինչը նշանակում է, որ ճիշտ չի պահպանվել այդ միջոցը:

Հիմնական կոսմետիկ միջոցների պահպանված ժամկետը տատանվում է 15-30 ամիս: Այդ ժամկետի ընթացքում միջոցը պետք է պահպանի իրեն բնորոշ բոլոր հատկությունները: Նշենք, որ այս ցուցանիշը հիմնականում վերաբերվում է փակ միջոցներին: Եթե կոսմետիկ միջոցը բացվել է և օգտագործվել, ապա նրա խնամքը մասամբ կախված է մեր խնամքից: Եթե կոսմետիկ միջոցը ունի շփում օդի, մաշկի հետ, ապա այն ախտահարված է մանրէներով և որակային ցուցանիշները կտրուկ փոխվում են:

Գնումը կատարելուց առաջ շատ կարևոր է ստուգել տվյալ միջոցի փաթեթավորումը, որտեղ պետք է նշված լինի արտադրողի հասցեն, միջոցը պետք է ունենա շտրիխ կոդ, վրան պետք է նշված լինի բաղադրությունը, արտադրության նիշը և ժամկետը, կարևոր է նայել ընդհանուր փաթեթավորմանը: Ցանկալի է, որ միջոցը փաթեթավորված լինի ցելոֆանով: Այս ցուցանիշներից բոլոր շեղումները կարող են դառնալ անհանգստության պատճառ: Շատ կարևոր է կոսմետիկ միջոցի որակը: Կոսմետիկ միջոցը ցանկալի է, որ լինի միագույն, համասեռ, ունենա նուրբ, հաճելի հոտ, կամ ընդհանրապես լինի անհոտ, ունենա մաժուցիկություն: Եթե, օրինակ, քսուկը շերտավորվում է, շպարը հեռացնող նյութը տհաճ հոտ ունի և այլն, անհանգստանալու առիթ է լինում: Այդ դեպքում նախընտրելի է չօգտագործել այդ միջոցը:

Շատ կարևոր է նաև, թե ինչ պայմաններում են պահվում կոսմետիկ պատրաստուկները: Նշենք, որ արդեն բացված միջոցները ցանկալի է օգտագործել 6 ամսվա ընթացքում, եթե չկա լրացուցիչ ցուցում: Մնուցող, խոնավեցնող քսուկները, քսուկանման դիմակները ցանկալի է պահել սառնարանում՝ ամբողջ օգտագործման ժամկետի ընթացքում /քսուկի որակը պահպանելու համար/:

Ցանկալի չէ քսուկները օգտագործել ձեռքերով, այլ ունենալ շպատել և սրվակից վերցնել քսուկի այն քանակությունը, որը հարկավոր է դեմքը մշակելու

համար, որից հետո անհրաժեշտ է սրվակը փակել: Քսուկների որակը կտրուկ փոփոխվում է, եթե նրանք պահպանվում են տաք սենյակում, արևի ճառագայթների տակ, խոնավ պայմաններում, օգտագործվում են անփույթ, երկարատև շփվում են օդի հետ և այլն: Քսուկի անորակության մասին խոսում է նրա շերտավորումը, երբ ճարպը բաժանվում է ջրից և հատկապես, եթե առաջանում է ծանր և տհաճ հոտ:

Բովանդակություն

Նախաբան	3
Նյութագիտություն և տեխնոլոգիական կահավորում	
ԹԵՄԱ I Նյութագիտություն	5
ԹԵՄԱ II Դիմահարդարի սենյակ, նորմերը	7
ԹԵՄԱ III Աշխատանքային գործիքների մանրէագերծում.....	10
ԹԵՄԱ IV Ախտահանում եւ մանրէագերծում Ասեպտիկա եւ անտիսեպտիկա.....	12
ԹԵՄԱ V Ճարպեր.....	19
ԹԵՄԱ VI Բուսական յուղեր	22
ԹԵՄԱ VII Հանքային ճարպային հիմքեր.....	25
ԹԵՄԱ VIII Ֆերմենտներ	32
ԹԵՄԱ IX Մակերեւույթային ակտիվ նյութեր.....	35
ԹԵՄԱ X Կենսաբանորեն ակտիվ նյութեր.....	41
ԹԵՄԱ XI Հակաօքսիդանտեր.....	47
ԹԵՄԱ XII Միկրոէլեմենտներ և մակրոէլեմենտներ	57
ԹԵՄԱ XIII Կավի օգտագործումը դիմահարդարման մեջ.....	62

ԹԵՄԱ XIV Բնական եւ արհեստական	
Ներկանյութեր.....	68
ԹԵՄԱ XV Պելոիդոթերապիա	
(Ցեխաբուժություն).....	76
ԹԵՄԱ XVI Կոսմետիկ միջոցներում հաճախ	
օգտագործվող դեղանյութեր.....	84
ԹԵՄԱ XVII Թալասոթերապիա	
(Աղաբուժություն).....	90
Կոսմետիկ Պատրաստուկներ	
ԹԵՄԱ XVIII Կոսմետիկ պատրաստուկների	
դասակարգումը.....	95
ԹԵՄԱ XIX Մաշկի խնամք.....	98
ԹԵՄԱ XX Մաքրող միջոցներ.....	106
ԹԵՄԱ XXI Պիլինգ որպես լրացուցիչ մաքրող	
միջոց.....	109
ԹԵՄԱ XXII Քերուկ քսուկ /Սկրաբ/.....	113
ԹԵՄԱ XXIII Քսուկների դասակարգումը.....	115
ԹԵՄԱ XXIV Քսուկների պատրաստման	
կանոնները.....	119
ԹԵՄԱ XXV Սնուցող միջոցներ.....	121
ԹԵՄԱ XXVI Խոնավեցնող միջոցներ.....	123

ԹԵՄԱ XXVII Պաշտպանիչ միջոցներ.....	126
ԹԵՄԱ XXVIII Դիմակներ. Դիմակների դասակարգումը.....	133
ԹԵՄԱ XXIX Դիմակների դասակարգումը ըստ արտաքին տեսքի.....	137
ԹԵՄԱ XXX Դիմակների տեսակները.....	139
ԹԵՄԱ XXXI Մաշկի ծերացում եւ կնճիռների առաջացման տեսակները.....	145
ԹԵՄԱ XXXII Հարակնային շրջանի պարկերի առաջացումը.....	152
ԹԵՄԱ XXXIII Մաշկային տարբեր հիվանդությունների ժամանակ օգտագործվող դեղորայքային նյութեր.....	155
ԹԵՄԱ XXXIV Թուրմեր. Պատրաստման տեխնիկա.....	161
ԹԵՄԱ XXXV Օծանաչեր.....	167
ԹԵՄԱ XXXVI Կոսմետիկ միջոցների պիտանելիության ժամկետները.....	169
ԹԵՄԱ XXXVII Կոսմետիկ միջոցների որակը գնահատելու ցուցանիշները ըստ ժամկետի.....	173

Չափսը 64x84 1/16. Թուղթը կավճապատ:
Ծավալը 180 էջ: Տպաքանակը 300օր.

Տպագրված է «Լեգալ Պլյուս» տպագրատանը
հասցեն ք. Երևան, Հ. Հակոբյան 3
Հեռ. (+374 91) 23 11 09